“**Թ**ու սըշափ վտանգաւոր է այն բան ոմանց աշակերտիւնոց նոր միսիոնարաց , որք ասեն թէ չէ սպարտ ասել զքրիստոսէ . ած խաչեցաւ , կամ ած մեռաւ : ’ի պատճառս չերգելոյ ոմանք զսուքը ածն խաչեցարիւ . Հնարեցաւ յարևելս ’ի մէջ Աթոլիկ կոչեցեալ ժողովրդեան . վարդապետութիւնն այսպիսի . որ Ահստորական աղանդոյէ համանման : Քանզի կարծելու այսպիսեաց , թէ մոլորական է ասել զոյք ածն խաչեցարիւ , մոլորական համարեցան և չասելն զՔրիստոսէ , ած խաչեցաւ , ած մեռաւ ետյլն :

Եւ յանցանել փոքր մի ժամանակի՝ այնչափ յամառեցան բազումք յայս կարծիս , և այժմ իսկ այնչափ յամառեալ . մինչ զի ոչ միայն չասեն , այլ և որք ասենն զհետ պն-

Դին մատնել զնոսա յատեան այլաղգեաց , որպէս և արարին բազումք ընդդէմ հայոց , ամբաստան լինելով զնոցանէ , թէ ուքա ած խաչեցաւ ասեն , ած մեռաւ ասեն ևայլն :

Ահա ոյս կարծիք սոցա վիկայութեամբ ածաբանից նոյնանայ ընդ վարդապետութեան նեստորի , վասն զի այսպիսի օրինակաւ վարդապետէր ժանան նեստոր , որովհետեւ ածութիւն ասեր ոչ կարէ ժնանիլ 'ի մօրէ , ոչ կարէ ածիլ և մնանիլ , չորչարիլ խաչիլ և մեռանիլ , ոչ ես լինի ասէր նեստոր , ած ժնաւ 'ի կուսէ . . . ած խաչեցաւ , ած մեռաւ , ոյն միայն ալարտէ ասեր , «Քը թատոս ժնաւ 'ի կուսէ ևայլն :

Եւ արդ դու տես զողբալին , զի դտանին ոմանք 'ի տգիտաց , որք եթէ լսիցեն զայսպիսի վարդապետութիւն նեստորի , ոչ Համարին մոլորութի , զի ինքեանք այսպիս ասեն , և 'ի միաս իւրեանց այսպիս իմանան , միայն զսք լիոյն ածածին խոստովանին , ոչ զի ոյնպիս ճանաչեն , ոք ժնող այ , այլ զի ոյնպիս ասել սովորեալ են 'ի մանկութենէ , **Ե**ւ սորա ապացոյց այն է , զի յորժամ ասիցես առ այսպիսիս , թէ նոյնչափ ճշմարիտ է ասել . ասելն ած ժնաւ 'ի կուսէ , ած սնաւ կաթամբ , չարչարեցաւ ևայլն :

Եւ ուստի եղե արդեօք սոցա յայդպիսի աւաղելի վեճակ անկանել , ոչ այլուստ բայց եթէ զի այսպիս ուստուցին և ուստուցանեն փաթերայք ոք լատին միսիոնարք , քանզի սոքա են որք յոյտնի քարոզին 'ի տունս սլարդամտաց , թէ ոչ լինի ասել զքրիստոնէ ած չարչարեցաւ կամ խաչեցաւ ևայլն :

Ահա ոյսպիսիք ոմանք դտանին ?ի լատին միսիոնարս , և այսպիսի աշակեշտք նոցա . և զայս չկարօտիմք բազմօք ցուցանել , զի քաջ դիտին յոլովք զոր ինչ դործեցան յայսմ դարու զայսու նիւթով , մինչև ժողով իսկ ոմանք տդէտ միսիոնարաց հանդերձ եպիսկոպոսօք , և յանդիմանել զերկիւղած հայ միսիոնարաս : թէ ընդէլլու ուստուցանեք դուք ժողովրդեան , թէ յուղիղ միտս ասի , ած խաչեցաւ , ած մեռաւ ևայլն :

Պատճառն յանդիմանելոյ զինչ , սլարտէ ասեն զդու-

շացունել զպարզամիտ ժողովուրդն , յայսպիսի նախադասութեանց խաչեցաւ , մեռաւ :

Աեստոր ևս այսպիսի սուտ զգուշութիւն ցուցանեւը երաց այսու դուռն կորսակեան ոգւոց անմեղաց , որպէս յայտնի տեսանի 'ի գրուածս նորա :

ԱՅԼ արդ ոչ էր արժան միսիոնարաց այսպէս վարդապետել , այլ պարտէր զբանն բացատրել , թէ յի՞նչ միտսասի և մեկնել , որովհետեւ անձն Քրիստոսի մի է . որ է նոյն ինքն բանն ած . ունող զկատարեալ ածութիւն և զկատարեալ մարդկութիւն , զոր ինչ և կը էր նա ինքն քո , ած և մարդի տնօրէնութիւն և ՚ի չարչարանս , մի և նոյն անձին ընծայի . . . զի հիմն հաւատոյէ , թէ նոյն ինքն բանն ած էր որ խաչեցաւ և մեռաւ , ոչ ըստ ածային ընութեան , այլ ըստ մարդկային . . .

Եւ արդ որպէս ասի ած խաչեալ և մեռեալ մարմնով , կամ մարդկային ընութիւն , նովին մտօք ևս ասի առանց բացատրութե , ած խաչեալ և մեռեալ : Քանզի յասէն այսպէս , ինքնին իսկ իմացեալ լինի թէ մարմնացեալն ած մեռաւ , այսինքն որդին որ է քրիստոս զի մը խելադարեալ կարէ ասել թէ իսկապէս թէ նոյն ինքն ածութիւն մեռաւ :

Եթէ ՚ի միտս այլոց անկերալ իցէ այսպիսի ցնորաբանութիւն , ընդ միտս Հայոց ընաւ չէ անցեալ : Որոյ վասն իսկ չկարեն Հայք չդայթակղիլ ՚ի վերայ ոմանց միսիոնարաց հանդերձ աշակերտօքն նոցին , թէ դոքա արդ իմաստուն գոլով զի՞ արդ ոչ իմանան , թէ զի՞նչ իցէ ասել , ած խաչեցաւ , ած մեռաւ :

Ուրեմն ասեն կամամենենեն տղետ են դոքա այսպիսի կարեռ իրաց . որ հիմն են Քրիստոնէական դաւանութեան Կաթողիկէ Եկեղեցոյ . . .

Եթէ գիտէին պարտական էին և այլոց զուղիյն ծանուցանել , և եթէ հաւատային , պարտական էին չդայթակղիլ և չդայթակղեցուցանել ” :

Յետ բանեցաւ այսոցիկ Յուդոյի նմանեցուցանէ զնոսա , որք ոչ ասեն՝ ասուած խաչեցաւ , զի՞ որպէս նա ասելով մատնեցի զարիւն արդար և ոչ աստուծոյ

անկու ՚ի յուսահատութիւն և կորեաւ : այսպէս որք ոչ ասե՞ն աստուած խաչեցար , անյօյս են ՚ի փրկութե՞նէ :

Վասն այսորիկ ասէ , սնոտի է երկնչիլ , և վասն խուսելոյ յաստուած - աշարշար աղանդոյ՝ ոչ ասել աստուած խաչեցաւ , որով և անկանի զաւաղելի անկումն ՚ի վեհ նեստորի , ՚ի վախճանի ասէ :

“**Ա**պա եթե ոք այդպիսի օնոտի պատրուակաւ երկնչիցի և զգուշացի չասել , թէ վասն սիրոյ իմոյ ած չարչարեցաւ և ՚ի խաչին մեռաւ , յայտ է թէ այնպիսին ոչ կարէ ՚ի որ տին իւրում ունիլ զնշմարիտ եռանդն և բորբոք առ ած փրկիչն իւր , այլ հայի առ նա իբրև անորոշ փրկիչ ոք , մանաւանդ իբրև առ մարդ ոք բաժանեալ յածութե՞նէ , և բարոյապէս և եթ միացեալ ըստ շարին նեստորի կարծեաց : վասն զի այսչափ միայն դիտէ . զի այն խաչեալն է և ասի քրիստոս : ուստի և քրիստոս խաչեցաւ , քրիստոս մեռաւ ասէ : **Ե**ւ զի ևս եդեալ է ՚ի մտի ըստ թելադրութեն տղիտաց , ած խաչեցաւ , ած մեռաւ , այսու իսկ հարկի անորոշ և մթին իմն օրինակաւ հայել առ խաչելեալն իբրև առ մարդ ոք , որով ոչ միայն թեթև ինչ վարկանի զերախտիս փրկութեն մերոյ , այլ և զլորի յաղանդ մարդագաւանից և նեստորականաց :

Եւ տրդ որպէս փորձիւ տեսանեմք յարդի ժամանակիս , յորմէ հետէ տեղի գտին ոմանք ՚ի տղէտ քարոզչաց , սկսեալ ՚ի Ալէմէս Գալանոսէ և այսր , մտեալ ՚ի մէջ կտժոլիկ ժողովրդեան այսպիսի պատրանք մոլորութեան , ոչ ասեմ առ ամենեսեան , այլ և ոչ առ սակաւո :

Եւ եթէ խելամուտ կամիցիս առնել զնոսա զի մի ՚ի պատճառո խորշելոյ ՚ի չար աղանդոյ ածաշարշարից , պաշարեցի ՚ի ներհական աղանդ մարդաչարչարից այսինքն նեստորականաց , ոչ կամին ունկնդիր լինել : **Ա**յսք այսպիսի զաղանութի ոչ դիտեմք ասեն :

Եւ բարեպաշաքն ՚ի նոսայաւելուն ասել մեք այսչափ ինչ դիտեմք , զի ոչ է ասելի ած խաչեալ . այլ ինչ ոչ կարեմք ասել , զոր ինչ հաւատայ եկեղեցի , հաւատամք և մեք զնայն :

Ո՞վ անհանարին դիմադրութեանս , և մի թէ եկեղեցին ժամանականի առն խաչեալ , և մի թէ եկեղեցին մարդ խաչեալ դաւանի , քաւ լիցի , զի մարդ խաչեալ ասելն ենթադրէ զանձն մարդկային , որ է մոլորութիւն նեստորի . Խսկ ած խաչեալ ասելն , ենթադրէ զանձն ածային , որ խաչեցաւ չալչարելի մարմնով , և այս է հաւատք Ավագողիկէ Եկեղեցւոյ , որ ՚ի սոյն միտս իմանայ և զասելն ՚Քրիստոս խաչեալ :

«Օ»անիւր և զայս , զի յայսպիսի գլխաւոր նիւթ հաւատոյ ճչ արդարացուցանէ զնոսա ասել անորաշակի , թէ մե ք զայն հաւատամք , զոր հաւատայ եկեղեցին , զայդ կարէին ասել ՚ի վերայ այլոց հաւատալեաց , զորոց խօսին ածաբանք , այլ ճչ ՚ի վերայ այսը հրաշափառ մարդեղութեան , որպէս և ճչ ՚ի վը խորհրդոյ Երբորդութե : Օ երկոսին զայսորիկ խորհուրդքս պարտի բացայայտ հաւատալ գոնէ ըստ իմացուածոյն , և ճչ թէ անորոշ :

Ոմին իրի բացարձակապէս խօսելով Հարկէ նոցա դիւտել ըստ վարդապետութե Ավագողիկէ հաւատոյ , զի զայն որ խաչեցաւ և մեռաւ , է ճշմարիտ ած , և ճչ սոսկ մարդ , կամ նոյն է ած խաչեալ ՚Քրիստոս

Կյալէս հաւատան ամ ճշմարիտ հաւատացեալքն ՚Քրիստոսի , ուստի և տարակուսիլն ՚ի վերայ այսը՝ է քանդել զհիմն սբ հաւատոյս մերոյ » :

Սմին նման խօսի և յերես 309, 310 վերջ տուեալ բանից իւրոց :



ԽՆԴԻՐ ՎԵցերորդ
Յաղագս աօնի ՇՕՆՆԴԵԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ :

“ՅՕՆ. Ա.”

“**Ա**յտաշաւել ազգաբարութիւն, թէ զի՞ արդ՝ ի զուր
են ամբաստանութիւնք՝ ի նիւթ Տեղեթլինայի, և թէ որպիսի
պատրուակաւ են յօդեալ:

() Ենք են այնոցիկ՝ որք բանակոիւ Լինին յոչինչ
պէտս՝ ի կործանումն լսողաց, զի յորժամ՝ ի զօրաւոր կարծե-
ցեալ փաստս իւրեանց վատթարեալ գտանին, բուռն հարկանեն
զևս պիտանագոյն պատճառաց, զորս թէպէտ և ինքեանք յում-
պէտս ճանաչեն, այլ բարձրագոչ աղաղակաւ ազգու ընծայել
նկութիւն:

Այն օրինակ անցք անցանեն և ընդ դատախազս ազգիս
Հայոց, ընդ Հակառակորդս մեր տսեմ, որոց տեսեալ թէ փշրին
գաւազան երկաթիք յերեսաց պնդակողմն Հաստատութեն ողջա-
միտ գաւանութեն Հայոց, թ՛ ի գերեւելանեն ծանր ծանր ամ-
բաստանութիւնք, և տիրապէտ ուղղափառ Հանդիսանոյ եկե-
ղեցի Հայաստանեաց ի բան վարդապետութեան հաւատոյ, զոր
լատինք Տոհմակոչ կոչեն, բուռն հարկանեն տպա զեղեգնեայ գա-
ւազանէ՝ որ դիւր փշրելին է, այսինքն է՝ զտարադէպ ամբաս-
տանութեանց ի բան ծիսի, և որք ի նոյն վերաբերին....

Այլ արդ թէպէտ ոմանք ՚ի չարախօսաց զամ կար-
գաւորութիւնս եկեղեցւոյն Հայոց պատարակել ախորժեն,
բայց բազումք զգուշանան, զի մի արդեօք և զայնպիսի իրս պա-
խարակեսցեն, զոր և ինքեանք հանգոյն Հայոց կատարեն, որով
և գտանիցին յաւէտ թշնամանիչք եկեղեցւոյն իւրեանց քան
Հայաստանեաց :

“Ա ի ինչ զարմասցին ընթերցողք եթէ փռքը մի երկարեալ տեսցեն զճառս մեր ’ի վը այսպիսի դուզնաքեայ ինդրոյ, այլ զարմասցին ընդ անպուրտելի նախանձայուղութիւն հակառակորդաց մերոց ՚ի վերայ այսոցիկ և այսպիսի իրաց, զի այնպիսի ոգւով խօսին յայս նիւթ, որպէս թէ չեցէ ինչ նոցափոյթ զհաւատոց՝ առ համեմատութեամբ ծիսից քան հաւատոց, որովհետեւ ՚ի զդալիս յաւէտ կապին քան յիմանալիս : Ամին իրի և հակառակորդք մեր զամ ճիզն իւրեանց թափեն ընդդէմ հայոց ’ի բան ծիսից քան հաւատոց, ոչ այնչափ գրով, որչափ գործով :

*Քանդի տեսանեմք զօր ամենայն փորձիւ, զի ումանք ’ի միտմիտ միսիոնարաց՝ ամոգւով ջանան, զի տացին արտաքին ծիսից խտիր տրկանել ընդ ուղղափառ, և ընդ այլս՝ ոչ ուղղափառ զոր կոչեն, թէ և գետասցեն ՚ի բան հաւատոյ մի օրինակ լինել զերկոսին կողմանս կատարեալ ուղղափառ :

Այս է խոտորնակ ճանապարհ և անել, զի որովհետեւ ամբոխն փոփոխութիւն համարի փոփոխութիւն ծիսից, ’ի տեսանել զայսպիսի գործ միսիոնարաց, ժանունութակլին, մինչեւ ոչ որոշել զբան ծիսից ’ի բանէ հաւատոյ, մի օրինակ կարեն մերժել կամ խղճի սլահել :

Ողբալի է արդարեւ այսպիսի սլաղաբերութիւն քրտնաշխատ մշակաց, որք հային յաւէտ դարմանել, զիստս և զտերես, քան դցորեանս և զպտուղս :

Զինի այսորիկ ցուցանէ թէ որպէս կատարէին առաջին Հայք զտօն Շնորհեաննե, և զի՞ արդ յետոյ փոխեցին զայն յոյնք և այլք, և Եր վասն հայք անփոփոխ սղաչեցին զհին աւանդն, և ապա ասէ :

ՅՕՒ՞Ն. Գ.

“Թու ոչ իւիք պարտաւորին հայք վախել զտօն ժնդեան, զոր կատարեն ըստ հին սովորութիւն արեելեան եկեղեցւոյն Բաւական էր հնութիւն այսը սովորութեան աղաւակացուցանել զհայս յամ պարտաւորութենէ փոփոխութեան :

մանաւանդ թէ պարտաւոր է օրինօք առ ՚ի չկարելոյ փոխել, զի սովորութիւն է տիրապէս օրէնք և թարգման օրինաց, որպէս աղաղակեն իրաւագէտք առ հասարակ նախ և առաջ յայտ է թէ չիք օրէնք բնական վասն այդպիսի բանի . . .

Երկրորդ յայտ է թէ չիք և Յագուակ օքէնտ եւ էւշեանկան, վասն տօնի ծննդեան օրէնք ինչ ածային դրական, զի ոչ ՚ի ո՛՛ գիրս և ոչ յածային աւանդութիւն գտանի երբէք, թէ յայն ինչ օր կատարեսցի տօն ծննդեան և մլրտութեան . . .

Երրորդ յայտ է թէ, չիք և յատուկ օրէնք եւ կեղեցական, որոշակի սահմանեալ յեկեղեցւոյ կամ' ի գլխոյն եկեղեցւոյ, առ ՚ի պարտաւորել զամենայն հաւատացեալս, զի յայս ինչ օր տօնեսցեն, և ոչ յայն, այլ միայն յորդորանք, որպէս յորդորեցին զհայս երբեմն քահանայապետք մի և երկու, և տեսեալ թէ ծանր խոռվութիւն ժադի ՚ի մէջ ազգին՝ լոեցին, որով և յայտ արարին թէ չիք ինչ օրէնք ճշտիւ պարտաւորիչ”։ Ի՞այց աչ լոեն բարենախանձ միսիոնարք, և որք ՚ի նոցին սակի են, ոմանք բանիւ բարբառին՝ ուրք ոչն իցեն յաջող գրութեան, և կէոք գրով խօսին, և առ հասարակ զայս ձայն հնչեն հանապաղ՝ ՚ի լոելիս հայոց, եթէ ոչ կատարէք զտօն ծննդեան ՚ի դեկտ, 25, այլ ՚ի յունիլ” 6, հերիտիկոս էք, հերձուածող էք, ՚ի խղճէ պարտաւորիք առ այս, և եթէ այլ ազգ առնէք, մահուչափ մեղանչէք :

Այս օրէնք յառաքելոց անոնի իջեալ է յընդհանուր եւ կեղեցին, ՚ի սկզբանէ հետէ այսպէս առնէին քրիստոնեայք և այլն :

Յաւելուն ոմանք թէ դուք հայք ևս այսպէս առէք յառաջն, յետոյ փոխեցիք, և ահա այսպիսի բանիւք ստութեան և խարդախութեան զազդն ողջոյն պղտորեն, երկպառակութիւն ՚ի մէջ արկանեն, և խռովութեամբ լնուն, և զոմանս ՚ի ծանր ժանր վնասս մատնեն :

Ան հաւաստի արդեօք թուին այս բանք առ իմաստունս լատինացւոց, օր բնակեալ են յեւրոպակ, բայց քաջ

դիտէ ամարեելք, թէ զե՞նչ ինչ գործեցին ան ընտրող միտիունարք 'ի մերձակայ ժամանակի յաւէտ 'ի Առստանկնուպօլիս:

Ստոյին արձակումն խոստովան որդւոց իւրեանց՝ կաթոլիկ անուանելոց, թէ ընդէր բացիք դուք զկրպակս առ և տրոյի 25 աւուր դեկտ”, նոյնպէս և 'ի մարտի 25 որ հայի 'ի տօն Աւետման չափեալ ըստ տօնի ծննդեան :

Եւ վասն այսր բանի բաց յայլոց արկածից՝ որք անցին ընդ բազումս, երկու անձինք ևս 'ի կալանս մատնեցան, զի անսալով միտիոնարաց, ոչ բացին զկրպակս իւրեանց յայնպիսի աւուր, որ ոչն էր ըստ հայոց օր տօնի, և այսպէս զուր տարապարտուց այնչափ տառապանս կըեցին ինքեանք և ընտանիք իւրեանց :

Այս անցք 'ի մասնաւորի լսելի եղել յարեմուտս ընդ որ յապուշ կըթեցան, որք իմաստուն ածաբանք խոհականք, և եպիսկոպոսունք երեելիք, և սքանչացան լը ճանապարհ իմաստութեան, որով ընթանան միտիոնարք տգետք :

Եւ արդ՝ դատ արասցեն իմաստուն ածաբանք և հողելից առաջնորդք, թէ որով իրաւամբ լիկեն զհայս հակառակորդք, վասն բանի տօնից: Տեսէք զպատճառանս նոցա հիմնեալ 'ի ստութիւն և յատելութիւն :

Առաք զփաստս նոցա անզօր և անդորքունեայ: Եւ սորին հակառակն հասու եղաք, զի չունին հայք յայսմարատ ինչ մոլորութե, և ոչ յանցուածս ընդդեմ օրինաց, ոչ թիւրութիւն կամաց, ոչ զեղծումն խորհրդոց, այլ միայն հաստատուն զգուշութի անխախտ պահելոյ զծէսս իւրեանց, ոչ ծէս ինքնա հնար կամ օտարագիւտ, այլ 'ի սզկըանէ Եղեղեցւոյ և յԱռաքելոց եկեալ” եայլն :

Արդ մի թէ արժան իցէ զայսպիսի բարեկարգութին իբրեւ անարդ ինչ կամ մոլար լը վայր հարկանել, և իբրեւ այնպիսի 'ի բաց թողուլ ստիպել: Ո՞չ ապաքէն ով եկեղեցի որտի մաօք կամի, զի հին բարեկարգութիւն ծիսից ամ յարգութք պահեցի: Ո՞չ ապաքէն առաւել քան վրէժխնդիր է այսմ

ՊՊուշաւորութեանն գտն առաքելական :

Ապաքէն բազմօք Հաստատէ զայս յաւերժական յիշատակաց արժանի մեծ քահանայապետն ինենետիկոս Ժ.Պ. ՚ի նամակն գրեալ յամի Տ 1755 ՚ի դեկ” 29, որոյ սկիզբն է, Առաջի արարան : Ուր ընդ արձակագոյնս յուցանէ թէ փոյժ առաքելական աթուոյն այս է և եթ զի * Արքայի մոլորութիւնն Հակառակ ուղափառ Հաւատոյ խլեսցին, և ոչ զի վնաս ինչ լիցի յարգական ծիսի արեելեայց :


Եւ եթէ * Ա ն զժէս իւրեանց ՚ի բաց լժողցեն, այլ միայն ՚ի հերետիկոսութեանց հեռացցին :

Եւ եթէ * Օ ի ամենեքեան ուղղափառ իցեն, և ոչ զի ամենեքեան ՚ի լատին դարձցին :

Բազում և այլ ինչ այսպիսի գրէ անդ սը այլապետն : Երանի թէ միսիոնարք ընթեռնուին զայոսովի, զի թերեւ փոքր մի մեղմանային, և ՚ի բաց թողեալ զընդունայն վէճ ծիսից՝ խոհեմո ընթանային” :

Եւ ապա բազմօք պեղէ, թէ եկեղեցին ոչ զխոսովութիւն այլ զհանգարատութիւն ժողովրդոց կամի . տեսանէ զի ուրիք խռովութիւն ունի ծաղել վասն նոր ինչ մուծանելոյ, ոչ ըստիպէ և ոչ թախանձէ, հուսկ ապա վերջ այլ բանից իւրոց :

“Երանի թէ ամ միսիոնարք ըստ տնտեսութեանց սը, դահին ընթանային, և ոչ ըստ բերման ոգւոյ իւրեանց, որով գաղարէր ամ վէճ Հակառակութեան ՚ի վերայ այսպիսի նիւթոյ”, յերես 377 :



ԽԱՆԴԻՐ ԽՈՇՆԵՐՈՐԴ

Յաղագո որբոյ բաժակին ընդ բանի անտ
պակ կամ ջրախառն մասուցանելոյ :

“Այս վեճ զգուշալի է ’ի նիւթ այսպիսի ահաւոր
խորհրդոյ . յետս կասեցուցանէ զմեղ ՚ի խօսելոյ , և ոչ իսկ բան
մի առաջի առնելոյ : Բայց բազմութեա դատախազից մուոց , և
Հաճութիւն թախանձանաց նոյա հարկաւ ոտիսկեն երկարեւ
մեղ զՃառս առաւել քան զառաւել յայս խնդիր քան յայլս ,
զի այնպիսի ուշով խօսեն ’ի վեր այսը բանի , որպէս թէ չկայցէ
ինչ ժանր և անբերելի քան զայս , այնչափ , մինչեւ եթէ անհա-
ւաստի թուիցի լսողաց , ոչ այնպէս փոյթ տանին խնդրոց հաւա-
տալեաց . թէ որպէս ունին հայք . որչափ ոյսմ՝ թէ զի տրդ
ան ջուր առնին զբաժակն անտալակ դինւով : Ոչ ինչ համարին
առ սովաւ զայլ ամ վեճս յարուցեալս ’ի վերայ չայոց , որ-
պէս և աչօք տեսանեմք ’ի գրութիւնս բազմաց , և ականջօք
լսեմք հանապազ , զի ասեն՝ ամ ինչ չայոց ներելի է , զի գոյզն
խնդիրքեն և չնչին տարբերութիւնք ձայնից կամ ծիսից , իսկ
այս անասլակ նուելը աններելի է հարկէ փոխել զայս սովորութի
հարկէ խառնել դջուր : Եթւ շատք ես այնք են . որք սոսկ ընդ ,
լսելն , թէ հայք ոչ խառնեն զջուր , անդէն և անդ ’ի վեր աճեն ,
ուրեմն նոքա հերիտիկոսեն , ուրեմն նք հերձուածողեն , միով
բանիւ ասացից , այնպէս ժանրացուցանեն և այնչափ բարձրացու-
ցանեն զայս խնդիր՝ մինչեւ անհնարէ զերծանիլ ’ի թանխանձա-
նացնց : Բայց թէ ասիցեն (թէպէտ և սուտ) թէքաւլիցի , մեք
ոչ անապակ առնեմք , այլ ջրախառն , յայնձամ լսեն զգովու-
թիւն ուղղափառութեան աներելքայ : Ասացի աստուան բերանով ,
զի և հայոց անհնար է առնել զայս գործով , անհար է իմա

բարոյապէս, բայց համարեած թէ բացարձակապէս, զի՞նչ ապա
'ի տեսանելն մեր 'ի միոյ կողմանէ զայնչափ ստիպութիւն և զթառ
խանձանս այլոց, և 'ի միւս կողմանէ զանհարաւորութիւն իրացր,
զի (զի՞նչ արասցուք) իրօք անհար է փոխել Հայոց զայս սովորութիւնի հնացեալ և արմատացեալ դարուց ի դարս, զի՞նչ մնայ մեզ
առնել, ոչ այլինչ, բայց եթէ առաջի տարածանել ածարանից և
իրաւագիտաց եկեղեցւոյ, զայս կնճիւն անլուածնելի, որպէս
զի անձամբ անձին տեսեալ մի պարտաւորեսցեն զտառապեալ
աղդ մեր առ անկտրելին, առ որ ոչ լինի պարտաւորել, և ոչ
իսկ օրինօք”, յերես 749 :

Զկնի այլ ես սոցին նման բանից ցուցանեկ թէ այս նիւթ ոչ վերաբերի առ հաւատս, և ոչ է օրէնք աստուածադիր, և ոչ հարկաւոր առ բան խորհրդաց, այլ միայն լոկ ծէս, և արտաքին արարողութիւն եկեղեցւոյ, և ապա յարէ:

“Օ ի՞նչ ապա, առ ի՞նչ այդչափ վէճ և խնդիր 'ի վը
այսր զոր ոչ տանի իրն, առ ի՞նչ այդչափ սաստկութիւն բանից,
Հիմնարկեալ յոմանց 'ի Հոռոմոց, և տարածեալ առ յետինս
'ի լատինացւոց, մինչև վաճն այսր կոչել զհայս Հերետիկոս և
Հերձուածող, գոնէ ոչ աղատ 'ի մահու չափ մեղաց ցուցանել,
մանաւանդ թէ և ոչ 'ի նզովից և 'ի բանադրանաց :

Այլ զի մի ծանր թուեսցի բանս, տեսցուք զծանր
ծանր ամբաստանութիւնս հակառակորդաց, որք թշնամնոք
պախարակեն զսովորութիւն Հայոց, և զզօրաւոր փաստս ածա-
րանից՝ որք սիրայորդոր փութով ստիպեն զհայս փոխել զսո-
վորութիւն իւրեանց, և 'ի միտ առցուք թէ զի՞նչ հետեւի
հուսկ զկնի :

Ամբաստանութիւնս յերիս գլուխս վերածին,

“Ասիս՝ թէ հայք անձամբ անձին են հնարեալ զայս
սովորութիւն և այլն :

Երկրորդ՝ թէ զայն ևս 'ի նշան մոլորութեն են հնա-
րեալ 'ի ժողովիլ Ամանաղկերտի կամ Պառնայ :

Երրորդ՝ թէ մերժեն հայք զներհական սովորութիւն
այլոց, անդելով թէ խառնել զջուր ի գենի պատարգին :

“Եւ այս այնչափ զի ըստ այսց գլխոց հայք և լուտերականք հանդերձ Ավալուինականօք ’ի մի շարից են վերածելի ։

Ապաքէն անհաւտտալի երեկը մեզ, թէ գտանիցի այդպիսի դառն զրապարտիչ ոք, բայց ’ի խնդիր եղեալ գտաք բազումս, յորոց քանի մի յառաջ մատուսցուք, ոկսեալ ’ի թեթեադունից, և անցեալ ’ի ժանրագոյնս և ’ի ժանրագունեղս”։

Չորոց անուանս տպա ՚ի մեջ ըերէ հանդերձ բանիւք իւրեանց այն են, Լեքէն զաղղիացի, Յավհնան սիթերնացի քափուչին, Շեկնոլի Նիկոլօգոստ, ՚ի կարգէ քարողչաց, Անթովին, Եւվենին, Գոնէթ Թուվմահական, կարտինաւ Պօնագալանոս արեներա ՚ի կարգէ միհորից ևայլն, և յարէ զկնի ասելով։

“Ահա այս հանդէս ամբաստանութեանէ չարախօսաց մերոց, և այս ատեան դատաստանի նոցա, յորմէ հարկաւ հետեւցուցանել դիտեն, թէ ուրեմն պարտէ հայոց ’ի բաց թողուլ զայսպիսի մոլար դործու ։

Այլ սակայն բողոք ունի աղգն հայոց միաբերան, և ոչ ընդունի զառաջարկութիւն այդ ամ ամբաստանողաց, այլ դնէ իրաւամբ առաջարկութիւն այսպէս, Առուտ է հիմնովին ամ դըութիւն հակառակորդաց, ապա ՚ի զուր ջանան պախարակել կամ արդարացուցանել զայս բարի սովորութիւն մեր”։

Եւ ապա ըերեալ զերկուս պատճառս լստին հեղինակաց, ոքք ընդ վայր հարկանեն զայս արարողութիւն հայոց, յաւելու և զերբորդն ասելով։

“Երբորդ ելն՝ զոր տեսանեն ընթերցողք ’ի բանս ամբաստանողաց մերաց, այս է, զի լատին հեղինակք յայն սակս ամ ոդւով եպերէն զանջուր պատարագելն հայոց, զի լուտերականի լամականք և Ավալուինականք ’ի կողմն հայոց զինքեանս ցուցանեն ըստ այսմ գլխոյ ։

Եւ զի ամբարանք կամին ջաղխել յամի զգլուս այդոցիկ աղանդաւորաց, ’ի պատճառս հայոց, անմեղ աղդ հայոց անկանի ընդ գաւաղանաւ սաստուկութեան ամբարանից։ Եւ այս այնչափ, զի թէ ոչ ամ ոդւով նախանձախնդիր լիցին ամբարանք ընդդէմ այնց աղանդաւորաց նաև ըստ այսմ գլխոյ, ժանլ մեզս անձանց համարին և յիրաւի

“Եւ սակայն պարտ էր զգուշանալ ածաբանիցդ այդոցիկ և ամ փութով մոտղըել, զի մի ՚ի պատճառս այդալիսի կոռոյ, դարձեալ ընդդեմ արդարութեան գործեսցեն, դարձեալ ընդդեմ խոհեմութեանն ընթացին ՚ի վնաս անձանց ։ Ոչ կարեն ես ասել ածաբանք, թէ չիք յասմ հետք ինչ անխոհիմ ընթացից ՚ի վնաս անձանց իւրեանց, զի յորժամ առանց հայելոյ յաջ և յահեակ ընդդեմ հայոց շարժեն զգաւաղանս իւրեանց ՚ի պատճառս ։ ուտերականաց և Ալուինականաց ։ յայտ է թէ այդ աղանդառորք առաւել զօրանան, ընկճին ՝ զի եթէ ածաբանք սոսկալէս զաղանդառորն կշտամբէն, ոչ կարէին նք դլուխ ամբառնալ։ Ա սոն զի որովհետեւ ինքեանք ՚ի մասնէ լատին եկեղեցւոյ են օցտեալ՝ դիւրաւ յաղթահարէն, երբ յերեսս Հարկանի նոցա ։ թէ զի՞է, զի զսովորութի հռովմայեցւոց, զոր և նախնիք ձեր սլահէն մի գոլով ընդ մզ, զոր այնչափ հարք արևմտեայք ՚ի սկզբանէ և այսը հաստատեն, ՚ի յետին ժամանակս յանդէնիք պախարակել”, և այլն։

Եւ այսպէս անպատասխանի մնան Հակառակորդք, թաղ և զայլ փաստս, զոր ունէին ածաբանք ձեռնարկել իրաւամբ ընդդեմ նց, Բայց յորժամ ՚ի խօսելն ընդդեմ աղանդառորաց ՚ի ձեռս առնուն ածաբանք և զհայս, յայնժամ ոդի առնուն աղանդառորք, և պնդին ՚ի բանս իւրեանց ասելով, որպէս յանիրաւի մն ըժէք դուք զսովորութի հայոց, նոյնպէս իրաւունս տայք մեզ, զի որովհետեւ տեսանելով ձեր զազդն հայոց, ՚ի սկզբանէ և այսը սլահել անխախտ զսովորութիւն անջուր պատարագելոյ, այսու ամիւ պախարակէք զնոսա, նոյնպէս և մեք թէսլէտ և տեսանեմք զձեզ ՚ի սկզբանէ և այսը ջրախառն պատարագել, իշխեմք սլախարակել զձեզ։

Եւ եթէ դուք ուրանայք զհնութիւն սովորութեան հայոց զոր նոքա հաստատեն վկայութեամբ նախնեաց իւրեանց, մեք ևս իշխեմք ուրանալ զհնութիւն սովորութեան ձերոյ, զոր հաստատէք վկայութեամբ նախնեաց ձերոց։

Կիտեն ասլաքէն ածաբանք, զի աղանդառորք այս-

ոլեն ձեռնարկեն, և ծանր ծանր նախատինս ևս 'ի վերայ արձակեն հսովայեցւոց, ասկա ոչ լաւիցէ ալղեօք չխառնել 'ի վէճիւրեանց զովորութիւնաց, զի կոյ մեր և կռուոյ նոցա, թւթէ խղճի մտօք քննեսցին զայս ածաբանք, պարտաւորին 'ի բաց ամփոփել զձեռու իւրեանց 'ի բանէ հայոց, և մեզ թշնամին կամ լով հարկանել, զքարեկամն վիրաւորել:

Վասն զի անաշառ կամելով ասել, զոր ինչ և խօսին ածաբանք յայս նիւթ անապակ կամ ջրախառն մատուցանելոյ զբաժակ պատալագի, եթէ իրեւ փաստ, և եթէ իրեւ պատշաճողութիւն, եթէ տարակուսանօք, և եթէ առանց տարակուսելոյ, և եթէ միաձայնութեամբ ածաբանի ընդ ածաբանի, և եթէ տարածայնութեամբ կարծեաց, ոմն վայելչապէս յարմարի 'ի հիւսուտք ճառիս, վասն ջատագովութեան սովորութեան հայոց, և ազգու և զօրաւորագոյն գործէ զձեռոնարկութիւն մեր, և այնչափ առաւել՝ որչափ ուժգինս խօսին, և երկար գրեն, և ամ ոգւով պնդեն զբանս իւրեանց, զի ըստ նմին համամատութեան և մերս բանք ոյժ առնուն, որովհետեւ միշտ 'ի կողմն հայոց նպաստեն ուղղակի կամ անուղղակի :

Խնդիր Ա:

“**Ը**սլում քննի առաջին պատճառ առեալ 'ի ծագմանէ սովորութեան հայոց, այսինքն թէ արդեօք հայք 'ի սկզբանէ դարձի իւրեանց ունեին զանապակ բաժակ, թէ յետոյ ու ըեմն հնարեցին”:

ՅՕՒ, Ա.

“**Ո**չէ լուծումն այսը խնդրոյ կախի զվկայութենէ նախնեաց մերոց և բոլանդակ տղգիս հայոց, և ոչ զվկայութենէ յետոյ ոմանց յօտար ազգէ”:

Յետ փոքը մի բանից ասէ :

“**Ա**յնչափ յայտինի է բանս մինչեւ չկարօտէր իսկ քըննութեան, զի թէ և օտարք առանց թշնամութեան խօսեին,

զոր ոչ տեսանեմք , թէ և ճշմարտութեամբ վկայէին , զոր ոչն գտանեմք , այսու ամիւ պարտ էր հայիլ 'ի վկայութիւն ազդիս հայոց , և նախնեաց հայոց , որոց եթէ համաձայն գտցին բանք օտարաց՝ բարի է , ապա թէ ան համաձայն՝ չէ մարթ 'ի մի կողմն դնել զհայոցն , և հաւանել օտարացն իբրև անստելի ճշմարտութեան : զի այդ է լնդդէմ ճանաչման ամ իմաստնոց ” :

Աստահօր ցուցեալ թէ չէ մարթ զովը թեան ազդի միոյ դշնութիւն յայլոց տեղեկանալ . բայց եթէ ի՞նախնեաց այնը ազդի , առա յարէ :

“Ապա հարկ է խոստովանիլ թէ ուրք խնդրեն զժադումն սովորութեան հայոց վասն անապակ բաժակի , պարտին դիմել 'ի վկայութիւն ազդիս հայոց քան օտարաց :

Պնդեմք և ես զայս դրութիւն . որով նախապաշարի ամ փախուստ հակառակորդաց : Ոչ կարէ ոք յիմաստուն ածաբանից պահանջել 'ի մէնջ թէ , վկայ 'ի մէջ ածէք տռ 'ի ցոյց հնութեան անապակ բաժակի ' զ ատին հեղինակ , կամ զՅոյն , կամ զԱսորի , կամ զխուժ , կամ զդուժ , ” եայլն :

Ա ամն զի այս ազդ , ոչ են 'ի մասնէ ժողովրդեան , զոր դարձոյց սուրբ Գրիգոր Եռաւորիչ հայաստանեայց 'ի հաւատո . Քրիստոնի , որպէս զի մարթասցին գիտել , թէ զի արդաւանդեալ իցէ Եռաւորիչն ' զգուժածութի սուրբ բաժակի , զի թէ և իմաստունք ոմանք ' օտար ազդի աւանդութիւն արտաքոյ ելանէ քան զսահման իմաստութեան նոցա , ապա հարկէ 'ի նմին իսկ ազդէ տեղեկանալ զաւանդութի ազդին , ոյսինքն զժադումն սովորութեան անապակ բաժակի ” :

ՅՕՒ՞ , Բ .

Ուր զվկոյութիւն Յովհաննու իմաստաէր հայրապետի 'ի մէջ ըերէ , որպէս և հղեալ կայ 'ի պատմութեան հայոց . համար Բ . և ապա ասէ :

“Այս վկայութիւն լուծանէ ' զամ խնդիրս , և ոչ թողու տեղի ումեք այլ ազդ ինչ մտաբերել , ապա ցուցանէ թէ քանի հին է այս սովորութի հայոց , և ամ իրօք հաստատէ , թէ ծագումն այսր սովորութեան ոչ է հնարեալ 'ի մէջ հայոց

յո՞ւ և իցե՛ ժամանակի և, այլ անզստին՝ ՚ի սկզբանեւ դարձի իւրանց ընկալեալ՝ ՚ի սուրբ Առաստորչէ ։”

Ցետ այսորիեւ պատմէ զժողովսն Մանագիերտի և ՚Դու՛նայ, յորս յիշաւակեալ լինի անջուր պատարագելն հայոց, և ունայնացուցանէ զբանս նոցա՝ որք տոնն թէ ՚ի ժամանակս այսոցիկ ժաղովոց բարձին հայք գշը ջախտառնութեան սովորութիւն, Մանաւանդ զբանս Ֆրա միսիթարչի ունիթուայ, սր զրեալ է թէ, տեսեալ եմ զզիրք մի մեծ զըետլ յունարէն, և ընթերցեալ ՚ի նմա, թէ Ներսէս կաթողիկոս (այն է աշխարհինեան) ժողով արարեալ 22 եպիսկոպոսոք, եմոյծ զօտար վարդապետութիւնս յեկեղեցին հայաստանեաց, յորոց մին է և անջուր պատարագելն, Եւ ապա ասէ թէ յասմ անհիմն բանէ պատրեցան ամենայն հակառակորդք հայոց.

“Այս (բան Միհետեւն Առաքեանաւուն) աղճատալից արձանագիր լիցի յիշաւակ անջնջելի առ ՚ի նշան ստութեան ամ չարախոսաց, որք ՚ի սկզբանէ և այսր եղեն ՚ի թշնամիաց ընդդեմ սղդիս հայոց, եթէ վասն բանի սուրբ բաժակին, և եթէ այլոց խորհրդոց և բարեկարգութեանց” և այլն և այլն :

«Պանդի ՚ի սմա բովանդակին ամ սերմանք հեշտալուր համբաւոյ. որք տարածեալ են ՚ի գիրս հակառակորդաց մերոց, առ հասարակ եթէ յոյն հեղինակաց, եթէ հայ հոռոմոց, եթէ յետնոց լատինացւոց, և եթէ ունիթուաց Փրանկացելոց. որոց ՚ի մաստնալից լրութիւն համառօտի ՚ի զրքոյկն ամբաստանութեանց :

՚ի սմին ալերէ են զանդեալ աղճատանք սուտ ՚ի կոնի, սուտ Առակայ, սուտ ՚Կամասկացւոյ ՚ի կիկէ քարօղչի, և Գիմեսի, և այլոց հոռոմոց, որք խօսին զայոց աղդի աղդի զրպարտութեամբ. թէ զայս ինչ, կամ զայն ինչ սահմանեցին :

՚ի նոյն նիւթոյ բաղկացեալ ամ ընթացք չտրախոսութե ՚Ապարանցւոյն, և այլոց ունի թոռաց, և ան անուն պատմէին Ալեմէսի, նոյնալէս և ումանց Առթոլիկ կամ ՍՈՒ կոչեցելոց յերկրէն Աիլիկեցւոց, և Արաց և ՚Աղուանից ոմանց, և անաւարչեցւոյն, որք առ հասարակ ասեն, թէ ՚ի ժողովն ՚Կուռնայ իսելեցին հայք ուղիղ աւանդս ՚ի մալար աղանդս : Օ սոյն իմն և վա այնց զոր խօսին զժողովոյն ՚Անաղկելուի յանուն (Ճնիցւոյն

Յետոյ ընդդեմ զի՞նի Պօնա կարսինալին, որ ստացեալ է թէ զի՞նի
անջուր սկսեալ է նու իրել ՚ի Հայոց ՚ի Նշան բաժանման Կաթողիկէ եկեղեցւոյ, և
՚ի ցոյց Եւտիքական հերետիկոսութեամին ։ Զայս հաստատեն առէ պատմութանք այնք
ազգի և այլ լինել հին աւանդութիւնն այնը եկեղեցւոյ հաստատեցին քանի մի Եսուս
կոպոսունք Հայոց, և Քահանայք հարցաբանեալք յինէն, և այլք ևս ՚ի մերայնոց
հմուտ ծիրից նոցա են լեզուի ընդդեմ, որոյ ասէ :

“Ահա սակաւատող բան Պօնայի, բանայ մեղ դաշտ
ընդարձակ, որում եթէ պատասխանի տալ կամիցիմք, մաս-
տեանք ոչ բաւեն :

Ի՞ռ այժմ համադոտիւ ասելին է ոյք իցնեն այն պատ-
միչք Հայոց, յորոց ՚ի վկայութի Հաստատեալ իցէ Պօնա զբանս
իւր : Եւ ոյք այն եպիսկոպոսունք և քահանայք Հայոց՝ Հար-
ցաբանեալք ՚ի սմանէ, և ՚ի նոյն վկայութիւն միարանեալք,
Եւ ոյք այն ՚ի մերայնոց անուանեալք, դու լատին միսիոնարք՝
տեղեակ ծիսի և լեզուի Հայոց :

Դպաքէն Պօնա ոչ գիտէր Հայերեն, ուուտի և չէր
ընթերցեալ զըանս պատմագրաց Հայոց, որով մարթացի իմա-
նալ թէ, զի՞նչ ասեն կամ չասեն, որպէս յոյտ է, թէ պատ-
միչք Հայոց, ասելով իմանայ զոյն, զորս ՚ի մէջ բերէ Ալէմէս
Կալանաս, և յայտ է թէ Ալէմէս ոչ ունի զոյլ ոք պատմիչ,
բաց եթէ զմիով Հայ ան անուն, և զմի ոյլ Հոռոմ, նոյնալէս
ան անուն, Հայի Պահկեցի ունիթօռ, անՀնարին թշնամի ազ-
գին իւրոյ քան զյոյն, և Հոռոմն այնպիսի որպէս գիտէ Պօնա
զըարս յոյն չարախոսի եռյլն, Խոկ եպիսկոպոսունք քանի մի
յիշտակեալք առանց անուան ՚ի Պօնայէ են այնք, որք թշ-
նամացեալք են ընդ Հայոց, և զնացեալ ՚ի Հոռոմ, և անդ առ
հաճոյ ընծայել զանձինս՝ մտուցեալ են ՚ի չարախոսութիւն,
որպէս էին երբեմն “Ա, երսէս պապալինց, և Ախմէն պէկ, զորոց
բանքն լինիլ ՚ի գըքոյին, մոլորութեանց, որպիսի էին և որք
առ ժամանակօք Պօնայի, և որ յառաջ և զի՞նի ՚ի խոռովարար
եպիսկոպոսաց, և յուրացող փախստէից :

Արդ ոյսպիսեաց բանիւ ոչ կարէվ Պօնա զՃշմար-

տութիւն Հայութեան իրացն իմանալ : և հազար ամսոց նախնի սովորութեանց հասու լինել , և իշխան քանիք թշնամանաց նետաձիգ լինել յաղթն գլխովին :

Այնպէս իման և զքահանայս զբա յիշե Պօնա , յոց միջի եղական էր յայն աւուրս տէր Բարսեղ կոչեցեալն , զորոյ զգովութիւնս թերես յայլում վայրի Համառաօտեսցուք : Այս նշան է առն այնորիկ : որ կամիցին իմանալ զորպէտն նը անուն նորա լսի առ Հայս մատնիչ Հայրենեաց , և մականուն : թշնամի Հայաստանիաց : Օ այս անուն ոչ ոք ալդեաօք իշխուր նմա ընծայել , եթէ ինքն իսկ չէր կտակ արարեալ՝ զի 'ի տապանաւդիր իւր գեցի արձան յիշատակի , թէ տէր բարսեղ թշտամի աղջին Հայոց ևայլն , ֆակալէտ խղճեցին իմաստունք . և ոչ եղին , զի այս լինելը կնիք ոչ անդատապալու մնալոյ յահեղատենին ” :

Խնդիր Բ”

ՅՕՒ”, Ա.

Յորում ցնեցանէ թէ Լուսաւորիչն այնպէս աւանդեալ է Հայոց , առեալ զայն ՚իսովորութենէ նախնի հարց եղելոց յառաջքան զի՞նքն , կամ յաւուր իւր : Եւ ապա :

ՅՕՒ”, Բ :

“ Հուցանի ՚ի սահմանադրութէ Աղեքսանդրի Պապին , թէ ՚ի սկզբան եկեղեցւոյ գոյր սովորութիւն անապակ բաժանելին Այնչափ անտարակուսելին է այս ապացոյց , մինչե ՚ի տարակոյս սնկան ոմանք , թէ գուցէ բնաւ չգոյր ջրախառնութի ՚ի սկիզբն , այլ միայն անապակ : իսկ որք ոչն հաւան գտան զայս առել , և ոչ իսկ կարացին ժխտել զանապական լինել գոնէ : տարածեալ առ բազումս :

Օ երկաքանչիւր կալծիս ևս որք մի քան զմի յաւ էտ նսկաստեն սովորութէ Հայոց ՚ի միջ մատաւցուք յառաջ եղեալ զէին բանիցու վկայութեամբ եկեղեցւոյն հոռվմայ : Հոռվմեական որ եկեղեցի ՚ի կատարելն զյշեշտակ սրբոյն Աղեքսանդրի

սլապի , որ նստաւ . 'ի սկիզբն ի՞ . դարուն յամի §ո՞ն 109 , կամ
ըստ ոմանց 121 . և վառաւոր նահատակութեամբ կատարեցաւ ,
առաջի գնէ հաւատացելոց ինչ ինչ քարեկարգութիւն զորս սահ-
մանեալ է նա ինքն Աղեքսանդր քահանայապետ և գլխաւորն
'ի միջի այնոցիկ է այս , զի սահմանեալ է խառնել ջուր 'ի գինի
բաժակին , առ 'ի նշանակելոյ զկրկնավտակ աղբերս , որք բղ-
խեցին 'ի կողից փրկչին , Վանդի գրի յընթերցուածն հռով-
մեական Պուէ վի առուին որ ժամադրքին 'ի մայ . 5 : այսպէս :

**Այս սը քահանայապետ Աղեքսանդր հրամայեաց ըզ-
գինին խառնել ջրով , վասն արեան և ջրոյն , որ բղխեցին 'ի կո-
ղին Վարիստոսի Հիսուսի :**

**Այս բան բացայայտ եղերօք իւրովք յայտնաբար-
բառ վկայէ , թէ սկիզբն ջրախառնութեան եղեւ 'ի հրամանէ
Աղեքսանդր Պապին ” :**

Յետ այսորիկ երկայն բացատրեալ զայս բան , յարէ ասելով :

“Հորմէ զհետ գայ թէ ուրեմն յառաջ քան զայն հրա-
ման , կամ բնաւ չկայր յեկեղեցւոջ սովուրութիւն , ջրախառ-
նութեան և կամ ոչ էր ամենեցուն 'ի գործածեալ :

**Եւ զայս քաջայայտ ցուցանէ յասելն թէ հրամայեաց ,
զի թէ գոյլ արդէն սովորութի 'ի մէջ ընդ հանուր եկեղեցւոյ
ջուր խառնելն 'ի բաժակին սը խօրհրդոյ , զի ևս պիտոյ լինէր
սըրոյն Աղեքսանդրի հրաման հանել . զի ջուր խառնեցի 'ի բա-
ժակին , և զի՞նչ յարմարութիւն ունէր սյդպիսի պատուիրա-
նադրութեան :**

**Հայր վերայ լինելոց էր հրամանդ այդ , մի թէ 'ի վը
այնացիկ որք ջիւր խառնէին , որպէս թէ ասելով , դուք որ ար-
դէն ջուր խառնէք , ջուր խառնեցէք :** «Օ ի՞նչ քան զայս ան-
հեթեթ և անլուր : Ապաքէն ընդունայն և ժաղրական իմն լի-
նէր , եթէ եշխան ոք հրամայէր ստորադրելոց իւրոց զի արա-
ցեն զայն ինչ , զոր արդէն առնեն անխափան սովորութեամբ :
Օրինակ եմն , քանդի սովորութիւն է այժմ յարեմուտս առ-
հասարակ , օրհեալ ջուր 'ի կիր առնուլ յեկեղեցիս , աւելորդ

իմ լիներ, եթէ այսմ նոր Հրաման ելաներ, զի լիցի կիրառութիւն օրհնեալ ջըոյ յիկեղեցիս, Առյնուկու և եթէ գոյր յառաջն սովորութիւն ջուր խառնելոյ ՚ի բաժակին, ամենեն աւելորդ լիներ, նոր Հրաման հանել քահանայապետին:

Այլ ազդ քան զայս չ մարդ իմանալ զհրամանս
Աղեքսանուրի պապին:

Խնդիր Գ.

ՅՈՒ

“**Յ**որում քննի երրորդ դիմակ ըութի, առեալ ՚ինմանութենէ գործողութեան, • Պարիստոսի, յութէ արդեօք ՚Պատէրն մեր յընթրիսն խորհրդոյ. Խառնեալ իցէ ջուր ՚ի բաժակին, թէ գինեաւ և եթ մատուցեալ,

Ե՞նթադրեմք նախ և առաջ, թէ ընհանուր եկեղեցին, • Պարիստոսի աչէ որոշեալ զայն խնդիր, և ոչէ առաջարկեալ հաւատացելոյ, թէ պարտէ հաւատալ ածային հաւատով զմի յերկուց աստի, յու ՚Պարիստոս անապակ գինեաւ մատուց զբաժակին, կամ ջրախառն գինեով, այլ անորոշ ՚ի կախ եթող, և ընդ կարծեօք ունի, թէ այսպէս կամ այնպէս լեալ իցէ եան:

Ե՞նթադրեմք երկրորդ՝ թէ ամ ոք բերի յայս վէճ իւրական ոգուով, զի և ինքն իսկ վէճն գլխովին ծագեալ է ՚ի ջատադեվելոյ զիւրն, Լոքը զի որպէս յայտ է ՚ի հանապազորդեան փօրձոյ, վերացուցեալ յիրուանց և յոչ իրաւանց, իւրաքանչիւր եկեղեցի զիւր սովորութիւն ծիսական աչ միայն զովէ, այլ և հնարի ցուցանել թէ ՚ի նախնեաց է առեալ: Եւ թէ հնար ի՞նչ իցէ ճգնի հաստատել, ոչ միայն իրու առաքելական աւանդութիւն, այլ և աւելունական, այսինքն ՚ի ՚Պարիստոսի այնպէս աւանդեալ:

Ամին իրի մեք աչ իշխեմք հատանել զայս վէճ, այլ միայն զերկուց կողմանց փաստ ՚ի մեջ բերել, զի յու այնմ զատ սրաոցեն ընթելցուք, Բազոյ ոչ գիտեմք, թէ ո կարողիցէ դատել ուղղափառութեամբ:

Զեկի երարդին տու .

“Ե՞նթադրեմք չորրորդ՝ թէ չեք ինչ վնաս յանորոշ մնալոյ այսը խնդրոյ , զի թէ անապակ բաժակ արարեալ իցէ Քրիստոս , և եթէ ջրախառն , վարդապետութիւն է հասարակ առ ամենայն ածարանս ” լու ձանաչման սբյ եկեղեցեայ , մանաւանդ թէ վճիռ ընդհանուր ժողովոց , թէ Քրիստոս մը զինի և եթ սահմանեաց ՚ի նիւթ բաժակի , վերացուցեալ յանապակ գոլոյ և ՚ի ջրախառն գոլոյ , այսպէս զի մի օրինակ կատարէ զսահմանագրութիւն Քրիստոսի , և զՃշմարիտ խորհուրդ սբ արեան նը , եթէ անապակ առնողն , և եթէ ջրախառն առնողն : զի իւրաքանչիւրն իսկ գինի մատուցանեն , որպիսի գինի և իցէ , միայն թէ ՚ի ըեւրոյ որդոյ լինիցի , որ միայն է Ճշմարիտ գինի և այսպէս համաձայն կացուցմանն Քրիստոսի առնեն :

Ա ամեն այսորիկ դատապարտելի է բարբանջմունք ու առերսուի . որ ասաց թէ լատինք ընդդէմ կացուցմանն Քրիստոնեան ջրախառն մատուցանելով զբաժակ . “Եսյնպէս դատապարտելի է և բարբանջմունք ոմանց , (զուաց անառանս և համեմ ուու) որ ասացին թէ հայք ընդդէմ կացուցմանն Քրիստոսի առնեն . անապակ մատուցանելով զբաժակ :

Ե՞նթադրեմք հինգ երրորդ , զի որ կողմն և համաձայն ցուցցի արարուածոյն Քրիստոսի , չէ պարտ խոժ օրիւ միւս կողմն , զի ամ ածարանք և սուրբ Հարք հաստատեն , թէ նիւթական համաձայնութիւն կամ անհամաձայնութիւն չէ ինչ , զի բազում ինչ արար Քրիստոս այսպէս կամ այսպէս , որ ոչ պահին յեկեղեցւոջ , որպէս ահա Քրիստոս ընդ երեկո մատուցանեն և այլու , Քրիստոս իազարջ մատուց , իսկ յոյնք խմարուն առնեն , այսովէս և այլ ինչ բազում : Օ այս ամ ՚ի մէջ բերեն լատին ածարանք ՚ի ցուցանել , թէ նա և ջրախառն կամ անջուր առնելն չունի ինչ վեաս . նկատմամբ նմանութեն կամ ան նմանութեան արարուածոյն Քրիստոսի :

Յուրմէ ունիս իմաստասիրել թէ ՚ի զուր թախանձեն :

ածարանք խառնել ջուր ՚ի բաժակն, ձեռնարկելով թէ պարտէ նման ՚Քրիստոսի առնել, զի ոչ միայն վայրապար ենթադրէ, թէ ՚Քրիստոս ջուր խառնեալ իցէ, այլ յաւէտ վայրապար լինի ձեռնարկելու ընդլէմ ճանաչման իւրեանց, որովհետեւ ինքեանք վճիռ հատանեն, թէ չէ հարկ խընդրել յայսպիսիս զնմանութիւն կամ զան նմանութիւն արարուածոյն ՚Քրիստոսի :

ԱՅԼ այսու ամիւ քանզի ախորժելի է ամ ումեք զի իւրն սովորութիւնման կոչեսցի արարուածոյն ՚Քրիստոսի, և ոչ ան նման, ՚Պատան յոյնք ցուցանել թէ ՚Քրիստոս խմորուն արար, որպէս ինքեանք առնեն, ՚Եոյնպէս յոյնք և լատինք՝ թէ ՚Քրիստոս ջրախառն արար, որպէս ինքեանք տոնեն, ՚Եւ ընդ հակառակն Հայք ջանան ցուցանել. թէ ՚Քրիստոս անխմոր արար և անջուր արար, որպէս ինքեանք առնեն :

Հանխմորն կուսակից ունին և զլատին ածարանս, իսկ յանջուրն ՚գատախաղ, այլ այնպիսի գատախաղութեամբ որ յաւէտ ՚ի կողմէն Հայոց նսլաստէ, որպէս յառաջիկայդ ունիմք ցուցանել”.

ՅՈՒ”, Բ:

՚Եղանակն կարծիքական՝ որով խօսին ածարանք, ոչ կարէ ցուցանել, թէ ՚Քրիստոս ջուր խառնեալ իցէ, այլ յաւէտ զօրացուցանէ զդրութիւն, թէ անապակ արար ՚ՔՐ ։

ՉԻՔ ոք յածարանից, որ բացարձակ վճռեսցէ թէ ՚Քրիստոս տէլն մեր ջրախառն արար զբաժակ, այլ ամենեքեան առ հասարակ կարծիքական ձեռվ խօսին :

՚Եւ ըստ այսմ խոհական ընթացից յառաջաշաւիլ զովելի գտաւ հրեշտակային վարդտպետ սուրբն ՚Խովմաս, որոյ տեսեալ թէ չիք հաստատուն փաստ հաստատել զայս կարծիք, այլ միայն պատշաճական շարժառիթք, եղ եզրակացութիւնս այսպէս, Հաւանականաբար հաւատացեալ լինի, թէ տէլն զայս խորհուրդ կացուցեալ իցէ ջրախառն գինով։

՚Նոյն ոճ բանից կալաւ և սուրբ ժողովն ՚Տրիտեն-

գեան յասելն բանիւ նորին սրբոյ վարդապետին, ՚ի նիստ
իմ. Գ. 7: Հաւատացեալ լինի թէ Քրիստոս տէրն մեր այն-
պէս արարեալ իցէ....

Այս բարբառ հաւատացեալ լինի, որ առ լատինս
դնի, քահարիւն, ՚ի բարբառ նոցա, ոճ իմն է կարծիքական։
յայտարար հաւանական կարծեաց, որպիսի է և բառս քահարիւն,
զոր վարէ Առնդիսովն ածաբան յասելն հատ”....

“Քահարիւն, է թէ Քրիստոս յընթրիմն բարեխառ-
նեալ իցէ զջուրն գիււովս” յութէ կարէ ոք այնպէս կարծել,
այլ այնպէս զի և զներհակն կարէ ասել:

Ամին իրի այս բառք Քռէտիթուր, կամ Քռէտի-
պիլէ, ոչ երբէք ասին զհաւաստի իրաց, այլ մեայն զերկեայ-
ականաց, որոց ներհակն թերեւս իցէ Ճշմարիտ, զոր օրինակ կա-
րին ասել լատինք, հաւատացեալ լինի թէ Աղոմն դատապար-
տեալ իցէ, և թէ հաւատացեալ լինի թէ Փլըրկեալ իցէ։ Որով
կամին յայտնել սոսկ զկարծիս երկեայութե՛, զի զորն և ասիցէ
ոք ՚ի նախադասութեց աստի, տակաւին երկեայութիւն ՚ի մէջ
բերէ, թէ գուցէ ներհակն իցէ Ճշմարիտ։

Արդ պնդեմք թէ ասելն լատինացւոց այսպէս կար-
ժի, կամ կարծիքական ձեռվ խօսիլն նոցա զայսմ բանէ հաս-
տատէ զդրութիւն հայոց քան լատինացւոց”։

Եւ ապա բազմօք պեղէ թէ Քրիստոս անտակ արար զպատարագն
որում ասէ և զգուշաւոր կիրառութիւն լատինացւոց նպաստէ։

“Ճայժմու ժամանկի ամ եկեղեցիք լատինացւոց զգու-
շութեամբ ՚ի կիր առնուն զջուրն, զի թէ այէտ գտանին ոմանք՝
որք համարձակին փոքր մի աւելի զնել, զի երեեսցի ջուրն
հեղանիլ կամ արկանիլ հոսմամբ, բայց բազումք ևս կաթիլ առ
կաթիլ դնեն, ”

Արթողեան կրօնաւորք այնչափ զգուշանան այսմ,
մինչեւ երկնչելով, զի մի յանզգոյն առաւել յեղցի ՚ի կիր առ-
նուն արծաթի գրգալ փոքրիք յոյժ, որով առեալ զջուրն կա-
թեցուցանեն ՚ի մէջ բաժակին, որպէս և զրեալ կայ ՚ի սահ-

մանադ բութեան կարդի նոցա . . Այս զգուշութիւն ոչ միայն ցուցանէ, այլ և ապօցուցանէ, թէ Քրիստոս տէրն մեր անառակ գինի մատոյց 'ի սուրբ բաժակն, իսկ ջուրն յետոյ է յաւելեալ ասեն խորհրդաւոր նշանակութեան :

Ապաքէն ո՞ւ մտացի կարէ կարծել, թէ Քը տըէն մեր թուով և չափով կաթիլս իցէ արկեալ 'ի բաժակն, թ չորս կամ երեք, կամ երկու, կամ մի կաթիլ :

Եւ եթէ այդ այդպէս իցէ, հարցանեմք ցայնոսիկ որք այսպիսի ունին սովորութի, առ ինչ այդպէս սակաւ ջուր խառնեցին, որ և ոչ իսկ կարէ իսկապէս սակաւ կոչել, այլ սկիզբն սակաւութեան, Այս թէ Քրիստոսի կամին նմանող լինել, ինքեանք իսկ գիտեն. զի Քրիստոս ոչ է արկ կաթիլս, և ոչ դրդալ 'ի կիր էարկ : Այդ գործ դոցա ոչ կարէ ենթադրել, այսինքն թէ Քրիստոս ջուր խառնեալ իցէ, առա թէ ոչ՝ անխիղձ և համարձակ ըստ Քրիստոսի արկանէն, և այսշափ ինչ ոչ խղճէն և կամ գոնէ այսշափ ոչ վիճէն, Օ ինչ ունին պատճառ պատճառել այսմզգութեալ, բայց եթէ զայս, զի մի առաւելութիւն ջրոյ եղծցէ զզօրութի գինւոյ, որովէս ամ ացաբանք միաբերան աղաղակին, Ուրիմն եղեալ են 'ի մաի թէ Քրիստոս զինի մատոյց, և միայն զգինի՝ զոր անեղծ ջանան պահել, առա թէ ոչ՝ ոչ կատարի ասեն խորհուրդն, կամ գոնէ առարկուսելի լինի :

Օ երծեն Հայք այսպիսի վտանգէ, զերծեն և 'ի խղճէ տարակուսանաց, զերծեն ևս և ոչ միայն 'ի վիճաբանութիւնէ նախնի ացաբանից, այլ և այժմու ացաբանից առ հասարակ, որք սաստկագոյնս վիճեն ընդդէմ իրերաց: Ա էջ նոր և զարմանալի, վէջ որ ապացուցանէ առաւել քան զվերոյ գերեալս, թէ սովորութիւն Հայոց է նման այնմ, զոր արար Քրիստոս ”:

Ցետոյ 'ի մէջ առնու զբանս կիպրիանոսի, և ցուցանէ թէ և նա ևս 'ի կողմն Հայոց է, քան լոտինացւոց: 'Ի դիրե հանէ և բանս Պատարագամացոյց առաքելոց անուանեալ գրոյն, յորում յիշտակի ջրախառն պատարագել և ապա յարէ :

“**Ա**ստանօր պարու է զգուշութեամբ միտ դնել և այսի,
թէ պէտ նոքին իսկ ածաբանք վկայեն, թէ զի դժուարին է յոյժ-
որոշումն առնել ’ի մէջ աւանդութեց . թէ որ ’ի նոցունց այս-
պիսի իցէ կամ այնպիսի, այլ ոմանք յան զգուշից, որք ոչ այն-
չափ ածաբանօրէն խօսիլ յօժարին, քան որչափ իւրասիրօրէն .
Դիւրահնաը որոշումն ինչ են եղեալ վասն իւրեանց այնոց, իբր
զի զայն ինչ զոր տեսանեն յայժմուս պահել յիւրեանց միջի
վճիռ հատանեն, թէ առաքելական աւանդութիւնն է այն, և
կամ նաև տէրունական, թէ պէտ իրօք իսկ է եկեղեցական :

Իսկ զայն ինչ որ պեշուշտ տէրունական է, կամ գէթ
առաքելական, բայց առ սակաւ սակաւ խափանի ալ ’ի մէջ իւ-
րեանց, և միայն յարեելեան եկեղեցիս մնացեալ, և կամ
’ի մասնաւոր աղջո ՚ի յետնադունէ մակարերելով դնեն լինել
լոկ եկեղեցական և մասնաւանդ առ անձնական :

Վասն այսորիկ և կրկին եկեղեցական աւանդութիւն
դնեն, է՝ որ անփոփոխելի և հասարակաց, և է՝ որ փոփոխելի և
մասնաւորաց :

Օ այն՝ զոր փոխեալ են ինքեանք, ’ի գործոյ իւ-
րեանց ձեռնարկելով հետեցուցանեն, թէ ոյս ինչ աւանդութիւն
փոփոխելի լեալ իցէ, իսկ զայն զոր ինքեանք պահեալ իցեն, և
այլք փոխեալ, կամ ’ի նախնեաց այլ աղջ առեալ, սնունդն թէ
անփոփոխ պարու է լինել :

Վնջուր առնելին հայոց ընդգեմէ այնմ մտացածին
ենթադրութեան . . . և ոչ այնմ զոր արար Քրիստոս, և առա-
քեալք նորա նոյնպիս, ապա թէ ոչ՝ որ կարողնէ ցուցցէ զջրա-
խառնութիւն լինել աւանդութիւն Քրիստոսի կամ առաքե-
լոց, բանիւք ոչ ինչ վճարի, բան աւետարանին ՚ի կողմն Հայոց
է, և այլուստ չեք հաստատուն վկայութիւն, այլ կամ կար-
ծիքական, կամ յետնաց յօդեալ մանաւանդ թէ կան այնպիսի
վկայութիք . որք ապացուցանեն թէ սոսկ եկեղեցական աւան-
դութիւն է ջուրն և ոչ իւիք առաքելական կամ տէրունական” :

Հուսկ յետոյ և զայս եքրորդ խելիր կնքէ այսոքիւք :

“Հասացելոցս մինչև ցոյս վայր ։ Եթէ յայս խնդիր, և
եթէ ՚ի նոխընթացս, յայտնապէս զհետ գայ, թէ ոչ այնչափ
կարեն այլք թախանձել զհայս առ ընդունելու թիւն ջրախառ-
նութե, որչափ հայս զայլս առ ընդունելութի անապակ նուի-
բաց զի միշտ կամ զօրագոյն են փաստք հայոց քան զայլոցն, կամ
տեղաբագոյն են փաստք այլոց քան զհայոցն”,



Խնդիր Աւթներորդ

ՅՕԴ” Ա.

“Ճաէ զի՞նչ սլիսի եղանակաւ պահելի ին օրէնք և
պատուիրանք Երկեղեց ոյ :

Միաբան հաստատեն ամ տժբանք և երաւագէտք
ըստ վճռոյ ժողովոյն, թէ պատշաճէ, զի եւրաքաչիւր եկեղե-
ցիք ՚ի բան ծիսի զիւրեանց սեպհական օրէնս պահեսցեն, այն-
չափ, զի որչափ պարտաւորի լատին քահանայ ըստ հրամանի
լատին եկեղեցւոյ վարել զծէսս, ապա թէ ոչ՝ մահու չափ մե-
ղանչէ, սոյնպէս պարտաւորի յոյն քահանայ ըստ ծիսի եկեղե-
ցւոյն յունաց վարի, ապա թէ ոչ մահու չափ մեղանչէ սոյնպէս:
Ապա յայտ է թէ, և Հայ քահանայ պարտաւորի ընդ մահու չափ
մեղօք, զի ըստ ծիսի Հայաստանեայց վարեսցի” :

Եւ զայս բազմօք պնդէ ՚ի միում յօդսւածի, և ցուցանէ թէ խոտո-
րին յաւանդութենէ Լուսաւորչին քահանայքն որք ջրախառն մատուցանեն, և
գայթակղեցուցանեն զաղզն :

Եւ յայլում յօդսւածի ՚ի մէջ ըերէ զկոնդակ և Գինեսսի պապին, զոր
գրեաց առ հայս ՚ի ժամանակս ժողովոյն Փլորենցիոյ առ հայս ՚ի փոփոխութիւն
այսր ծիսի, և ցուցանէ թէ այն նամակոչէ է հրամանագիր :

ՅՕԴ” Ա.

Յորում նոխ ցուցանէ թէ եկեղեցական օրէնք և պատուիրանք ոչ
կարեն զոք պարտաւորել միշնե ցմեծ վետ հոգւոյ և մարմնոյ և ապա յարէ :

“Այս այսպէս իցե, որպէս չիք տարակոյս, ոչ
տպաքէն ըստ ածարանից նա և ջրախառնութիւնն է լոկ եկեղեց-
ական օրէնք, է սոսկ եկեղեցական պատուէր, է միայն ՚ի մարդ-
կային իրաւանց, զի՞ արդ ապա պարտաւորի ոցէ զհայս Ը ժանր և
ամենածանր վնասուք, այսինքն պէտպէս և անհնարին խռովութիւ-
նի վիճութիւն, գայթակղութեամբ, աքսորանոք, վտարանդութիւն,
տնանկութեամբ, և և արիւն հեղութիւն, միանդամայն ասացից
ընդ առւգանոք մարմնոյ և հոգւոյ, որպէս յայտ է ՚ի վերոյ
գրելոց և ՚ի բազմապատիկ փորձոյ, Ո՞ր թէ հաւան է Ը այս
կեղեցին Քրիստոսի, քաւ Լիցի, բայց բանսարկուք յայլ դէմս
առ աջարկեն զբանն, զի մի ազատ մնասցեն հայք ։ Այլ սակայն
թէ կամիցին հոկառակորդք մեր, թէ չկամիցին, հարկ է ազատ
կացուցանել զհայս յօրինաց աստի ջրախառնութե, ըստ իրաւանց
կանոնական վճռոց և փաստից իւրեանց, զի ընդ որով աստիճա-
նու օրինակ և դիցեն զջրախառնութիւն, հարկին հաստատել
թէ ոչ վերաբերի այն առ հայս, ինայց եթէ ասիցին թէ ջրա-
խառնութեան ըան է արտաքոյ ամենայն սահմանաց օրինաց, և
այսպէս իսպառ ըառնի անուն օրինաց ՚ի նմանէ, և ոչ իւրիք
պարտաւորէ :

Չդիտեմ, զի՞նչ ունին ասել աստուածաբանք խղճի
մտօք, և զի՞ արդ չմրգեցուցանեն առ հայս զվերոյ գրեալ ա-
ռածո և զվճիռ իւրեանց, կամ ասացից զկանոնս իրաւագիտաց,
այլ միայն զայն կանոնս ։ որք խիստ են, և այն ես խստութիւն :

Եւ սակայն մեք քաղցրութեամբ և իրաւամբ կարո-
ղեմք ըստոն հարկանել զօձեաց նոցա, և իրաւունս պահանջել
՚ի նոցանէ միչեւ կամ զանձինս իւրեանց պարտաւոր դատեսցին,
կամ զմեզ ազատ կացուսցին, Խոկ թէ զի՞ արդ, թողեալ զբա-
զում ինչ, զի՞ և եթ օրինակ ՚ի ձեռս արկցուք, և նովին թա-
խանձեսցուք ՚ի յաշորդ :

ՅՕԴ”, է ։

Քաղդատութեամբ օրինաց ջրախառնութեան ՚ի բա-

ժակն , և օրինաց 'ի ջուր ընկղման 'ի մկրտութե՛ , ուսով տպացուցանի , թէ որպէս լուսինք ոչ պահեն զայս . ևս տռաւել իրաւամբ չպահեն հայք դայն :

Արդ լուաք և լսեմք հանապաղ զմիաբան զուշումն աղաղակի ածաբանից , թէ ջուր խառնել հրամանէ եկեղեցւոյ , և թէ սուրբ հարք ևս զնոյն հաստատեցին :

Իուիցուք արդ՝ թէ զի՞նչ և սուրբ հարք աղաղակին իբրև 'ի միոջէ բերանոյ , հրամանէ ասե՞ն ոչ եթէ սոսկ եկեղեցւոյ , այլ հրամանէ Փրկիչին միրոյ , պատուէր է Աւետանական , աւանդութիւն՝ Տէրունական , ազգարարութիւնն է Ռոպելական : զի սուրբ խորհուրդն մկրտութեան Լինի ընկղմամբ 'ի ջուր , և այն երիցս ընկղմամբ ” :

”**Ի** վկայութիւն բերէ աստանօր գրանս Պիղտիոսի պապին , և այլոց հետո , հաստատէ աստուածային և առաքելական աւանդութիւն լինիլ ընկղմամբ մկրտութեան , և ապա առարկէ ի գիմաց հայոց :

”**Ա**րդ արեելեայք առարկեն ընդդէմ լստինոցւոց , թէ այս սովորութիւն ըստ ասելոյ սրբոց հարց՝ ոչ եթէ լոկ իշկեղեցական պատուէր , այլ և Առաքելական և Աւետարանական հրամանէ , 'ի Քնակ հեղինակէ խորհրդոյն աւանդեալ :

Հայտնի է յաւետարանէ , որպէս և ածաբանք գիտեն և վկայեն , զի արեն մեր ընկղմամբ մկրտիցաւ՝ մտանելով 'ի մէջ ջուրց գետոյն , և ելանելով 'ի ջրոյ :

Հայտնի է 'ի գործո առաքելոց , զի Փիլիպպոս զէլելոքինին այսուկէս մկրտեց 'ի ջանելով 'ի ջուրն :

Հայտնի է 'ի թղթոյ սրբոյն Պողսսի , զի թաղելով 'ի մէջ ջուրց մկրտէին հաւատացեալք

Իշ զի՞արդ ապա դուք 'ի բաց թողիք զայս պատուիրան և զայս աւանդ , և այլ աղք առնէք , այսինքն սոսկ հեղմամբ , որ ոչ կարէ առաղան կոչիլ տիրապէս . և ոչ ճըշտիւ մկրտիլ , այսինքն 'ի ջուր միսելով լուսցեալ լինել :

Տագնապին ածաբանք 'ի վերայ այսր բանի , և պէսպէս բանս խօսին , և հուսկ յետոյ միաբանին 'ի մի եղբակացութիւն ,

թէ թէպէտ տէրոնական աւանդութիւն է և առաքելական գործածութիւնն ընկղմելն , բայց ոչ է էական , այլ առանց ընկղմելոյ ևս կարէ լինել ճշմարիտ մկրտութիւն , և վաւերաբար կատարի խորհուրդն :

Եւ արդ՝ դատ արացին նոքին իսկ աջաբանք , և ոչ մեք , թէ ըստ վարդապետութե՛ Հոմելեան սրբոց հարց , և ըստ Ճանաչման ընդ հանուր եկեղեցւոյ , որն յերկուց աստի առաւել պարտաւորէ զհաւատացեալս , ՚ի ջուր ընկղմելով մկրտելն , թէ ՚ի գինի բաժակին դոյզն ինչ ջուր խառնելն :

Չասեն երբէք , և օչ իսկ կարեն ասել . թէ ընկղմամբ մկրտելն նուազ պարտաւորէ . իսկ ջուր խառնելն յաւետ պարտաւորէ . . .

Եթէ չասեն աջաբանք թէ Հաւասարապէս պարտաւորիչ են այս երկու օրէնք , զի՞ն , զի՞նչ պարտաւորեն անձամբ զանձինս , և ոչ ընկղմեն ՚ի մկրտութեան , իսկ զհայս կամին պարտաւորել առ ջրախառնութիւն բաժակի :

Ապա եթէ ընդունին և ասեն , թէ երկոքին հաւասարապէս ոչ են պարտաւորիչ (Ակոհք ըստ ոքբաց հարակատառեւ գուն ընկղման , գոնէ միանգամ ընկղմելուն , ու Տարեառան իունիւ ու հունիւ միջամատիւն ,) ապա ոչ են իրաւունք , զի ինքեանք արտաքս հանցեն զանձինս ՚ի պարտաւորութենէ , և զհայս արկցեն ընդ պարտաւորութիւն , յուշ լիցի բանն թէ սիրեսցես զընկեր քո իրեւ զանձն քո :

Եւ սակայն տեսանեմք , զի աջաբանք չկամին զայսպիսի բաղդատութիւն առնել , աղաղակեն թէ հրաման է եկեղեցւոյ խառնել զջուր . ուստի և հայք մահու չափ պարտաւորին այսպէս առնել :

Առը հարք և քահանայապետք և ժողովք աղաղակեն , թէ Առաքելական պատուիրան է , և ՚Քրիստոսական աւանդութիւն է , ընկղմամբ լիցի մկրտութիւն , ուրեմն այս յաւետ և մահու չափ պարտաւորէ :

Այս բանք եթէ ճանր թուեցին ՚ի լսելիս աջա-

բանից, մեղ չէ ինչ, մանաւանդ զի մեք ոչ խօսիմք իրը զայլս
թշնամալից բանիւք և նախատանօք, որովհու օրէնէ առնել՝ որոց
խօսին ընդդէմ հայոց, մեք զմեր իրաւունս սիրով և խաղաղութեր
կամիմք յառաջ տանել, և ոչ կարօտիմք սաստկութեր բանից :

Եթէ ինքեանք Հատ ուկտիր ասացուածովք սուրբ
հարց, զորս յինքեանս ձգեն, մանաւանդ որբոյն Ախպլիանոսի,
ոչ գիտեմ որով խղճմտանօք բանան զբերանս իւրեանց ընդդէմ
մեր, մեք մեծամեծ վկայութեամք և բիւրաւոր վկայութեամք
որբոց հարց, սկսեալ յաւետարանչաց և յառաքելոց, և ՚ի սըյն
Պահոնէսիոսէ Արիսպազացւոյ, մինչեւ ցուրբըն Թռովմա Ագու-
ինացի, ոչ զմերս բանամք բերան, այլ զայլոցն փակեմք, ոչ
մեք ինչ ՚ի խնդիր վկայութեանց լինելով, այլ ՚ի գիրս աշխա-
տասէր ածարանից յղելով, միով բանիւ ասացից, թեակեց մեզ
ունիմք զդասս ամ ածարանից. և առաջնորդ զնոյն ինքն զեկե-
ղեցին հռովմէական, և զոր ժողովս, որք առ հասարակ լոկ
կարծեօք իմն համարեցան, թէ զուցէ, Պարիսոս ջուր խառ-
նեալ իցէ, և ըստ այնմ թէապէս մարթ իցէ կոչել տէրունական
կամ առաքելական աւանդութիւն : Բայց ասեն ոչ է և ոչ առի
հրաման տէրունական :

Եւ ընդ հակառակն բացարձակ վճռեն, թէ ընկղ-
մտմք մլրտելնէ տիրապէս տէրունական և առաքելովան աւան-
դութիւն՝ թողում ասել ըստ նախնեաց, թէ հրամանէ և պատ-
ուէր տէրունական և աւետարանական + Կանջ կշռեան անա-
շուռ և արդարակորավ իմաստիւք զիւրաքանչիւր կողմն ” :

Զկնի ՚ի մէջ բերէ զբանս Տուանելոյ որ առէ թէ : Ճշմարիտ է զի
նախնիք համարեցան, թէ ծէսն երիցս ընկղման յառաքելակտն աւանդութենէ և
եղետը, բայց ոչ ոք ասաց, թէ այն այնպէս հարկաւոր իցէ ՚ի պատուիրանէն
Քրիստոսի, մինչեւ առանց այնքան անկատեր լինել մլրութեան ” և այլն, և ապա առէ

“Ասմակար մտօք գրեմք և մեք այսը մեկնութեան,
ապա թէ ոչ ընդդէմ հրամանի լինելին խօսեցեալ բանքն ածա-
րանից : Արեւնսպատակ չէ այդ, այլ թէ որ հարք վասն ընկղ-

մամք մլրտելոյ եթէ երիցս և եթէ միանդամ ընկղմեով՝ ասա-

ցեալե՞ն ըստ վկայելոյ ածարանից թէ պատուիրան քը իստոսի է, որպիսի և պատուիրան և կամիս իման խոկ վասն սուրբ բաժակին չեն ասացեալ թէ քը իստոս պատուիրեաց ջուր խառնել, այլ միայն գինի դնել, որպէս և նոյն ածարանք վկայեն :

Արդ որովհետեւ և ինքեանք բանիւ սր հարց ձեռնարկեմք . թէ հայելով ի բանս սուրբ հարց, առաւել ճանր է զանց առնել զընկղմումն ի մլրտութեան, քան զջու ըն ի բաժակն ”:

Եւ ապա ՚ի մէջ բերէ զմեկնութիւն սրբոյն թուվմայի, որ ՚ի վերայ բանից Պեղադիսի պատին առէ այսովէս :

“Ասելի է թէ Պեղադիս պասն իմանայ զերիցս ընկղմաւմն լինել ՚ի պատուիրանէն քը իստոսի ՝ յիւրում նմանոջ այսինքն յայսմ զի քը պատուիրեաց մլրտել յանուն Հօր ՝ և Որդւոյ և Հոգւոյն որբոյ, բաց սակայն ոչ է նման բան յաղագս տեսակին կամ ձեռյն, և յաղագս զործածութեան նիւթոյն” :

Այսու կամի տօնել սուրբն թուվմայ, թէ յաւետարանին միայն զւեալ կայ, մլրտեցէք յանուն եայլն, և ոչ երիցս ընկղմեցէք, Որում պատասխանի առնէ :

“Եւ զի յայս բանք երեք անձինք յիշատակին, առաքեալք ևս այսու ձեռով մլրտէին, և ՚ի խորհուրդ երից անձանց երիցս ընկղմէին, և այս կամ այլով ըացայտաց աղդարարութե փրկչին, կամ զօրութեամբ իմանալով զաղդարարութիւն հրամանաց Տեառն յայնմ բանի իբրև ՚ի նմանոջ, և կամ յայտ է թէ առաքեալք և միայն քաջ հասու եղեն մտաց բանին Տեառն, այլ և ներգործութե ուսան ՚ի նմանէ զեղանակ մլրտութե, և զի երիցս ընկղմէին, յայտ է թէ այնպէս ուսեալ էին ՚ի քը իստոսէ, Ուստի և ՚ի կանոնս իւրեանց զոր եղին ընդդէմ աղանդաւորաց, ըստ որում յիշէ սրն թուվմաս, ոչ միայն զանուն երից անձանց յիշել հրամայեցին, այլ և ըստ թուոյ երից անձանց երիցս ընկղմէլ :

Այլ առդ զի՞նչ առես, եթէ երանելին Պեղադիս պատու պատու որպէս պատուիրան Տեառն համարի զընկղմումն, որպիսի պատուիրան և իցէ, նոյնուկիսի ինչ ել ասացեալ և վասն ջրոյ,

հրչափ արդեօք ևս քանի զես սաստկացուցանել ունեին ածառանք զբանս իւրեանց ընդդեմ հարց, կարծեմ թէ և չտոյին մեղքերան իսկ բանալ, այլ պնդելոց էին, թէ «Քրիստոսի սպառուիլանե», եթէ «Անդորժութեամբ», և եթէ զօրութեամբ, եթէ յինքեան, և եթէ ՚ի նմանոջ, եթէ բանիւ իւրով, և եթէ բանիւ նշանակեալ իրի, զի ջուր խառնեսցի :

Օ ի եթէ առանց ունելոյ զայսպիսի վկայութի, բռնի յինքեանս կօրդեն զբանս ոմանց ՚ի հարց և ան արկանեն ՚ի հայս երկրայական կարծեօք, թէ «Քրիստոս ջուր խառնեալ իցէ, և այնպէս թախանձեն», թէ պարտէ ձեզ նման «Քրիստոսի առնել, զինչ ոչ ունեին առնել, եթէ զայնպիսի զօրաւոր վկայութի գտանէին վասն այսր բանի, որպէս գտանեն վասն ընկղման, որպիսի ան նահանջելի օրինակաւ գտանելոց էին ՚ի վերայ աղդիս, թէ հարկ է ձեզ ջրախառն առնել, ոչ լինի այլազգ” ևանտարապէս իսօսէին :

Եթւ այսչափ ստիպանաց պատճառ զինչ արդեօք, ոչ այլ պատճառ ուներ լինել, եթէ ոչ այս, զի նոյն ածարանք՝ որք սովորեն ջրախառն առնել, եթէ չունեին զայսպիսի սովորութիւն, ոչ այնպէս իսօսէին :

Եթւ ընդ հակառակն՝ ահաւաղիկ աչօք բացօք տեսանեն զբանս սրց հարց, եթէ Պեղագիոսի, եթէ Ասկերերանի, և եթէ այլոց, և որք յաւետ ինքեանց ժանօթ էին քան մեզ, զի պատուիրան «Քրիստոսի կոչեն, և առաքելական աւանդ լինել սինդեն զընկղմամբ մերտելն :

Եթւ զի՞ է, զի ածարանք այսր անդր բերին, թէ այսպէս կամայնապէս պարտէ իմանալ զբանս նոցա, զի՞նչ է այսմ պատճառ, ոչ այլ ինչ, բոյց եթէ այն, զի տեսանեն զայն հրաման ոչ պահեալ ճշտիւ և կամ բնաւ իսկ ՚ի մեջ իւրեանց, զի եթէ ճշտիւ պահէին և յայժմու ժամանակիւ և ըստ հին սովորութեան ընթանային, ոչ այնպէս իսօսէին :

Եթւ մի թէ իրաւունք իցեն այսր, զի ը յարմարութե արարուածոյն իւրեանց յօրինելով զբանն, որպէս կամին, այնպէս մեկնեսցեն զբանս հարց, առ զերծուցանելոյ զանձինս

՚ի մեղադրութենէ : Խսկ զոր՝ առ հայս վերաբերին բանք , ոչ
նոյնալիս , այլ յաւետ ընդ հակառակն , բարդելով յիւրեանց
ան համար մեղադրանս և կշտամբանս : Այս երկդիմի ընթացք
Հաճոյական մեկնութեամբ , թէ և ճշմարտութեան նոցա ՚ի դէմ
երեեսցի , այլ ճշմարտասիրութեան տարադէսլ :

Եւ արդարեւ եթէ զայլոց ազգաց ևս զինչ սլիսութիւ
և զհանգամանս ՚ի միտ առնուին՝ որպէս զիւրեանցն , և փոր-
ձանաւորաց օգնական լինել գիտէին . զայսպիսի դատաստան
չառնէին երբէք , ոչ ըստ աչս դատէին այլ ուղիղ դատաստան
առնէին , ինքեանք զանձինս և եթ հոգան , և յայն և եթ միտ
զնեն , զի մարթասցին աղատ լինել ՚ի պարտաւորութէ և ՚ի բե-
ռանց խղճի մտաց : Խսկ յայլոց վերայ բառնան բեռինս դժուա-
րակիրս եայլն , չասացից թէ անբերելիս :

Եւ մւր պահիցի բան Առաքելոյն , մի դնել լուծս
՚ի վերայ աշակերտելոց , զոր ոչ մեք և ոչ հարքի մեր կարա-
ցին բառնալ . . . Համառօտ պատասխանին մեր այս է , լատին
ածաբանք կամ հարկին ընդունիլ , թէ պարտ է ինքեանց պա-
հել զջերունական աւանդութիւն , և ըստ հին գործածութե
առաքելոց և ԵՀ հանուր եկեղեցւոյ ընկղմամբ մկրտել և մկր-
տիլ , և կամ թէ չկամին ընդունիլ , պարտին լոել և չքրթմն-
ջել ընդդէմ հայոց , թէ ընդդէմ ոչ պահեն հայք զայժմու գոր-
ծածութիւն եկեղեցւոյ , որ ոչ խառնեն ջուր , որ և ոչ յայլս
մի օրինակ պահի :

Ապա եթէ այլ ազգ ինչ խորհին . գիտասցեն , զի զոր
ինչ խօսին ինքեանք առ հայս ՚ի թախանձել . զջրախառնութի ,
հայք հաղարապատիկ աւելի կարեն խօսիլ առ նոսա ՚ի թա-
խանձել , որպէս և խօսեալ իսկ են բազումք ՚ի յոյն հեղինա-
կաց բանիւ և գրով :

Եւ զի հայք երկիւղած գոլով չասեն ընդդէմ այ-
լոց , մանաւանդ թէ սուրբ և գովելի հարմարին զարարուածս
լստինացւոց , պարտէ և նոցա չասել ինչ ընդդէմ հայոց , այլ
յաւետ գովելի և սուրբ համարել զարարուածս նոցա իբրև

Համաձայն աւետարանին և տէրունական աւանդութեան :

Եւ արդարեւ գովիճին , բայց որպէս պյլուր յուշ արարի կարծեմ 'ի յունաց ոմանց ըարի օրինակ են առետլ , որք 'ի բազում ժամանակո լլկէին զհայս , և 'ի դադարել նոցա , սոքա 'ի նոյն եղեն ձեռնամուխ :

Եւ զոր օրինակ հոռոմք զամ դործս հայոց մոլորութի ձայնեին , նա և զուանդեալսն 'ի պարիստոսէ , նոյնպէս և ոմանք 'ի լատինացւոց 'ի նոյն ոճ կերպարանել ախորժեցին զբանս իւրեանց , և այն ես 'ի մէջ բարեպաշտ ածարանից , յորոց մի եղեւ և մեծն ֆուռնել , որ 'ի հատ" ին . երես 185 , մոլորութի կոչէ զանապակ բաժակին հայոց այսպէս ասելով 'ի վրա բաժակին :

Երկու մոլորութիւնք են ծագէ 'ի ծագ դէմ ընդդէմ իրերաց : Առաջինն այնոցիկ , որք զջուրն ամիւ 'ի բաց զնեն 'ի պատարագի : Խոկ միւսն հնոց Վանիքեցւոց , որք սոսկ ջուր 'ի բաժակն օրհնէին" : Այն օրինակ խօսին և այլք ոչ սակաւք :

Եւ արդ դատ արասցեն ածարանք և ֆուռնել ընդնոսա , մի թէ հայք ոչ կարէ իննովին ձեռվ զնոյն ըստատանս շրջել 'ի վերայ ասովին այսպէս :

Երկու մոլուռութիւնք են 'ի վերայ մկրտութեան , ոչ ինչ ընդ հատ յիրերաց : Առաջինն (Հռ Պէտառ ւես առեւ) այնոցիկ որք իսպառ 'ի բաց զնեն զընկղմումն 'ի ջաւը : (սրու այծնու լատինէ ,) Խոկ միւսն այնոցիկ 'որ փոխանակ երիցս ընկղմոյ 'միանգամ ընկղմէին , (սրու անան 'ի հեն լատինաց-աց ,) և 'ովինանք և աղանդաւորք երեւեալք յաւուրս առաքելոց :

Այս բանք հարկաւ շրջին 'ի վերայ ֆուռնելի : Եթէ նա նկատմամբ հայոց խօսիցի :

Բայց տես , զի՞նչ պիսի հնարս գտեալ են ածարանք , ինքեանք համարձակ զայլոց հնաւանդ սովորութիս մոլորութի կոչեն : Խոկ թէ յայլոց լու իցին , զի զայսպիսի արատ ինչ դնեն սովորութեանց լատինացւոց , թէպէտ և 'ի վերջոյ լուծելոյ , զնոյն խոկ արտադրութիւն նոցա 'նոր իմն մոլորութիւն առ ձայնեն : Աւստի Անտոյին բարոյական յղ" ծիսից , Պէլ" , ին .

յօդ”, Բարեկամութեան 5810, յետ լինքայելոյ յունաց պէսպէս մալորութիւնս, յարե զկնի :

Խսի այլ մալորութիք նոցա յասմ կայանան զի աջեցիւնաս, լատին եկեղեցւոյ, որք միանգամ չիցեն համաձայն յունականին՝ անդոսնեն

Եւ ՚ի մէջ քերե պէսպէս օրինակս, յարոց մէ և դանցառութիւն երիցս ընկղման :

Վերեթի լստ սորա խսկապէս մալորին յոյնք յանդոսնեն զֆիշիբինոյ լատինացւոց, ընդ որս և սոսկ զհեղմամբ մկրտելի, որ յետոյ առ հարկի մուծու : Վաղ ըստ նորին բանին (զարաւրութեան առեւ) մոլորին և լատին ածարեանք, որ մոլորութիւնուն և անգոսնեն և թշնամանեն զհաւանդ Տիշիբլինայս հայոց և այլոց արդաց, յորս միանգամ տարաձայն գտանեն ՚ի սովորութենէ իւրեանց :

Եւ եթէ անգոսնեն յունաց զֆիշիբլինայս լատինաց, յատելութենէ յառաջ գայ, ուստի՝ ասլա յառաջ գայ անգոսնեն լատին ածարանից զհին Տիշիբլինոյ, եթէ հայոց և եթէ այլոց, ոչ տալաքէն և այն յատելութենէ է, և կամ ՚ի տարադեպ նախանձայուզութենէ, և յաւէտ ևս յանտեղիւթիւն և ՚ի նախապաշարեալ մտաց, եթև զի յիւրեանց սովորութիւն և եթ հային, և ՚ի նոյն հաւանին, և որ ինչ անհամաձայն նմին երեկ՝ մոլորութիւն առ ճայնեն”, և այլն :

Բազոց արդ թէպէտ չեր մեղ հաճոյ յարմարել զոյս առ այնպիսի երեկի և մեծանուն ածարանս, որպիսի ոք Տուռնենին է և նմանիք նոր: Բազոց զինչ, ինքն խսկ իրն այնպէս ՚ի դէսլ գայ, Վասն զի ինքեանք նստեալ հանդսութեամբ յաշխանի իւրեանց, մանաւանդ թէ ՚ի սենեկի իւրեանց հանգարտ կալու, երբ համարձակ գրիչ շարժեն ՚ի վերայ հեռաւոր աղգաց, հարկաւ, անտեղետի գտանին, և ընդ նմին անտեղեկութեամբ զամ Հին և բարի սովորութիւն այլոց՝ մոլորութիւն արձանադրեն :

Վայլ այսու ամիւ երբ շօշափէ ոք զսովորութիւնս նոցա, յայնժամ հարկին առ ՚ի սլաշտպանելոյ զիւրեանցն, նա և

դայլոցն ու զիղ Համբարել, ապա թէ ոչ՝ որպէս փոխել զայլս նոյնալէս և փոխին: Այլք ոչ փոխել յօժարիմք, և ոչ Հայել ՚ի սովորութեւնս նոցա, քան լիցե, այլ յաւետ յարգեմք ամենայն իրօք:

Եւ սակայն Համբարձակ առեմ, թէ հայրց անջուր առնելն սոսկ բերով որթոյ Համբարյն աւետարանին՝ առաւել օրինաւոր է, քան թէ առանց ընկղման մկրտելն նոցա, որ անհամբարյն է աւետարանին, որպէս և ինքեանք խոստովանին: Անսաւանդ զի զանապակ գինւով պատարաշելն ոչ են հերիտիկոսք հնարեալ, իսկ զանցառութիւն երիցս ընկղման, որպէս և ինքեանք վկայեն և հաստատեն, ՚ի սկզբան հերիտիկոսք վեր երե եցուցին, զոր և բազում հարք մերժեցին, մանաւանդ թէ և առաքեալքն իսկ՝ ըստ սրբոյն ֆառվայի:

Եւ այս այնչափ ճշմարիտ է, զի ինքեանք ոչ այլ աղդ կարեն ջատագովել զարարուած իւրեանց, բայց միայն ասելով, թէ մերս սովորութիւնն ոչ վկաս է խորհրդոյն. . . .

Եթէ այսպէս է, զի՞ արդ ապա գովելի լիցե սովորութիւն իւրեանց և Հայոցն ոչ, այնպէս զի արարուած իւրեանց ուղիղ Համբարեսցի, և Հայոցն ոչ, իւրեանցն բարի գատեսցի, և Հայոցն ոչ բարի. . . .

Ոչ արդեօք զարմասցին լսողք բանիցս, ոչ ապաքէն նոյն ածարանք են՝ որք ստիպեն բազմօք ասելով, թէ որովհետեւ ջուր խառնելն ՚ի բաժակ զխորհրդաւոր նշանակութիւն ունի գիտեալ յեկեղեցւոյ, զանց առնելն մեղք է: Եւ զի՞ է, զի յորժամ խօսին ՚ի վերոյ ընկղման՝ յայն կողմն գարձուցանեն զղեկ բանիցն, և չասեն թէ մեղք է զանց առնելն զընկղմումն, զի ունի զհրաշափառ խորհուրդ՝ գիտեալ յառաքելոց և ՚ի հետեղաց նոցա ՚ի սրբոց հարց առ հասարակ և ՚ի բովանդակ եկեղեցւոյ:

Օ ինչ է պատճառն, զի ՚ի բաց թողուն զծանրախորհուրդ արարողութիւն վասն իւրեանց չիցէ մեղք, մանաւանդ թէ և օրինաւոր հաչակեսցի, իսկ զթեթեանշան արարողութիւն

չառնուն յանձն՝ ծանր մեղք հարմարեցի վասն այլոց՝ մանաւանդ թէ իբրև անթողլի յանցանք համբաւեցի, գրօշակ հերիտիկոսութեան կարծեցի, և ընդ գաւազանաւ բարկութեայնքան ածարան անկցի”:

Զկի՞ի այսոցիկ պատմէ զսկզբանաւորութիւն երիցս “ընկղմամբ մկրտութեան, և ցուցանէ թէ զի՞ արդ նախնի սուրբ հարք գզուշութեամբ պահեցին զայս արարողութիւն, մինչ զրեթէ ոչ վաւեր համարենին զառանց ընկղման մկրտութիւն, և թէ հրդէս անցմամբ ժամանակաց առ սակաւ սակաւ մուծաւ կը լատինացիս, և հաստատեցաւ իսկ”:

“Պամնաւոր Հրամանաւ (ասէ) և հաճութեամբ սրբոյ գտհին չէ լեալ, այլ եղեալ գործն ուկամայ լուսութեամբ է զօրոցեալ և հաստատեալ, և այն զի եթէ չլուէր ո՛չ գահն, ո՛չ բարի լիներ, որպէս և յայտ յայլոց իրաց, որով ո՛չ կամեցաւ լուէլ ’ի սկզբան առ Երւրոպացիս, և յետոյ ստրջացաւ”:

Եւ կի վախճանի առ:

“Եւ արդ՝ եթէ հարկն տայ լուել, ռամլօրէն ասացից, աչք խփել այսպիսի ծանր իրողութե, կարէ աչք խփել եմիւսումն այն թեթեագունի՝ որ առ հայս հայի, և այն անհամատ տռաւելութե, որպէս ունիս իմանալ ’ինախագրելոցու Եւ յաւէտ ես, զի հայք ո՛չ եթէ նորոգ հնարեալ են . . . զանապակ գինւով պատարագելն, որպէս ’ի դիպուածս Երւրոպացւոց, այլ չեն կամեցեալ փոխել զհին աւանդն ո՛չ ուսառչին, և նոր սովորութիւն մուժանել ’ի մէջ իւրեանց”:

Եւ արդ եթէ արարուածոյ այլոց թոյլատրութիւն է եղեալ, որով օրինակաւ և իցէ, կարէ և հայոցն լինել նոյնապէս Ապա եթէ միում թոյլատրութի լիցի կամ լոռութի, և միւսումն ոչ, վեր կի վայր շրջի ամինչ և տասլալին ամ իրաւունք”:

Երկար խօսի կի վերայ այսր նիւթոյ, և յամնայնի զայս պեղէ, թէ չէ արժան ստեղիլ զհոյս ’ի յանձնառութիւն ջրախառն պատարագելոյ:

ԽԱՂԻՐ ԽՆՆ ԵՐՄՐԴ
ՅԱՂԱԳՄ ՎԵՐՋԻՆ ՕՏՄԱՆ :

ՅՈՒ", Ա.

"Արդեօք ընդունին հայք զվերջին օծումն, և թէ
ըստ ինքեան հարկաւոր իցէ գործածութիւն սորին, թէ ոչ :

Ամենայն եկեղեցիք ուղղափառաց Քրիստոնէից ըն-
դունին, թէ եօթն խորհուրդ եկեղեցւոյ են սահմանեալ
ի Քրիստոնէ, այսինքն են, ԱԿԻՐԱԿՈՒԹԻՒՆ, ՊՐՈՍՄ, ՀԱՂՈՐ-
ԴՈՒԹԻ, Ապաշխարութի, Ապրէ, Պատկ, և ՕՃՈՒՄՆ ՀԻւանդաց :

Ո այսոսիկ խորհուրդքս ամբողջ ընդունի և եկե-
ղեցի հայոց, և ըստ պատշաճի կատարէ, զմկրտութիւն, զդը-
բոշմ, զկարդ, առանց կըկնելոյ, որպէս և ամ եկեղեցիք :

Խսկ զայլմն կըկնելով ըստ հարկի և ըստ ժամանակի,
զայսցանէ չիք տարակոյս, այլ մնայ մեզ խօսիլ 'ի վերայ եօթն-
երորդ խորհրդոյն, որ է օծումն հիւանդաց, վերջին օծումն
կոչեցեալ :

"Ի վերայ այսը խորհրդոյ երկու ինչ է նկատելի, այս-
ինքն վարդապետութիւն և գործածութիւն :

Ա արդապետութիւն վերաբերի 'ի ճանաչել և յըն-
դունել թէ մի է և այս 'ի սուրբ խորհրդոց եկեղեցւոյ : Խսկ
գործածութիւն հայի 'ի գործնական կիրառութի, կամ 'ի կա-
տարել զայն ներդորժութեամբ :

(Օրինակ իմն 'ի վերայ յարդութեան պատկերաց
երկու ինչ նկատեմք, մինն է ըան վարդապետութեան, որով
ընդունիմք թէ արժան է յարդել զպատկերս Քրիստոնի և
որբոց" և այլն :

“Եւ միւն դործածութիւն , որով ներդումութիւն յարդիմք զալատկելը :

Պ ստ առաջնոյն , եթէ ոք ուրասցի ոյ յարդութիւն ուատկերաց , կամ ասասցի թէ , չէ արժան յարդել զալատկելու սրց , մոլորի ընդդէմ վարդապետութեան եկեղեցւոյ , և ոչ լինի հերիտիկոս :

Խսկ ըստ երկրորդին , եթէ ոք վասն իրեք պատճառի չունիցի գործածութիւն պատկերաց (առանց Թէծնւու) ոչ մոլորի այսու և ոչ լինի հերիտիկոս : Եւ ահա սոյն օրինակ նկատի վերջին օժման ըստ վարդապետութե և ըստ դործածութե :

Պ ստ առաջնոյն մտածեալ՝ ընդունիմք և ասեմք թէ այս օժումնէ խորհուրդ եկեղեցւոյ և այս վարդապետութիւն վերաբերի առ Հաւատս , մինչև եթէ իշխեսցէ ոք ընդդէմ կալ և ասել , թէ օժումն հիւանդաց ոչ է խորհուրդ . . . ընդ նզովիւք է :

Պ ստ երկրորդին նկատեալ այսինքն ընդ գործածութեան երեք ինչ է դիտելի :

“Եալս՝ թէ ոյք իցին պաշտօնեայ , և ոյք ենթակայ այսմ խորհրդոյ :

Երկրորդ՝ թէ մըափ օդտակար է :

Երբորդ՝ արդեօք հարկաւոր իցէ թէ ոչ :

Զաւաջնոյն և զերկորորդէն մի ըստ մոռջէ խօսեցեալ , ապա յորէ :

“Եւ ասն երրորդին , ֆր թէ արդեօք ըստ ինքեան հարկաւոր իցէ մտակարարել ամ ումեք զայս խորհուրդ , միաբան հաստատեն ամ աջարանք , թէ ոչ է հարկաւոր , ոչ յածային պատւիրանաց : և ոչ յեկեղեցական իրաւանց , ուստի և ոչ սպարտաւորէ ասեն զամենեւսին հարկաւոր ‘ի կիր առնուլ զայս’” :

Յետոյ զբանս աստուածաբանից ըերեւ ՚ի վկայութիւն , նոյնպէս և գոլուարտոյ , որ ասէ :

*Եւ ոչ ևս երեւի հարկաւոր հարկաւորութիւն աջային կամ մարդկային պատւիրանի , որ լոյէ ըստ ինքեան ուղղակի պարտաւորիչ Եւ այս է հաստըակաղոյն վարդապետութիւն ըստ

Հեղինակիս (այսինքն սբուն Թուանակ) Պատմական Ալիք առ, Պատմական, թէ այս խորհուրդ ոչ է հարկաւոր, այլ օդտակար և եթ:

“Հայսմանէ յայտ է, զի այս խորհուրդ օծման ըստն քեան և հարկաւ ոչ պարտաւոր է զմարդ՝ առ ՚իընդունիլ յինքն:

Ասացի ըստ ինքեան, վասն զի ըստ պատահման կարէ պարտաւորել, զոր երբ ուրեք սովորութիւն իցէ մատակարարել ամ հիւանդաց դայս խորհուրդ :

Եթ յայնժամ հիւանդոք՝ տեսանելով զինքն մերձ ՚ի գուռն մահու և գիտելով զի խորհուրդ վերջին օծման, և կարելով դիւրաւ ընդունիլ զայն, այսու ամիւ արհամարեսցէ բանիւ կամ գործով, յայտ է թէ ժանր մեղանչէ : Խոկ ուր ոյլ ինչ ներհակ առ իթ ստիպեսցէ, կամ չկայց է սովորութիւ վասն ակամայ գոլոյն չլինի մեղք ինչ :

Օսր ինչ ասացաք վերագոյնդ, և զոր ունիմք ասել ՚ի ըստորեւ, հաւաստի ունիմք առնել, թէ հայք Ճշմարտապէս ընդունին և յարգեն զայս խորհուրդ օծման հիւանդաց, կամ ասացից զվարդապետութիւն նորուն, և ըստ այսմ չունին ինչ պակասութիւն :

Խայց ստկայն որպէս յայտ է ամենեցուն, չեք ’ի մէջ հայոց գործածութիւն այսը խորհրդոյ, իսկ թէ զի արդ, և էր վասն, չէ մարթ ստոյդ ասելի ինչ, մանաւանդ զի և ’ի հին մաշտոցս չեք յիշատակութիւն զայսմանէ : Խոկ այն որ գտանի ՚ի մաշտոցս Վիլիկեցւոց՝ ՚ի վերջոյ է առեւտը յօրինակս ինչ ըստ յունականին, և յօրինակս ինչ ըստ լատինականին, որովէս յայտ է որոց բաղդատել կամիցին” :

Յետոյ քննեաւ զգերս հայոց, ցուցանէ թէ չեղեւ երբէք հաստատեալ ՚ի հայս, և ապա յարէ :

“Խոկ թէ ընդէր, և զիարդ չեղեւ ’ի հայս հաստատուն սովորութիւն կիրառութեան սորին, և ոչ իսկ մարթ եղեւ հաստատել, չունիմք ասել հաւաստեաւ զպատճառն, բայց միոյն ընդհանրապէս զայս գիտեմք, զի երբ միանդամ չեմուտ հաստատութեամք ’ի մէջ ազգին, ոչ արմատացաւ երբէք : Այլ

՚ի վերայ այսը ամի՞ Հայելով յանցս՝ որք անցին՝ ի մեջ այլոց ազգաց, Նկատմամբ այդը բանի, Երկու գլխաւոր սկստճառս տեսանեմք :

Առաջինն է այս, զի անկարգութիք որք մտին յան, զգոյշ կերառողս վերջին օժման՝ խորշեցուցին զհայս ՚ի նմին սովորութենէ : «Քանդի ՚ի յոյնս եմուտ յաճախութիւն այնը օժման, եթէ առ հիւանդս, եթէ առ առողջս իբրև վճար ապաշխարութե, մինչեւ ՚ի սմանէ ոչ զնէին ապաշխարանս ՚ի վը խոստովանելոց, ոյլ միայն իւղով օժանէին ” :

Յետոյ դբանս Տաթեացւոյն և Ջահակեցւոյն ըերեւ ՚ի վկայութիւն, և յաւելու :


«Օ այսոսիկ ասելով սոցա՝ նախ կամին ցուցանել, որովհետեւ ՚ի մեջ չարեաց փոքրագոյնն է ընտրելի, առաջնորդք փոքը չար տեսանելով զղանցառութիւն օժաման հիւանդաց, քան զղանցառութիւն ապաշխարութեան, կամեցեալ են զանց առնել զնովաւ, կամ աչք խփել, որպէս զի մի զանց լիցե խորհուրդն ապաշխարութեան :

Երկրորդ ։ կամին ցուցանել, որովհետեւ մին լինելը խափան լինելութե միւսոյն, ընդ հակառակն թոյլ ետուն, զի խափանին խափանեալ մնացէ : Ա տան զի լովձոյ տքաբանից ՚ի զուգընթանալ երկուց որոշեալ հրամանաց, մեծն յաւետ պահելի է քան զփոքըն : Եւ չէ մարթ առ պահելոյ զփոքըն՝ զմեծաւն զանց առնել կամ առիթ տալ զանցառութեան : Եւ զի հրաման ապաշխարութեանն է մեծ, իսկ օժումն հիւանդաց է սոսկ յորդորական ազդարարութիւն, և ոչ ճիշդ հրաման, ոչ տքային և ոչ եկեղեցական, ըստ նախակարգեալ ածարանից, առաւել ընտրելի դասեալ են այն առաջնորդք, զի ածային հրաման պահեսցի անխափան, քան թէ ՚ի սկստճառս կատարման վերջին օժման՝ ածային հրամանն վտանգեացի :

Երրորդ՝ ըստ նմին չափու կամին ցուցանել զառաւելութիւն հարկաւորութեան ։ քան օդտակարութե, Արդ խորհուրդն ապաշխարութեան հարկաւոր է չափահաս մեղուցելոց

Հարկաւորութիւն միջնորդի : ըստ նախայիշատակեալ ածաբանից,
սմին իրի այն առաջնորդք առաւել փոյթ տարեալ են վասն
հարկաւորին, քան օդտակարին ՚ի խափան լինելոյ միոյ միւսոյն :

Պահեմ զի վայրապար պատճառ թուին այսոքեկ
՚ի լսելիս ածաբանից : բայց սակայն եթէ ՚ի միտ առցեն զմիժտա-
գոյն չարն : յորմէ խուսափեցին հայք, և ոչ կարացին խուսա-
փել բազումք յարեմտեայց, յոյիժամ աղդու պատճառս տե-
սանեն : Ա ամս զի ՚ի լատինս եմուտ այսպիսի անկարգութիւն
ինչ, ոչ միայն դադարեաց առ բազումս ՚ի նոցանէ ներգործու-
թիւն այնը՝ որպէս առ հայս (ոչ ուշութանիւն ու ունանին, և
մասն ՚ի գործածութենէ ուսկանին) այլ և վարդապետութիւն գըշ-
խովին մեժեցաւ, որ է չար և հերթիւնական :

Այդպիսի եղե առ Առաքերականս և առ Առաջունա-
կանս, և առ այլս բազումս որքիսպա մերժեցին զայս խորհուրդ
և պնդեցին անզգամութեամբ թէ այդ է կեղծիք մարդկային ;
ԽոկԱ ալդէի աղանդաւորք ինէ և ընդունելին լինել խորհուրդ
բայց ծաղը առնէին զգործածութի, և մերժեին, և այս յայն
սական, զի մտեալ էր առ ոմանս ՚ի քահանապից՝  ՍԻՄՈՆԱԿԱ-
ՆՈՒԹԻՒՆ այսը խորհրդոյ, մինչ չառնուին յանձն առանց գըշ-
խամոյ տալ զվերջին օծումն, որով և աղքատք զուրկ մնային :

Յետ փոքր ինչ բանից տու :

“Արդ որչափ փոքր էր առ թթ արեւ մտեայց որ տուտւ
աղանդաւորաց ՚ի խորշիւ յայսմ խորհրդոյ, մինչ հուսկ յետոյ
մոլորիւ ՚ի վարդապետութէ, և ասել թէ վերջին, օծումն ոչ է
խորհուրդ եկեղեցւոյ, և այնչափ մեծէր առիթն՝ զոր ետուն
յոյնք և այլք առ հայս՝ վահնդելով զխորհուրդ ասլաշխա-
րութեան ՚ի պատճառս վերջին օծման :

Այլ այսու ամիւ հայք ոչ մոլորեցան ելքէք ՚ի վար-
դապետութիւնէ՝ այլ միայն ՚ի գործածութենէ պակասեցան :
Խոկ եթէ այս պատճառ ոչ համարեսցի բաւական, կայ և միւս
այլ՝ զոր տեսցես յառաջիկայդ” :

Զինի ՚ի մէջ ըելէ զիւկըրդ պատճառն ոչ հաստատելոյ ՚ի հայս

վերջին օճման, աւարտէ և դպյու յօդուած այսպէս :

“**Ի** դնիլ այսը ամի զոր ասացաք՝ անպարտ մնայ աղջն
’ի մնջաց՝ ի կարելն մատակարարել զխորհուրդ վերջին օճման,
վասն որոյ և չէր արժան նախատակոծ առնել զաղգն, որպէս
առնեն ոմանք՝ ի Հակառակորդաց, և կամ ընդ խոճիւ արկա-
նել զքահանայս Հայոց, որպէս առնեն ոմանք՝ ի միսինարաց :
Ապա թէ ոչ և հայք ունին ոչ թեթև իրա ՚ի ձեռին, ՚ի վերայ
շրջել այնոցին՝ յորոց Հարստահարելին, և թէ զի արդ՝ սա-
կառուք տեսցուք” :

ՅՕԴ Ա.

“**Ո**չէ զանցառութիւն վերջին օճման՝ ոչ այնչափ
գայթակղեցուցանել կարէ ՚որչափ գայթակղեցուցանէ զանցառ-
ութիւն տալոյ մանկանց զդրոշմ և զհաղորդութիւն, որպէս և
չափահասից զբաժակ արեան ՚Քրիստոսի :

Առ զշուշութիւն Համեմատութե իրաց՝ գիտելի է :
՚ի ախ զի ոչ է դիտումն մեր հաստատել զհայս՝ ի զանցառու-
թիւն վերջին օճման, կամ ցուցանել թէ չէ ինչ ակտոյ նոցա-
կիրառութի այսը խորհրդոյ, քառ լիցի, զի զոյս առնել ընդ-
դէմ զինիլ երեխ ճշմարտութե, և խափանել զնոսա ՚ի հոգեսոր
օդաէ : **Ա**յլ զայս միայն կամիմք ցուցանել, թէ ոչ արդիւնաւո-
րին այսու ակամայ զանցառութեամբ ցայն չափ կշտամբանս, զոր-
սլիսիս առնէ Ալեմէս ՚Կալանոս ՚ի սազում տեղիս, մոլորու-
թիւն Համարելով զայս զործ հայոց, և իրեւ պակասութիւն
’ի ՚Քրիստոնէութենէ :

Գիտելի է երկրորդ, զի ոչ է դիտումն մեր արատ
դնել եկեղեցւոյ լատինացւոց . . . վասն զանց տռնելոյ նոցա-
տաւ զդրոշմ և զհաղորդութիւն մանկանց, և չափահասից մա-
տակարարել ընդ երկոքումբ տեսակօք, զի զոր առնեն նոքա-
յիւրեանս, վասն իւրեանց բարի առնեն : **Ա**յլ զայս միայն կա-
միմք ցուցանել, թէ ծանր են այն զանցառութիւնք նոցա քան
զհայոցն, հայելով ’ի բանս սուրբ գրոց և ’ի որբոց հարց, և

՚ի զլճիաս ոու ըք ժողովոյ և քահանայալետոց : Ուստի եթէ նոքա ազուր գտանին ՚ի յօնցաւորութենէ և ՚ի խղճէ : զանց ռոնելով զժաներ ժաներ օրինօք , և այն կամաւորութեամբ ըստ այժմու վիճակի , ևս առաւել հայք զանց առնելով զթեթեն՝ որ և ակամայ է : յաւետ ըստ այժմու վիճակի :

Պահուելի է երրորդ , զի լատինք համարին ունել բանաւոր պատճառս բաւականս՝ ոչ միայն առ արդարացունել զինքեանս , այլ և գովելի ցուցանել զղանցառութի իւրեանց , բայց յայտ է թէ , ոչ կարէ լինել այս ըստ ինքեան գովելի , այլ միայն վասն խորշելոյ ՚ի բարբանջմանց նոր աղանդաւորաց , կամ ՚ի վտանեկի թիւր կարծիս տալոյ պարզամտաց , ցուցանելով թէ էտպես չեն հարկաւոր առ փրկութի ոյնք՝ զորովք զանց առնեն , և ահա նոյն փաստք զօրեն ՚ի վը դանցառութեն նոցա :

Բայց դու տես զղարմանալին , զի ոմանք յաժարանից այնչափ գովենի զղանցառութիւն իւրեանց , մինչեւ հերիտիկոս համարին զայն . որ ոչ գովեսցէ զղանցառութիւննոցա : Այս յայտ է թէ առ լուտերական և եթ զօրէ , որք ծանունս խօսեցան ընդդէմ հառվմէական եկեղեցւոյ : Ապա թէ ոչ՝ արեւելեան Եկեղեցիք . որք Եղբայրական սիրով աղդ տռնեն լատինացւոց , թէ բարւոք ևս էր զառաջին կարգն պահել , ոչ միայն չմեղանչեն , այլ և արդիւնաւոր գտանին ՚ի գործ սիրոյ ” :

Օ որ ինչ և առիցեն հայք առ արդարացուցանել զանձինս իւրեանց վասն սկակատելոյ ՚ի կիրառութէ վերջին օժման ոչ զերծանին ՚ի յանդիմանութենէ աժարանից , թողում տռել ՚ի ծանր թշնամանաց Ալէմսեանց և միսինարաց զի հուսէ յետոյ ասեն , գայթակղութիւն լինի այլոց մանաւանդ արևմտեցւոց ՚ի լսելն թէ չունին Հայք զկիրառութեան այսր խորհրդոյ : Աւդ զի՞նչ տացուք առ ոյդ պատասխանի :

Յետ առաջնոյն պատասխանւոյն՝ յորում առաջի առնել վկոյութեամբ աստուածաբանից զհնաբաւորութեան իրին . առէ :

“Երկորդ պատասխանի հայոց այս է , թէ լատինք գայթակղին ՚ի վերայ մեր վասն այսր բանի , և մեք դա թակ-

զետէ եմք և դոյթակղիմք 'ի վերայ նոցա վասն բազմապատիկ իրաց , յորոց ինչ ինչ յոյլ և այլ գլուխս յեշեցաք , և աստ յառաջ բերցուք երեք ինչ , որք ըսկ կարդի մեծ և մեծագոյն և ամենամեծ գոյթակղութի ընծայեն արեելեայց առ հասարակ զորս և լատինք քաջ դիտեն :

* * * Առաջինն է . զանցառութիւն դրոշմի մանկանց , զի յայժմու ժամանակի սովորութիւնն է զօրացեալ յիշւրոպա , յապաղել մանկանց զմատակարարութիւնն խորհրդոյ դրոշմի , և այսպէս անհամար երախայք , տղայք և մանկունք վախճանին առանց դրոշմի , որպէս և աչօք տեսանեմք : Արդ՝ մի թէ թեթև ինչ եցէ այս , ոչ ասլաքէն օգտակար է , և առաւել հարկաւոր դրոշմ , քան զվերջին օծումն :

Օ այս քաջ զիտեն ածարանք , և բազմապատիկ բանիւք ոչ հարց հաստատեն , զի վերջին օծումն կարգի միայն իրեւ դեղօգտակար վասն չափահասից եղելոց ՚ի ներելի մեղս , ուստի և մանկանց չտան զայն խորհուրդ :

Խոկ դրոշմ կարդի վասն ամեցուն իրեւ դեղ կարեւոր և յառաջապահեստ , իրեւ զին հոգեսը վասն ընթացից մարտի որ 'ի բոլոր կիանս , և յաւետ ևս իրեւ կինք ամուր 'ի հաստատութիւն Վրիստոնեական դաւանութեան ” :

Յետ այլ ևս բաղում բանից առէ :

“Արդ այսմ զանցառութեան այսպիսի ծանր իրողութեան , յորմէ զուրկ մնան բիւրաւոր մանկունք յիշւրոպացւոց , և առանց կնքոյ դրոշմի վախճանին , ոչ այլ ինչ սպատճառ չքմեղութեան գտանեն ածարանք , բայց եթէ զայն թէ ոչ վեսաւայս զնցառութիւն ։ Փրկութեան մանկանց , երբ ան դրոշմ մասնեն , զի արդէն սրբեալ են մկրտութեամբ :

Եւ յոյտէ նաև որք առանց վերջին օծման մոռանին , ոչ վեսաւին 'ի փրկութենէ , զի արդէն սրբեալ ենթագլւեն խոտովանութեամբ , և զօրացեալ ոչ հազորզութեամբ :

Որպէս և եցէ , եթէ , առաջինն արդարացու ցանէ զայլու երկրորդն և անպարտ կացուցանէ զհայս ” :

Զկնի սակառուց յորէ :

“Առ այժմ զոր ասեմքս , որչափ պատճառս և գտցե՞ն աջարանք , դժուարին լինի շնել զմիտս արեւելեաց , որք հանապաղ գտանեն , թէ մանկունք Երբոպացւոց զուրկ ՚ի դրոշմէ մեռանին , եթէ հարկաւոր իցէ , և եթէ ոչ : Ոսող զծանը զրոցս՝ զոր խօսեալ են ոմանք ’ի յոյն հեղինակաց առ լատինս վասն այսը բանի :

Երկրորդ է զանցառութիւն Հաղորդելոյ զմանկունս ’ի մկրտութեան , և յապաղելոյ տալ նոցա զայնպիսի փրկագործ խորհուրդ յերկլար ժամանակ , զի այժմ յԵրբոպայ ոչ տան մանկանց զսք Հաղորդութի մինչ լիցին երկոտասան ամաց . . . և այսպէս անհանար տղայք մոռանին ութամեայ . իննամեայ՝ տասնամեայ չորեքտասանամեայ :

Իսկ որչափ ծանը է այս գործ , և Համեմատութեամբ սորա զանցառութիւն վերջին օժման անմասն ’ի ծանըութենէք դիտեն աջարանք , որք դեղերին ’ի գըուածս սըց Հարց” :

Զկնի վկայութեամբ աստուածաբանիցն առաջնոց ցուցանէ . թէ Հին հարք տային մանկանց մկրտելոյ դհաղորդութիւն . Եւ յետոյ Լատինացիք թուլանալով յայս սովորութենէ , հուսկ ուրեմն խօսառ բարձին : Իսկ առա ՚ի պետել ոմանց թէ ոչ միրկին մանկունք լոտինացւոյ , ժողովն Տրիտենդեայ ունայնացոյց զկարծիս նոցա , և օսհմանեաց ’ի կանո , Դ . “Եթէ ոք ասիցէ թէ մանկանց մկրտելոյ միեւն ցամս ընտրութեան հասեալ իցին . հարկաւոր իցէ (առ ՚ի Հանդեպ) ընդունելութիւն հաղորդութեան , ՚նզովեալ լիցի ”: Եւ առա յարէ :

“Եւ արդարե զի թէպէտ սը Հարք գիտէին և հաւատային : զի առանց Հաղորդելոյ սոսկ մկրտութի կարեն փրկիլ մանկունք , որպէս և չափահասք որք յակամայս զուրկ մնացեալ իցին : Բայց զայս ևս գիտէին , զի ապահովագոյն լինի փրկութիւն նոցա ընդելութի Հաղորդութե , և զի ’ի բարոյականս միշտ ապահովագոյն Ճանապարհն է ընտրելի , ինքեանք ևս առնէին : թէպէտ ապահով գիտէին և զներհակն :

Արևելեայք որպէս Հայք . որք երկիւղածութի և բարեմիտ զգուշաւորութի լը Ճանապարհ նախնի Հարց երթան , թէպէտ յարդեն զայժմու սովորութիւն լատինացւոց ևս : բայց

այսու ամիւ գայթակղին , թէ ընդէր թողին նոքա զՃանապարհ
հարց իւլեանց և բովանդակ եկեղեցւոյ :

“Եւ առ այս ոչ կարեն ասել լատինք , թէ այսպէս
Հրաման եղել յետոյ յեկեղեցւոյ , որ ունի իշխանութիւն փո-
փոխելոյ Տեղեթինայից , զիարդ յայնժամ զօրէր , եթէ լա-
տինք անարատ պահեալ իցեն զհին կարգն , և եկեղեցին կամ
գլուխն եկեղեցւոյ ՚ի վր իրիք բանաւոր պատճառի կամցի ալ
էր ինքնակամ այլազգ տնօրինել , բայց ոչ այսպէս անցին իրքն :

Լատինք սկսան թուլանալ ՚ի Հին կարգաւորութէ , և
՚ի ներհակին սովորեցան , և ապա եկեղեցին ակամայ կամոք լլ-
ուեց , և հուսկ յետեոյ ՚ի ստգտանելն այլոց զայն նոր սովո-
րութիւն , ան մեղադիր արար և հաստատեաց , զի և չկարէր իսկ
բառնալ՝ որ ինչ ակամայ էր մտեալ :

Եւ այսպէս թէ պէտ լատինք բարւոք գոհացան , բայց
արեելեայք ոչ շինեցան :

Օ այսոսիկ թողեալ ՚ի նպատակ մեր Հայեսցուք ,
եթէ լատինք գայթակղին ՚ի վերայ թեթև զանցառութեան այ-
լոց , այլք ևս առաւել գայթակղին ընդ ոչ թեթև զանցառութե-
նոցա : Օ ի զի՞նչ և պատճառ բերեն ածարանք , չկարեն հա-
մոզել զարեելեայս , և մահաւանդ զհայս , թէ այժմու գործ
իւրեանց ըստ ինքեան ուղիղ իցէ , նոքա յառաջին ժամանակս
հային , յորս հասարակ սովորութէ էր Հաղորդել զմանկունս ,
որպէս վկայեն եկեղեցական պատմութիւնք և ածարանք առ
հասարակ : Հային և ՚ի սրբոց հարց բանս , որք երկիւղածութի-
ւնդ ոյն Ճանապարհ ընթացան :

Հային և ՚ի վերայ մանկանց , որք միանգամ տանա-
մեայ և երկուասանամեայ , ևս և չորեքտասանամեայ , և հնգե-
տասանամեայ գոլով , զուրկ ՚ի մարմնոյ և յարենէ փրկչին՝ ան-
հազարդ մեռանին :

Հայց զարմանալին է այն , զի ոմանք յիմաստուն մե-
սիոնարաց , չասացից թէ ամենն քեան , ընդ որս և ոմանք յածա-
քանից : Վոխանակ մեղտըրելոյ զիւրայինս , վասն թողլոյ զհին

կարգաւորութիւնս եկեղեցւոյ , մեղադրեն զարեելեայս վասն պահելոյ նոցա զնոյն կարգ : Եւ որք հազիւ զանձինս արդ արացուցանեւ կարեն , զայլս իբրև մեղապարտ կշտամբեն թէ վասն դրոշմի մանկանց և թէ վասն հաղորդելոյ զնոսա :

Երրորդ զանցառութիւն է չհաղորդել զժողովուրդն սկ բաժակի Տեառն , այլ միայն մատակարարել զսք մարմինն ։ Այս գործ այնչափ գայթակղեցուցանէ զարեելեայս , որչափ հաւան գտանին լատինք ընդ այն , զօր առնեն :

Եւ այնչափ դժուարին է նոցա ըմբերանել զնոր աղանդաւորս , որք բարբանջեն ընդդէմ եկեղեցւոյն Հռովմայ . . .

Ընդունիմք (առեն առեւեւեան) թէ էապէս ոչ է յարկաւոր միշտ 'ի միասին տալ զմարմին և զարիւն , բայց պիղեմք թէ ոչ է մարթ տռանց հարկի զանց առնել զմիով , այնպէս զի միշտ մինն տացի , և միւսն ոչ :

Ընդունիմք թէ անխտիր մարթ է եթէ զսոսկ մարմին և եթէ զսոսկ արիւն առնուլ , բայց սնդեմք թէ չէ օրէն տռանց հարկի զատանել զսոսին յիրերաց , այնպէս զի միշտ զըրկեալ լիցին 'ի միոյն կամ 'ի միւսոյն , զի այս ոչ համաձայնի ։ Քրիստոսական օրինադրութե և աֆային Հրամանի , ոչ տռաքերական աւանդութե , և ոչ սովորութե ընդհանուր եկեղեցւոյ :

«Քաջ իմա զբանն , վէճ տրեելեայց ոչ է այս , թէ մարթ է կամ ոչ ընդ միով , կամ ընդ երկու տեսակաւ հաղորդել , այս այլ՝ թէ ընդէր լատինք զրկեն զժողովուրդ իւրեանց յարենէ ։ Քրիստոսի , և զայն օրինաւոր գործ համարին :

Օ ինչ է ասեն պատճառն , զի իսկզբանէ հետէ 'ի ։ Քրիստոսէ սկսեալդ 'ի մեջ եկեղեցւոյ ընդ ամենայն տեղիս ի մարմնոյ և յարենէ ։ Քնի անխտիր հաղորդէին հաւատացեալք :

Խսկ այժմ արեւմտեայք ոչ տան յարենէ . . . (Ք. Ի. Պ. Պ.) վասն երկոցունց միապէս տսաց : Եթէ ոչ կերիջիք զմարմին որդւոյ մարդոյ և արբջիք զարիւն նր , ոչ ունիք կեանս յանձինս» :

Յետ բազում բանից յարէ ասելով :

“Արդ ՚ի միտ առ դու ինձ աստանօր , զի երբ տեսա-

ՆԵՆ և լսնն հայք, զոյսովիսի հին աւանդ եկեղեցւոյ՝ ՚ի ՚Քրիստոսէ սկսեալ՝ և յառաքելոց ՚ի զործ ածեալ, և հռովմայեցւոց զգուշութեամբ պահեալ, և ՚ի սբ քահանայապեաց վճռով հաստատեալ, յետոյ ուրեմն ՚ի բաց թողեալ են Երւրոպացիք, և իսպառ խափանեալ յայժմու ժամանակի, զի՞նչ արդեօք ասեն, և զի՞նչ չասեն:

Ո ի՞նչ կամիս, Երթ խօսեաց առ նոսա, որշափի և կամիս պատճառս յառաջեան և բարդեան, նոքա միշտ զայս պատասխանեն, մի թէ այդ ոլատճառք չկային յառաջնմէ ՚ի ՚Քրիստոսէ և այսր, մի թէ ընդ հանուր եկեղեցին ոչ գիտէր զայսոսիկ և զի՞արդ այնու տմիւ ամ զգուշութք պահէր զհին աւանդն ըստ կարի նոյնպէս և մինչե ցարդ յարեելեան եկեղեցիս առ հասարակ:

Եթէ մասնաւոր ինչ գիտուած ՚ի մէջ առցես, թէ նա և ՚ի հնումն երբեմն ընդ մլով տեսակաւ տային եայլն”:

Այդ մասնաւոր է առ հարկի եղեալ իրքդ ոչ լինեին ասեն կանոն ընդհանուր եկեղեցւոյ, և նոյն ընդհանուր եկեղեցին՝ որ զայդ գիտէր, և զի ջանէր մասնաւոր դիտուածոց առ հարկի եղելոց, ոչ թոյլ տայր յանախել եայլն”:

Եթէ ասես, թէ նոյն է ճաշակել զմարմին ՀՅ, կամ զարիւն նորտ, նոյնպէս և զմին կամ զերկոսին ընդունել եային, ՚Եռքո դարձեալ պատասխանեն զնոյն: Ո՞ւ թէ ասեն՝ ընդհանուր եկեղեցին ՚ի սկզբանէ և առաքեալք ՚Քրիստոսի զայդ ոչ գիտէին, առ ի՞նչ ապա ՚ի հասարակ զործ ածութեան ոչ զանց առնեին տալ զմարմին և զարիւն ՚ի միասին, յաշտ է թէ ոչ երկիւղածութիւն համարեին վայրաբեր փոխել զաւանդ տէրունական, մանաւանդ յայսպիսի ահանուր խորհուրդ: Եթէ ասես, առ փրկութիւն բաւական է ՚ի մոլոմոյն և եթ հաղորդել եան, ՚Եռքա դարձեալ զնոյն տան պատասխանի, մի թէ առ աքեալք ոչ գիտէին զայդ եայլն”:

Ո՞ւ ո՞լ զայն, զի եթէ այդպէս իցէ, ուրեմն որ ինչ ոչ է պարզապէս հարկաւոր, ՚ի բաց բարձրէ եկեղեցին, զմբ, զվէմօրհնենքն, զջրօրհնենքն և այլն: ՀՅաւելից ասել, թէ զը-

Դրոշմն ևս . սրովհետեւ ոչ են հարկաւոր առ փրկութիւն , [Ծող
բարձրեն զայս ամենայն ” :

Յետ այլ ևս զըեթէ անհամար բանից . յարէ զայս վերջաբանու-
թիւն , և աւարտէ :

“Արդ զի որպէս վերագոյնդ ասացի , ազգ մեր կամա-
կար ընդունի զայս խորհուրդ , և յօժարութիւն ես ունի առ այդ :

Եւ յիշաւի դիւրաւ մտանէր այդ ՚ի հայս , եթէ
միսինարք փոխէին զընթացս կառարութեան իւրեանց , եթէ
չուխարակէին զայլ բարեկարգութիւնս հայոց , եթէ չերևե-
ցա ցանէին թէ կամին զազդն փոխել յայլ վիճակ , ծէսէ ՚ի ծէս
՚ի հայութեանէ ՚ի Փրանկութիւն , եթէ սէր և քաղցրութիւն
ցուցանէին . եթէ զերկպառակութե խնդիրս ՚ի բաց թողեալ՝
զմիաբանական խաղաղութիւն ողջունենէին” , յերես 743 :



Խնդիր Տասն Երորդ Յաղագս նախագահութեան Առաքելական Աթույն :

ՅՕԴ” Ա .

“Առաջի դնին ամբաստանութիւնք ոսոխաց
Շանրէ այս գլուխ ամբաստանութեան ՚ի լսելիս
ամնեցուն , բայց առ հակառակորդս ազգիս մելոյ թեթև ինչ
համարեալ

Ապաքէն որ միանգամ հայել ախորժէ ՚ի գրուածս և
՚ի բերանս դիմամարտից մերոց , կարծեմ թէ ոչ այլ ինչ ունի
տեսանել , բայց միայն զրոլարտութիւն և չարախօսութիւն

Այն ինչ յուսահատ լինին . և ձեռնութափ գտանին ,
յայլմէ ամենայնէ , ՚ի վերջին ճիգն լինին ապաստան , սուր հա-
նեն զի հարցեն և բաժանեսցեն զետ ՚ի գլխոյն եկեղեցւոյ այս-

ինքն յառաքելական եկեղեցւոյ և յաթոռոյն :

Առ արդարե , բայց երեքսայրի , որով երակի կարեն հատանել , զի եթէ միոյ չյաջողեսէ , միւս կողմամբ կարել հնարիսցեն :

“Եաւս զայնպիսի բանս ասեն , որովք մարթասցին ցուցանել , թէ Հայք մերժեն զնախաղահութի սրբոյ գահին :

Երկրորդ այնպիսի ընթացս վարեն , որով խորշեցանեն զնոսա յաթոռոյն :

Երրորդ այնպիսի իրս պահաջեն , որովք անհնարաւոր գործեսցեն սիրով միացեալ պահել ընդ աթոռոյն :

Այս ամենայն յայտ յանդիման երեկոցի յառաջիկայդ , այլ առ ըստ կարգի ընթանալոյ զառաջինն զհիմն չարախօսութեց ոսօխաց մերոց փոքր ’ի շատէ զննեսցուք” : յեր 783 :

ՅՕԴ” Բ :

“Ի բազում գլխոց ցուցանի ուղիղ համարումն և հաւանութիւն Հայոց ՚ի վերայ գլխաւորութեան առաքելական լուսուոյն :

Վ ստահութեամբ ասեմք թէ հակառակորդք մեր փոխանակ գովելոյ զհայս իբրեւ առաւել քան զամ արեելեան աղքս հաւատարիմ առաքելսկան աթոռն , յանիրաւի պարսւեն իբրեւ մերժող նորին կամ չընդունող նախաղահութեան յաջորդին Պետրոսի :

Վ զի Լուսաւորչեան աղք մեր ոչերբէք մերժեալէ զայն աթոռ : այլ միշտ ընկալեալէ և ծանուցեալ ՚ի սկզբանէ և այսր զնորուն նախաղահութիւնն կամ զգլիսաւորութիւնն , և զբուհանրական հրամանատրութի ՚ի վերայ ամ աղքաց Քրիստոսականից : Վ կայ ունիմք այժմ զնոյն ինքն զմայրն մեր եկեղեցին հռովմէական , որ քան զամ աղքս մտերիմ և հարազատ սիրելի քարողեաց ՚ի քաղում կոնդակս զեկեղեցին հայատանեայց , որպէս և ՚ի յետագայ խնդիրս աեսցես :

Վ այժմ ՚ի կողմանէ աղքիս խօսելով՝ պատեմք ,

թէ այսմ ճշմարտութեան զայսպիսի Հիմնական հաստատութիւննի ազգս հայոց, զոր յոչ ումեք յայլում ազգի գտանել մարթ իցէ :

Առաջին հիմնական հաստատութիւն է : անջնջելի յաւէտ դաշնադրութեամբ սուրբ լուսաւորչին մերոյ, յորում մեծահռչակ հրատարակի նախագահութիւն և գերաստիճան իշխանութիւն առաքելական աթոռոյն :

Եւ թէսկտ այսը Հիման բազմապատիկ մուրճս և նիգս բաղխել կամեցան թշնամիք, բայց ոչ ինչ կարացին արկանել, մանաւանդ թէ որչափ ուժգինս հարին, այնչափ հաստատ ամրացուցին : **Ա**սն զի այնպիսի անժխտելի ճշմարտութիւն է, զոր անհնարին է ՚ի բաց քերել և օտարացուցանել ՚ի մտաց ազգին հայոց, որով իսկզբանէ մինչև ցայժմ անխախունի զայն աւանդութիւն, և նոյն իսկ ազգն ոչ միայն ՚ի զանազան գիրս իւր ՚ի կիր առնու զայն ՚ի վկայութիւն բանից, այլ և հռովմայեցւոց կարկառէ” :

Ապա յերես 788, ասէ :

“Եւ զի՞նչ ունին ասել այժմ զրպարտողք մեր, ինքեանք ևս գիտեն, զի հայք կամակար մտօք ընդունին զայս թուղթ, որոյ մծ և անդժընելի նշանակ այն իսկ է : զի հայք յաւէտ զզուշութեամբ պահեալ ին զօրինակ ՌօԶԱՐ թղթոյ ՚ի մէջ իւրեանց՝ քան Հռովմայիցիք, առ որս գոյր և օրինակ նորին յաւուրս սրբոյն **ԱԵՂԲԵՍՏՐՈՍԻ**, **Ա**տինք անհոգութիւն կորուսեալ են զայն, իսկ հայք ոչ միայն չեն կորուսեալ, այլ և զի մի արդեօք կորիցէ երբէք, առեալ տպագրեալ են զնոյն, և սիռեալ այսր անդը : **Եւ ամ հայք որպէս զմատեան** **ԱՊԱՆԹԱԳԵՂՈՍԻ** քարտուղարին մեծի, ընդ նմին և զայն թուղթ իբրև մասն նորա ընդունին . . . և զի՞նչ ևս խնդրեն դիմախոսք” :

Յետոյ բերէ ՚ի մէջ զոմանս ՚ի փաթերայից, որք հակառակ կան ստուգութեան դաշտոց լուսաւորչին, և ցրելով զբանս նոցա ասէ :

“**Օ ի եթէ հայրենական աւանդութիւն այսպէս չճանաչէին**, և ինքեանք այսպէս չընդունէին, զի՞ արդ կարեին այս-

պիսի ինչ Հնարել 'ի մտաց իւրեանց , և տովագըել 'ի կարդո
մատենից նախնեաց իւրեանց , Ապա յայտ է , զի թէ այսպէս , և
թէ այնպէս բաղբաղեսցեն Հակառակորդք մեր , հարկին խոս-
տովանիլ , թէ հայք այսու բանիւ Ճշմարտասլէս և իսկապէս
ընդունին զգլիսաւորութիւն սրբոյ գահին , Եւ թէ ասիցեն ,
այդ վասն Աեղբեստրոսի և եթէ գրեալ ՚ի բերանոյ նորին Աեղ-
բեստրոսի , և ոչ 'ի դիմաց ամ քահանայապետաց , կամ վասն
ամ յաջորդաց Պետրոսի :

Ա այրապար փախուստ է անզերծանելի , վասն զի սրն
Աեղբեստրոս որ այդպէս խօսի , ոչ վասն զի այս ոք անհատ կամ
Աեղբեստրոս խօսի , այլ իբրեւ յաջորդ Պետրոսի , որ և նախա-
դրեալ բանքն յայտնի ցուցանեն , Եթէ լոկ Աեղբեստրոսի ան-
ձին և եթ սեպհական լինէր բանդ այդ : կարէր ոք իրաւամբ
՚ի դէմս աժել նմա , թէ ո ետ քեզ զայդպիսի հոգեոր իշխանութիւ
յարեւլից մինչեւ յարեւմուտս 'ի վերայ ամ ազգաց Քրիստոս-
ադաւանից , և ոչ միայն կապող արձակող յերկինս և յերկրի ,
այլ և հրամանահան հըզօր յընդհանուր եկեղեցիս Քո , և
գլխավոխան Քրիստոսի :

Ա պաքէն յԱւետարանի անուն Աեղբեստրոսի ոչ գոյ ,
անուն Պետրոսի կայ՝ որոմ տուաւ փականքն արքայութե , և
նմա յանձնեցան ոչխարքն Քրիստոսի : Արդէ Աեղբեստ-
րոս չխօսէր իբրեւ յաթոռոյ Պետրոսի , և իբրեւ յաջորդ Պետ-
րոսի , ուստի՝ ունէր սեպհականել ինքեան զայն իշխանութիւ :

Չիք տեղի խուսափելոյ փաթերայից յերեսաց բա-
նիցս , և ոչ Հնարք ստելոյ զբանս այնը թղթոյ , զոր հայք Ճշ-
մարտեն և ընդունին :

Երկրորդ հիմնական հպատատութիւն այն է , զի իսկդ-
քանիւ հետէ յաջորդք որբոյ լուսաւորչին մերոյ այսինքն Ա-
թողիկոսունք հայոց , ազգի ազգի օրինակաւ մեծարէին զառա-
քելական աթոռն իբրեւ առաջին պատրիարք և գլուխ եկեղե-
ցւոյ , և ոչ իւիք ընդդէմ կքրեցան հանրական իշխանութիւնն
նորա : որպէս և Պատրիարք ՕՀՂ , պապն իբրեւ անտարակուսելի

ինչ հաստատեաց զայս յիւրում կոնդակին , որ վասն հայոց լուս
որում ունիս տեսանել . 'ի գլուխ . . . յօդ . . . և այլն :

“Երբուրդ հիմնական հաստատութիւն այս է , թէ յինչ և
իցէ մատենագրութիւնս հայոց , եթէ 'ի յօրինեալս 'ի հարց
մերոց , և եթէ 'ի թարգմանեալս , եթէ 'ի վարդապետականս , և
եթէ 'ի վիպասանականս և այլն . բացայաց նշանակի ըստ պահան-
ջելոյ տեղւոյն , թէ մեծ և վերին տառեան 'ի մէջ եկեղեցւոյ
առաքելական աթոնէ , և սրբազն քահանայապետն գլուխ և
առաջին ամ պատրիարքաց ” :

Բերէ առ այս և քանի մի վկայութիւնս 'ի գրոց հայոց : Եւ ապա :

“Սորբորդ հիմնական հաստատութիւն է , զի յազգի
միրում , իսկզբանէ և այսր միշտ հաստահիմն է տարրացեալ
'ի միտս ամենեցուն , թէ իշխանութիւն եկեղեցւոյ մեծ է 'ի յա-
առաքելական դահն , զոր ինքեանք Պողոս Պետրոս կոչեն , և
թէ անդ է բանալի գերազոյն իշխանութե կապելոյ և արձակե-
լոյ : Այս ճանաչումն է Հասարակաց հայոց , եթէ երթիցես 'ի
հայաստան , ում և իցէ հարցցես , ըստ սմին ճանաչման առնուս
զպատասխանին ” :

Պատմէ աստանօր զարատակեալն 'ի յայսմ աւուրս մեր , թէ ոմն վասն
մեղաց իւրոց երթեալ իցէ 'ի հռովմ առ 'ի արձակել 'ի զահէն :

“Ինզերորդ հիմնական հաստատութիւն , մանաւանդ
թէ գլխաւոր հիմն նախագրելոցս ամի այս է , զի մերս ազդ քան
զամ ազգս առաւել բացայաց բանիւք ստորագրէ զգլխաւո-
րութիւն սրբոյն Պետրոսի առաքելոյ . առաջնորդ ունելով
զսի Աւետարանն , և թարգման զսի հարս , և յաւէտ ևս զնախա-
հայրն մեր զսի Կորիգոր Առաւաւորիչ , որ 'ի լուսաւոր վարդա-
պետութե իւրում 'ի գիրս Աղաթամանգեղոսի ասէ յեր” Ճ՛Պ՛Յ .
վսսն Պետրոսի թէ , Կորիստոս , արար զնա վեմ հաստատութե
ամ եկեղեցեաց ” : և այլն : Եւ ապա :

ՅՕՒ՞ . Դ .

“Թէ զինչ ինչ առնեն ոմանք , որով հովացու ցանեն

զայլ եկեղեցիս, մանաւանդ զհայս 'ի հարազատ սիրոյ առաքելական աթոռոյն :

Գատանին ոմանք մանաւանդ փաթերայք կամ միսիոնարք հանդերձ արքանեկօք իւրեանց, որոց տեսեալ զողջմութեն հայոց : և զմտերմութիւն առ գահն հռովմայ 'ի սկզբանէ հետէ արձանագրեալ 'ի բազում գիրս, սկսանին պատճառանս պատճառել, ասելով թէ գիտեմք և մնք զի Հայք զառաջին ժամանակս ընդունէին զնախագահութիւն առաքելական աթոռոյն, բայց այժմոյս չէ այնպէս :

Օ այդ բան բազում են խօսեցեալ, և խօսին իսկ մինչե ցարդ, այլ սակայն ընդդեմ ճանաչման իւրեանց բարբառին, ապա թէ ոչ, կամ պարտին ասել, եթէ Հայք բնաւերբէք չեն ընկալեալ զայդ նախագահութիւն, կամ պարտին ասել, թէ միշտ ընդունէին և ընդունին : Ա ասն զի Հայք զառ 'ի նախնեաց իւրեանց իշեալ Համարումն ոչ են փոփոխեալ և ոչ թողեալ : Այլ որպէս էր 'ի սկզբանէ անտի, այնպէս է և այժմ, ըստ որում վերոյ դրեալ պատմութիք յետին դարուց յայտ առնեն, զոր և ևո ունիս իմանալ 'ի յետագայ բանից :

Եւ զի դիմախօսք մեր ոչ իւիք կալեն ցուցանել զզրպարտութիւնս իւրեանց, որպէս թէ այժմ փոփոխեալ իցէ միտք հայոց, մեք ընդ Հակառակն այլ ինչ ցուցանեմք և յերեան ածեմք զզրպարտութիւն դատախաղից մերոց իբր զի որք զայտպիսիս բարբառին դասք փաթերայից և միսիոնարաց : Ճշմարտապէս պատճառ եղին 'ի քանի մի դարուց և այսր, ոչ զի վարկումն Հայոց բարձցի յառաքելական աթոռոյն (առ ու հարեւն բառեալ իւիս, մենաւ ոչտարած) այլ զի սէր նոցա պաղեսցի կամ հովացցի, որպէս իրօք առ տրտաքս հովացուցեալ են և հովացուցանեն այդպիսիք, վասն զի զայնպիսի տարագէտլ ընթացս վարեն 'ի բանս և 'ի գործո, որով յատելութիւն գրգռեն զազգս բազմաց, թող թէ 'ի հովութիւն սիրոյ :

Եթէ ինչ ինչ յարարուածոյ դոցա լիցի ինձ առաջի մատուցանել, մի ինչ գժուարեսցին զի երբ ինքեանք 'ի մեր

աղդի վերայ զամ պակասութիւն բարդեն հանդերձ ժանր ծանր
թշնամանօք , և հերիտիկոս և հերձուածող անուանակոչութիւն,
չունին իրաւունս դժկամակ լինելոյ , յորժամ մեք առանց այս-
պիսի ժանր զբուցաց , և պահմամբ ուղղափառութեան և լաւ-
ութենոցա , փոքր ՚ի շատէ յառաջ բերցուք զայսպսի դործու և
եթ , որով խրտուցեալ են և խրտուցանեն զազդն :

Առաջին տարադէալ ընթացք նոցա այսէ՝ զի կամին
յինքեանս որսալ զժողովուրդն , այնպէս՝ զի մի՛ այլ ևս հաղա-
տակեսցին անմիջական առաջնորդաց իւրեանց , այլ միայն լատին
առաջնորդաց՝ ընդ պատճառահիօք անուան Արքադան պապին , և
կամ այնպիսւոյ ումեք՝ որ ոչ է առաջնորդ աղդին , այլ միայն
կարդեալէ իրեւ տեսուց . և այն ոչ վասն Հայոց , այլ լատինա-
ցւոց եղելոց յարեելու : **Օ** այս չէ հարկ բացատրել ըստ պարա-
գայից , զի լաւ ևս քան զմեզ գիտեն . ընդ որս խօսիմք :

Արդ յայտ է թէ այս գործ քանի՞ խրտուցանէ զազդն ,
վասն զի ազգն զիւս առաջնորդս և անմիջական հովիւս ունելով՝
պարտէ անմիջապէս նոցա հպատակել , և հանդերձ առաջնոր-
դաք իւրովք պարտ է Հաւատալ ՚ի դլուխն ամի ՚Քրիստոս ,
ընդունելով միանդամայն գոնէ լոելեայն իրեւ երեսփոխան
՚Քրիստոսի , կամ ասացից իրեւ ունող բանալեաց ՚Եկեղեցւոյն
՚Քրիստոսի , զքահանայապետն առաքելական աթոռոյն ըստ
որում յաջորդ Պետրոսի :

՚Քան զայս աւել ինչ չէ մարթ պահանջել ՚ի ՚Քրիս-
տոնէ ից ըստ վարդապետութեան Հաւատոյ : **Ա** ասն զի առ է ական
բանն Հաւատոյ ոչ պահանջի , զի իւրաքանչիւր ոք ներգործու-
թեամբ և բացայայտ Հաւատասցէ զդլիուորութիւն առաքելա-
կան աթոռոյն : շատ է ընդ հանրապէս ընդունիլն և չմերժելն , և
կամ գոնէ զօրութեամբ Հաւատալն ՚ի ձեռն այնր բանի զոր
ասեն ՚ի հանդանակն : Հաւատամք ՚ի մի միայն կաթողիկէ և առա-
քելական ոչ ՚Եկեղեցի ”, զի եթէ ՚Եսովին չլինէր իմացեալ մի-
ութիւն եկեղեցւոյ ընդ միով Հանրական գլխով , ոչ զանց առնէր
՚Եկեղեցին բացայտ դնել զայն ՚ի հանդանակն ”, յերես 798 :

“Եթիրորդ տարագեւ ոլ ընթացք նոցա այս է , զի զայն-
պիսի Հնազանդութիւն պահանջեն առ գահն , (երանե նէ առ ին-
չուն ,) որ արտաքոյ ելանէ իւրեանց , և չէ երբէք լեալ ՚ի մէջ
եկեղեցւոյ յառաջին ժամանակս :

Առ բարւոք իմանալոյ զայս ծանիր , զի որպէս Առ-
թուղիկոսն Եպիսկոպոս է Եղմիածնի , արք Եպիսկոպոս է բու-
վանդակ այնր գաւառի : Ո՞հտրապօլիտէ Արարատեան աշխարհի ,
և առաջին Պատրիարք է Հայոց ազգին , ուր գտանիցի հայազ-
գի ոք : Խօնող զառաջին դարս , յորս էր գլուխ նա և կաթու-
ղիկոսացն Արաց Աղուանից , զորս ինքն ձեռնադրէր :

Այնպէս և քահանայապետն առաքելական աթոռոյ ,
Եպիսկոպոս Հռովմայ , արք Եպիսկոպոս Նորին գաւառի , մետ-
րապօլիտէ Խտալիոյ , և գերագոյն պատրիարք բովանդակ Եւրո-
պիոյ , և Համօրէն լատին աղդին : Խսկ ՚ի վերայ այսր ամի պապէ
տմ հաւատացելոց , որով և է հրամանահան՝ ոչ լոկ Եւրոպիոյ ,
այլ ընդ ամնայն աշխարհ յընդհանուր եկեղեցի Քրիստոսի ,
որպէս և եղեալ կայ ՚ի թուղթն զաշանց : *

Արդ լատինք որք բնակին յԵրոպիայ , կամ ասացից
՚ի Պարէնկ իստան , ըստ իւրաքանչիւր կարդի ունին պարտակա-
նութի Հնազանդելոյ քահանայապետին Հռովմայ , և եթէ միան-
գամայն ասացուք , ողջոյն իսկ ազգն լատինացւոց , որ յԽտալիա , և
՚ի Պաղպիա և այլն , պարտական են իսկ Հնազանդել նմա , ոչ մի-
այն իբրև պատի , այլ իբրև սետհական պատրիարքի իւրեանց ,
այնպէս զի և եպիսկոպոսունք նոցա ՚ի նմանէ կամ հրամանաւ-
նորին պարտին Ճեռնադրիլ . իբրև Հրամանաւ յատուկ պատրի-
արքի իւրեանց : որպէս և յտյտ է

Օ այս եղեալ տես այժմ թէ զի՞նչ դորժեն ոմանք
՚ի փաթերայից կամ միսիոնար անուանիլոց , կամն լով զի հայք և
տմ ազգ Քրիստոնէից Հնազանդ լիցին . Արքազան պատին , գուն-

* Առ անձաւերութիւն ՚ի առանց նշեացն ՚ կարտա ընտեհութիւն
կ . պ . Հանուարքնան : որ անդէ հատէւի դաստիւ : ՚ ՚ եւ է զայն :

գործեն ամբողջ ըստ նմին աստիճանի , որով ինքեանք պարտին պարտական են հնազանդիլ , նոքին ևս այսպէս հնազանդեց ին , ֆու ոչ միայն իր ըև գլխոյ ընդհանուր եկեղեցւոյ , այլ և իր ըև իւրիանց անմիջական պատրիարքի , իսկ այս ընդդեմէ պատրիարքական իւրաւանց և կանոնաց ընդհանուր ժողովոց :

“**Օ ի՞նչ ապա իր ըև տեսանեն , զի այսու օրինակաւ զոր ինքեանք կամին ոչ հնազանդ են հայք . այլ իւրաքանչիւր աղդ ընդ իւրով սեպհական պատրիարքաւ հանդարտեալ կայ . և նովին միջնորդաբար ընծայէ զիւր հպատակութիւն պարտու պատշաճ առ գլուխն , և սմին իրի իր ըև գառինք անմեղք և ոչխարք Քառական Հօտին պարզմտութիւն յարածեն ուղիղ հաւատս ընդհանրական և առաքելական եկեղեցւոյ , և ցնծան ի՞նչ , Արդովին և վրդովին զայլս այդ փաթերայ անուանեալք , և զի՞նչ առնեն (Ի արտեօտ ծանք նունչոց ասեւ) ’ի վերայ վազեն ոչխարաց , և սաստկութիւն յարձակեալ խրտուցանեն զնոսա :**

Յարձակումն նոցա այս է , զի նախ զառաջինն ոչ հային յորպիսութիւն ոչխարաց , և ոչ հային ’ի կարգս և յիւրաւունս եկեղեցւոյ , և ոչ ՚ի քաղաքավարութիւն բանականաց , այլ համանգամայն ստիպին և սպառնան , թէ փութով եկայք հնազանդեցարուք Հովուապետին : Խոկ անձարակ ողորմ լի ոչխարքն՝ ոչ գիտելով զիրացն ստուգութիւն , խրտնուն , սարտնուն , երկնչին և սկսանին փախչիլ և հեռանալ :

“**Օ այս այսպէս տեսեալ վարատողացն , իսկ և իսկ դիմեն յատեան Հովուապետին՝ ամբաստան լինել զնոցանէ , թէ նոքա ապստամբ են , զքեզ առ ոչ ինչ գրեն , քեզ ոչ հնազանդեն և այլին : Եւ ոչ յայն հային , զի նոքա ոչ եթէ ’ի հնազանդութիւնէ Հովուապետին օտարանան , այլ ’ի խստութենէ Հովուացելոց հեռանան : Ապա եթէ քանի մի ոչխարս ’ի յետամայից զբռամբ ածեն այդպիսիք , ’ի վերայ նոցա խնդան , և նովիմբք ցնծան , զնոսին գովին իր ըև զհնազանքս , և այլն : Այս հնազանդ են , Հովուապետին արդեօք , թէ բռնացելոյն ’ի վերայ իւրեանց :**

Արայն թէ և զայդ գիտասցեն այդպիսիք, զի նոքա
և փախչեն արդեօք՝ ի ձեռաց նոցա . բայց ողումնիքն ոչ
գիտեն, ակար գոլով և հիւանդաքայլ ոչ են կարացեալ՝ ի փա-
խուստ աճապարել, և այնպէս մատնեալ կան ՚ի ձեռս դոցա .

Եւ արդ եթէ դոքա կարծեն թէ Հայք ևս ըստ սմին
օրինակի ՚ի բաց Հեռացեալ իցեն արդարեւ ստուգի այդ ՚ի վը
այդպիսեաց : Ասմին ասել թէ Հեռացեալ են՝ ոչ ՚ի հովուա-
պետէն : Քաւ Լեցի, այլ ՚ի բռնութենէ դոցա : Ապա թէ ոչ
ինքեանք անմիջական հովուաց իւրեանց բարեմտութը հնազան-
դելով, նովին իսկ հովուապետին հնազանդ լնծային, զի չէր
այլ ազդ հնազանդել . կալով յաշխանի իւրեանց, և չէր իսկ
օրէն այլ ազդ վարել . կալով ընդ անմիջական ձեռամբ առաջ-
նորդաց իւրեանց” :

Այսպէս խօսի Դ. յերես 800, և 801 .

Երրորդ տարադէպ ընթացք նոցա այսէ, զի երբ
նշմարին ՚ի վերա, մասնաւոր անձանց ոմանք ինչ ինչ անկատա-
րութիւն, և յորժամ տեսանեն ինչ ՚ի վերայ ազգին, որ ոչ հա-
ճոյ թուիցի յաշս անձանց իւրեանց : և ան նման ՚ի դէա, իւ-
րեանց, փոխանակ ազդ առնելոյ անմիջական հովուի նորին
ազդի, ինքեանք սկսանին հովուութեան թեկնածել, և տիրա-
բար զհովուի կատարել պաշտօն (էքանի բէ հակառակաց) ասելով :
Թէ առեալ է մեր իշխանութիւն ՚ի Արքազան պասլէն այսպէս
առնելոյ, և իրաւունք կան ՚ի ձեռին մերում միսիոնարական
իշխանութեամբ, մինչև զհովիւսդ իսկ զձեր կառավարելոյ :

Եւ ոչ այսչափ միայն ՚այլ և յաւելուն, թէ որք
հնազանդեսցի այդոցիկ հովուացդ արեելից մեղանցէ, և այն
մահուչափ մեղօք : Ո այս Հանապաղ աչօք տեսանեն և ձեռօք
շօշափեն, յորոց միջի կայցեն փաթերայք :

Արդ . յայտ է թէ ՚ի տեսանեն հովուաց ազգին զայդ-
պիսի բռնակալութիւն, և ՚ի լսելն զայդպիսի առացուածս վտա-
րանդութե, ՚ի հարկէ գայթակղին, ոչ միայն ՚ի վերայ ինքնա-
դլիսութե անձանցդ այդոցիկ այլ և ՚ի վը մեծի հովուապետին,

“• Քանզի գիտե՞ն , զի ինքեանք են անմիջական Հար .
զատ Հովիւ աղդի իւրեանց , և զի առանց գիտութե իւրեանց ,
կամ առանց խափանածոյ Հովուական ալաշտաման իւրեանց ,
ոչ է կարող առանձին ոք օտարազդի գալ , և հովութիւն
առնել ’ի վերայ ոչ խարաց իւրեանց ” :

Եւ ՚ի մէջ բերեալ աստանօր , թէ որպէս յԵւրոպա յաշլ թեմէ օտար
ոք եկեալ Հովութիւնս արտացէ ՚ի վերայ ժողովրդեան առանց հրամանի առաջ
նորդի տեղւոյն , իսկոյն պատմեն զայն և տարազիր առնեն աշխարհական բաղկաւ
աղա յարէ :

“ Քայց քանզի հայք չունին այժմ ’ի ծեռս մարմնաւոր
իշխանութիւն , որով մարթասցին սանձաւհարել զայսպիսիս ,
(որու երբեմ որաք Լէսոն ոքատ , ’ի կեսէն ետ) իրը տեսանեն զգօրա-
նալ և դրանանալ այսպիսեաց օք քան զօր , չունելով այլ ինչ
ճար , երբեմ սիրով աղդարարութիւն առնեն այդպիսեաց ,
կամ զլիսաւորի նոցանստելոյ ’ի մէջ նոցա , և երբեմ ՚ի ծեռս
իշխանութե արտաքին տերանց ահ արկանեն և զդու շացուցանեն :

Խսկ նոքա փոխանակ զգուշութիւն յանձինս բերելոյ ,
սկսանին Հովակ հարկանել բանիւ և գրով , թէ սոքա հերի-
տիկոս են , Հերձուածող են , մեզ ոչ հնազանդին , որք ՚ի պա-
պէն ունիմք իշխանութիւն եալին ” :

Խսկ սյօպիսի զրոյցք հարկաւ գրգռեն զլսողսն յափ-
շութիւն , և զողջոյն իսկ զազդն ՚ի դժկամակութի , թող
զվըդովմունս երկալառակութեանց և զազդի աղդի չարիս : Տե-
սանես թէ զի՞նչ պիսի ընթացս վարեն , զնրպիսի ճանապարհ
գնան փաթերայ կոչեցեալքն , և միսիոնարական իշխանութիւ-
պարծեցեալքն ՚ի մէջ եկեղեցւոյն Քրիստոսի , եալին ” :

Քայց զի՞նչ տան պատասխանի փաթերայք , մեք իրա-
ւամբք զայս այսպէս առնեմք վասն զի Հովիւք Հայոց հերիտի-
կոս գոլով կորուսեալ են զիրաւունս իւրեանց :

Այս պատասխանի առաւել տղիտականէ քան յանդ-
նական , զի եթէ իրաւանց գիտութեան խելամուտ լինէին , ոչ
կարէին ասել զայդ , Քանզի ըստ իւրեանց եկեղեցւոյ , մա-

նաւանդ Հրատարակելոյ ՚ի կոնդակն Արարտ Ենոսի պապին ՚ :

(“Ի համար Առ Կոռշէւոյ”) Հովիւ ոք որ յականէ յանուանէ չիցէ Հրատարակեալ Հերիտիկոս, չէ կորուսեալ իւիք զիւը իրաւունս, մանաւանդ այնպիսի ազգի հովիւ, որ ոչ է մերժեալ յեկեղեցւոյ : Ուստի նախ կարող լիցին ցուցանել փաթերայք, թէ ազգն Հայոց կամ Հովիւք ազգին յականէ յանուանէ մեժեալ են յեկեղեցւոյ, և ապա իշխեսեն այդպիսօրէն ճոխանալ :

Եւ եթէ արդարե այդպիսի տիսմարութեամբ վարէին բնակիչք Եւրոպիոյ, վեր ՚ի վայր լինէին ամ թագաւորութիք արեմտեայց, Ա զի ՚ի մէջնց ուրեք ուրեք թէ և յայտնի իսկ Հերիտիկոս Հովիւք գտանին, երբ յականէ յանուանէ չիցեն մերժեալ և Հրատարակեալ յեկեղեցւոյ. . . .

Ուր Թողից, զի Հովիւք Հայոց և ոչ իսկ արատ ունին Հերիտիկոսութեան կամ Հերձուածողութեան, որպէս ունիմք ասել ՚ի յաջորդ գլուխդ” : յերես 802 :

Չորրորդ տարադէպ ընթացք նոցա այս է, զի ոչ փոյթ է նոցա թէ իշխանութիւն սրբազն պապին ժանուացի այլոց, կամ գլխաւորութիւն նորին երեւսցի, այլ ընդ նովին պատրուակաւ ինքեանք մեծասցին : • Բանզի այդ պատճառնք իմն է քաջ ժանուացեալ ամենեցուն, և ընդ այդոցիկ պատճառնօք կամին և հնարեն, զի տիրեսցեն ժողովրդեան, զասր նոցին զգեցցին, զկաթն նոցուն դիեսցին, և զնոցայն իւրացուսցեն : Ահա այդ է ըշձութի և դիտումն դոցա բանիւք և արդեամբք, որպէս յայտ է տեսողաց և լսողաց, և ոչ իսկ անձանց իւրեանց անյայտ, զի ըստ առածին, նիզակ չամփոփի ՚ի պարկ : Եւ ՚ի վերայ սոցա այսպէս ոք այնուհետեւ մնուսցէ նոցա : Իսկ նոցա տեսեալ թէ զանուն ինքեանց, այսը անդր բողոք ունել, թէ դոքա մերժեն զառաքելական աթոռն և այլն, որպէս թէ յանձինս նոցա բազմալ իցէ գահն առաքելական : Եւ յայտ է թէ այսպիսի տուտ աղաղակաւ՝ ստուգապէս առիթ լինին օտարանսալոյ բազմաց ՚ի սիրոյ, և ոմանց իսկ մերժելոյ զյարդ առաքելական գահին :

“Փոք ասացելոց յայտնի լինի յայնմանէ զի եթէ սրբազն վեհի հրաման ինչ յղեցէ առ այսպիսիս , որ ոչ շահաւոր պացի անձանց իւրեանց , ոչ երբէք ՚ի գործ գնեն զայն պիսի հրաման , ոչ եթէ յայտնապէս ընդդէմ կալով , քանզի երկնչին , զի մի և յայլ երաց զրկեցին , այլ ազգի ազգի հայթայթանօք բարեզգեցաց պատճառանաց . և այս իսկ է պատճառն , զի ոչ յաճախ պատռելը գայ՞ի վեհէն :

Ապա եթէ շահարար ինչ անձանց դ իպեցի հրամանն , իսկ և իսկ կատարել փութան , և այնպիսի ոգւով նկրտին , զի յամ ուրեք պահեցի անխափան այն մինչ ՚ի խողճ արկանել զպարզամիտս՝ զմօտաւորս և զհեռաւորս :

Եւ ահա սովին իսկ երբեւ փողով քարողեն , թէ կամք եւրեանց ոչ եթէ վասն յարդի սրբազն վեհինէ . . . այլ վասն շահու անձանց , զոր ինքեանք ինեւք կոչեն , վասն որսալոյ ինքեանց դժողովուրդն , զի ՚ի նոցունց հաւաքեցին զլիութիւն պիտոյից , և լիաճեռն վայելեցին :

Եթէ դոքա չյօժարէին առնուլ ինչ ՚ի ժողովրդենէ հայոց , այսինքն չհաւաքէին ինչ յանուն կազմածոյ՝ քաւարան կոչեցելոյ , չամբարէին զգեստեղէն և արծաթեղէն ոպասատուրս չժողովէին վծ շինուածոց առատ ոլատարադիս չդանձէին , գտնձանակո չշրջեցուցանէին յեկեղեցիս եայլն եայլն : Այլ մանաւանդ յուղորէին , զի հայոց քահանայից տացին , և չքաւոր կարգաւորաց բաշխեցին : Ասկ ինքեանք եւրեանց բաւական հասիւք ապրէին , և միայն առեցելովքն յազգի իւրեանց շատանային առ ՚ի պէտս սկաշտաման աղքատին քարողչի վճարելոյ : Յոյնեւմ յայտնի երեւցացանենէին թէ ինքեանք ոչ զշահ անձանց ինդըեն , այլ զՃ շմարտութիւն քարողեն :

Ապա եթէ այսու ամեւ զոօցին հակառակն գործեն , առաւել քան դոր մարդ իցէ խորհել , զներհակն ուսուցանեն , և ՚ի ներհակն առաջնորդեն , և այսու ամիւ երբ յաւելուն , առել թէ հրամանաւ առաքելական գահին ունիմք մեք գայդոսիկ , մեծ գայթակղութիւն տան ազգին , և հովութիւն

օիրոյ արկանեն , չասայի թէ ուսուցնելու , զի սրավնեառք ժո-
ղովրդականք և ոլորդամիտք 'ի վարս քան ի բանս հային քա-
լողչոց , և 'ի վեր քան զամ յընչառիրութենէ և յընչառե-
ցութենէ չափերի զչափ բարելաւութեան նոյա :

'ի վերայ այլ ևս հինգերորդ և վեցերորդ սարագետ ընթացից միսի-
նեարաց խօսեցեալ , այսու վերջաբանութեամք կնքէ զըսն իւր :

Յասացելոց աստի յայտնի տեսանի , զի հայք ոչ եթէ
դնախագահութիւն աթոռոյն ժիստեն , զոյն ' դոր ճանաչեն
գլխափոխան . **Ք**րիստոսի , և հրամանահանն հզօր յընդհանուր
եկեղեցիս , այլ միայն տեսանելով ոմանց զարարս փաթերայից՝
դայթակղին , և լսելով թէ հրամանու զլխոյն կատարելն այն
արարք , (ո՞ւ է առաջ անձնելն . բայց անձներա , ի՞ւ) ի սիլոյ զլխոյն
հովանան , և ոմանք ևս շկարելով հանդուրժել . հեռանան :

Բայց զարմանալին այսէ , և զի յայնոցիկ քանի մի դայ-
թակղելոց վերայ և եթ հայելով գայթակղեցուցիչ նոյնին փա-
թերայք , զողջոյն իսկ զագեն 'ի նոյն սակի զըսն , և այնպէս
զբոլորեսին կամին գայթակղեցուցանել :

Եւ մի թէ այս իցէ առողքելուկան անուանեալ պաշ-
տն , և մշակութիւն իւրեանց և հոգւոյ փրկութիւն , որով
առաւել կամին կորուսանի քան գտանել :

Դւ սակայն ազգին չէ թողեալ 'ի բաց դիւր ուղեղ ճա-
նաչումն առ գլուխն , և ոչ իսկ թողու , նոյն է յինքեանք
և 'ի ճանաչման իւրում , միայն թէ չիսանդարեցեն օտարք ,
յորոց ոմանք և ընտանի թշնամի զանձինս երեկուցանեն ”:
երես 808 :

ՅՈՒՐԻ Դ

“**Պ**ատասխանի չորից ընդ զիմութեց , որովք ոմանք
զոլդ հայոց բաժանել համարին յառաքելական գահեն :

Ամանք յաֆարանից որք ոչ են գիտակ , թէ յինչ
պիսի վիճակի իցէ ազն հայոց , և առաւել ես ոմանք 'ի փա-
թերայից . որք ոչն կամին զիտել զորպիսութիւն ազդին , զոր
աշօք անսանեն : քառեակ առարկութիւնս կամ ընդդիմութիւ-

յեղ, յեղին, առ ՚ի տեսանել թէ Հայք բաժանեալ Եցեն յունացելական աթոռոյն, զայն Հիմնովին ունիմք ստիլ ՚ի գըլուխ... ՚ի խօսիլն յաղադ և Հերձուածոյ, առ այժմ սակաւուք զնեացուք զբնդդիմութիւնս նոցա :

Առաջին ընդդմութիւն է այս, թէ ընդէր ոչ յշեն Հայք ՚ի տղատարադի զանուն Արքազան Պատին :

Օ այս բան յորժամ առաջարկեն ածարանք, ոչ այսպիսի անորոշ եղանակաւ խօսին այլ որոշեալ ոճով բարբառին ըստ կարգի իրաւանց, Թէ ընդէր Արթուղիկան կամ սկատրիարքն Հայոց ըստ Հին սովորութեալ եկեղեցւոյ չառնէ զայս յիշտակ, Խսկ փաթերայք՝ որք ոչ նուրբ Հային իրաւանց, զոյս օրինակ բարբառին, թէ ընդէր Պահանայք Հայոց առ Հասարակ և ժողովուրդք ոչ յիշտակեն զանուն պատին, այլ զիւրեանց Արթուղիկոսուն և սկատրիարքունո :

Ա ծարանիցն ասացու ած ըստ ինքեան ունի ինչ տեղի իրեւ համաձայն իրաւանց, իսկ փաթե ըստ ին ամենայն իրօք անտեղի է իրեւ արտաքոյ իրաւանց, Եւ թէ զի՞տրդ, ծանիր :

Հին սովորութիւն եր ՚ի մէջ եկեղեցւոյ՝ գովելի յոյժ և փափաքելի, զի իւրաքանչիւր սկատրիարքունք յիշեն զայլ սկատրիարքունունո... Խսկ թէ արդեօքնա և Արթուղիկոսն Հայոց՝ որ սկատրիարք ազդին կոչեւր, ունեւր ընդ այլս զայս պիտեմք, զի Հայք ընդ Հանրասլեւ բազում մաղթանս և ազթու ունին վասն առաջնորդաց իւրաքանչիւր եկեղեցւոյ և վասն լրութեան բովանդակ եկեղեցւոյ, այսինքն այս՝ զոր ասեն սարկաւադունք ՚ի սկատրամունս ժամերդութեան, և ՚ի սկ սկատրադի, Ա ամս խաղաղութեան ՚ի Ժամագրքին, Յիշեալ թէ ողորման, ՚ի սկատրակամատոց, Ա հա այսպիսի ընդ Հանրասկական յիշտակութիւնը են ՚ի սկատրամունս Հայոց, ՚ի սկզբանէ Հետէ իջեալ, և միշտ դորժածեալ, Բայց ոչ ուրեք դտանի ՚ի Հին օրինակո սկատրամունց մերոց, թէ զայլոյ ազդի Հայքա-

պետս և կամ քահանայալի յանուանէ յիշտակեալ իցեն
երբէք (ոչոք յամենայն ծանանաէի ու երբէ յիշտակեան ւինի) իսկ
հասարակ եղիսկոպոսց և քահանոյից յամ ազգու այս էր սո-
վորութիւն, զի իւրաքանչիւր դիւրեանց սեպհական սկառի-
արքն կամ Ապօղիկոսն եայլն յիշեն: Եթւ չէ լեալ երբէք
լսելի, թէ քահանայ ոմն յիշեսցէ բաց ՚ ողատրիարքէ իւրմէ,
Դայլ ոք պատրիարք եայլն, կամ փոփանակ զիւր պատրիարքն
յիշելոյ զայլ ոք յիշեսցէ, մանաւանդ ՚ ի մեջ հայոց բնաւին
ան լուրէ այս :

Եթւ զի այս այսպէս է, զի՞արդ ապա փաթերայք ստի-
պել յօժարին զքահանայոց, թէ պարտ է ձեզ յիշել զը-
պապն ։ այնպէս : որպէս թէ գլխաւոր նշան ու զղափառութեան
Համարեսցի այդ :

Օ այդսկի նորալուր նշան ծչ երբէք ՚ գործ ածին
նախնի որ հարք մեր . . .

Օ այսոսիկ խօսեցաք ըստ իսկութեան իրին, և հայ-
ելով ՚ին սովորութի, որ այսպէս էր և այսպէս է իջեալ մինչե-
ցարդ : Ուստի աֆաբանք և փաթերայք ըստ այսմ ունին առնել
դատաստան, և անսուդիւտ կացուցանել զազգն, այսինքն թէ
որովհետեւ մինչեցարդ չէ մտեալ ՚ի հայս այսպիսի սովորութի,
եթէ այժմ ձեռնամուխ լիցին ՚ի սոյն նոյն իսկ իրն նորովու-
թեամբ իւրով առ իթ լինի նոր և ծանր խռովութեան :

Եթւ ստկայն դիցուք թէ, Ապօղիկոսունք և պատ-
րիարքառնք հայոց, ՚ի հին ժամանակս սովորեալ իցեն յի-
շատակել, այսու ամիւ հարկն ստիպէ դադարիլ յայժմու ժա-
մանակի : ՚ի անզի ազգն այժմ ՚ի ստրկութեան գոլով ՚ի ներ-
քոյ տէրութեան այլոց, թէ և կամիցի, չկարէ առնել զոյդ,
ապա թէ աչ՝ վատուգ մնանք յերեսաց Տէրութեան, և ժաներ
վսաս հասանէ աղլին: Ա ամս զի նշան ապստամբութեան համա-
րին զայդ, և մատնութեամբ ոմանց մեծամեծ վրդովմունք և
չարիք ծագին” : յերես 811 :

Երիշուդ դիմագրութիւն այս է, թէ ընդէլ Ապ-

թողիկասունք չայսց կամ պատրիարքունք նց ոչ գրեն թուղթ
յաթռն առաքելական , որ թէ և չիցի հարկաւոր , դէժ նը-
շան ինչ սկզբոյ է :

“Այս դիմադրութիւն ոչ ենչ ընդհատ երեւի յառաջ-
նոյն , և եթէ ՚ի նիւթն հայեցուք , քան զայն վտանքաւոր է ,
եթի դլուշակ ամբաստանութեան կարծեցիուլ առաջի այլոց , և
իրոք դժուարին քան դնախելինն , զի որովհետեւ ազնն ողջոյն
ընդ աէրութեամբ այլոց կայ , ոչ կարեն համարձակ թուղթ
գրել , մահաւանդ թէ և ոչ իսկ լոելեայն կամ գաղտ ’ի միոյ
կողմանէ քան զյայտնի գրելն , Ո՞ի թէ իմասցին այլազդեք ,
եթէ այսպիսի կցորդութիւն ունին ընդ արեմտեայս , և մա-
հաւանդ ընդ մեծի գլխոյ նորայ , իսկ և իսկ անհնարին հալա-
ժանս յարուցանեն ’ի վերայ նոցա , եթեւ ՚ի վերայ յայտնի
ապօտամբաց ” :

Յետ այսպիսի բանից առ :

“Ե՞ւ սակայն եթէ վլտանգ լինէր , և եթէ չլինէր , ոյս
միայն կարելը արդեւել զերթենելութիւն թղթոց , զի հայք ընդ
իշխանութեամբ այլոց գոլով ոչ կարեն ’ի նոյն բերել , և
՚ի կողմանէ հռովմայ կարեն ևս իլոււամբ սլահանջել զոյս հայք
և այսմ քաջ գիտակ են նա և ինքեանք , և զիործն իսկ առաջի
աչաց իւրեանց ունին :

Վասն զի ’ի Փրկնկեստան և պիսկոսլոսունք՝ որ կան
՚ի մէջ թալաւորութեան • Քրիստոնէից Պաղպիացւոց Գերմա-
նացւոց և այլն , ոչ կարեն ինքնագլուխ թուղթ գրել առ գահն
առանց գլութեան թագաւորութեան : Արդ եթէ ՚ի մէջ • Քրիս-
տոնէից Պաղպաւորութեանց այսպիսի զգուշութիւնք սլահին ,
զինչ ունիս ասել վտան արեելեայց եղելոց ընդ իշխանութե-
ոյլազգեաց , մըչափ զգուշութիւն իցէ սլահելի :

Դ վախճան բանիս առ :

“Այս դլուխ դիմադրութե չկարօտի երկար ինդրոց ,
բայց թուի թէ հակառակորդք սովին բանիւք այլ ինչ կամին
ներքս մուժանել , այսինքն է , գուցէ յայն սակս թախանձէին

զհարկաւ որութիւն թղթական գութեր, որպէս զի Ավագուղիկոսն հայոց՝ ի գլխաւորադայն առթիւ, որ է ժամանակ նո ու նստելու յաժոռ, գրով ժամանուցէ պապին զընտրութիւն իւր, և այսպէս առ սակաւ սակաւ սովորութիւն լիցի ընդունիլ հայոց ի հռովմայ զհտստառութիւն սլատրիարքութեան, և կտրդաւորութենոց սպասել, Բացաւյտ տսացից, զի Հաստատութիւն աթոռոյն հայոց յամ ընտրութեան կախումն ունիցի ի հովհայ,

Այս չի քայում տեղի, և ոչ իսկ սկասն խորհի զայդ, զի Հայք ունին իրաւունս անդստին ՚ի Արդքեստրոսէ, զի Ավագուղիկոսունք ընտրութեամբ իւրական ազդին յիւրեանց Եպիսկոպոսաց առնուցուն զձեանալրութիւն, որպէս յայտնի աւանդի ՚ի Ժողով գաւանց, Եպ զայն իրաւունս սկահեալ են և պահեն անխախտ մինչեւ ցայժմ, ըստ որոյ և ոչ տեղի ետուն յունաց յաւուրո շնորհալոյն, երբ կանչին նոքա, զի ընտրութիւն Ավագուղիկոսին կախումն ունիցի զկայսերէն և զպատրիարքէն,

”Ետ և ՚ի ժամանակա Աիլիկեցոց յորժամ ըստ փաթերայից Ավագուղիկոսունք ուղղափառ էն, և ոչ խնդը ըննդաստատութիւն սլատրիարքութեան իւրեանց ՚ի Արքալան պապէն, ուստի և չէ այսն երկարել զբանայալադս արտսիկ: յեր” 813:

Երրորդ գիմադրութիւն այս է: զի եթէ կոնդակ ինչ Հասցէ առ Հայոց ՚ի Բահանայապետէն չընդունին զայն, կամ գանէ կասկածի պապն զընդունելութիւնէ նոցա, և վասն այն յետս կասի ՚ի գըելոյ:

Այդ ըան եթէ ունիցի ինչ ստութիւն ամենեն ոյլազգէք քան զօր կարծեն չարախօսք, զի ոչ եթէ չընդունին, այլ զի ոչ կտրեն: որպէս յայտն է ՚ի նախագրելոցս:

Եւ այս իսկ է պատճառն, զի այժմու ժամանակի հազիւ երբէք զըե պապն կոնդակ յարեւելո, մանաւանդ թէ բնաւ երբէք իսկ չզըե, ոչ վասն անվատահութեան առ որս ունի գրել, այլ վասն զզութեան յերեսաց այնոցիկ ընդուց ձեռամբ կան յարեւելեայցի Բարիստոնեայք, զի որովհետեւ ընդ իշխանութեր այլոց կապեալ կան, ընդ ելանել բանի

՚ի վեր՝ մինչև ՚ի մահ վատնդին :

“Քառ ց գեցուք թէ չկոյցէ վատնել, տա՛ւ առ ին յուլմէ կողմանէ բաւական գժուարութիւն կոյ առաջի, վասն զի այդ կոնդակի եթէ ընդդէմ հլցէ հին սովոր թեաց նոց, այնպիսի սովորութեան առեմ, որ ոչ է ընդդէմ ածառէն և բնական օրինաց, և ոչ ընդդէմ բարի վարոց, ոչ կարէին փոխել, ապա թէ ոչ մհծամհծ խռովութիք և վեասակար դործք զհետ գան որպէս յայտ է ՚ի բազմապատիկ փորձոյ բազմաց դարուց” և այլն :

Եւ մի՞նչ զարմասցիս բնդ այս, վասն զի սմին նման բազում անցը անցանին առ ըստ զումն յԱւրոսլայ ՚ի մէջ ՚Պարետոնեւայ թագաւորութեանց, որոց սի պհական պատրիարք իսկ է սրբազն վեհա, և անհամեմատ տռաւելութեամբ զօրէ բան նորա անմիջապէս առ արեմուեայս :

Քայլ այսու ամիւ, երբ առ նոստ կոնդակի ինչ հասանցի. ՚ի գահէն՝ ոչ առ ժամայն ընդունին, այլ նախ աշխարհական իշխանք և թագաւորք տեղեաց ընդ քննութեամբ ալկանին, և տան քննել ածարանից իւրիանց” և այլն :

Եւ յետ գննութեան իրեւ տեսանեն թէ օդտէ ինքեանց, կամ դիւրաւ կտտարի թոյլ տան զի Հրատարակեացի, տոլու եթէ այլազգ իցէ, մահաւանդ թէ ներկան իցէ հին սովորութեան երկրին, չտան թոյլ Հրատարակելոյ, և այսովէս ոչ պահի այն Հրամանն : Եւ այսմ զլխաւոր պատճառ տան ածարանք նոցա, որովէս յիշեցուք ՚ի նշանակեալ տեղիս, զատհուանութիւն անդորրութեան ժողովրդեան յորում սաւտական են տան պաշտպան յինել իշխանք աշխարհաց, և զայս նաեւ զահն այսովէս կամի ասեն” և այլն :

Եւ արդ քաջ կշռեալ աղոչեմ, եթէ ՚ի մէջ թագաւորութեանց ՚Պարիստոնէից, ուր ամ ինչ կարգաւորեալ է, և ամենեքին յանդորրու վայելին, և դիւրաւ կարեն կատարել, այսպիսի զշուշութիւն պահի, զի՞նչ տօնի է, ապա նկատմամբ հայոց, որոց վեճակ և պայման ամիւ այլ ալզէ, և զոյլ օրինակ մեծադոյն զդուշութիւն պահածի :

“Այս տառանիօր և այլ ինչ նկատելի , ըստ ուղում ծանուցանեն իրաւագետք լատինացւոց , որք փորձ են իրացն , բազում անդամ հանդիպեալ է , զի թեպետ յանուն Քահանայապետի է գրեալ կոնդակ ինչ , կամ յղեալ իբրև հրաման ՚ի գիմաց նորա , բայց ոչ այնպէս՝ որպէս հրամայեցաւն ՚ի քահանայապետէն , այլ փոխօսութեամբ իւիք , այսինքն կամ յաւելուածով կամ նուազութք կամ այլայլութեամբ ոճոյ բանից նորա :

Փահանակ բառիս ՅՈՐԴՈՐԵՄՔ՝ ԴՆԵԼՈՎ ՀՐԱՄԱՑԵՄՔ , կամ ՎՃՌԵՄՔ , փոխանակ բառիս ԱԲԺԱՆ է , ԴՆԵԼՈՎ ՊԱՐՑԵԿ կամ ՀԱՐԱԿ , և որ մեջն է՝ զմաննաւոր Եղերս յընդհանուր շրջելով և այլն : Ա զի ընթերակայ պաշտօնեայք գրողք կամ օրինակողք մասնաւոր դիտումն ինչ ունելով . . . Քազում անդամ որպէս բազմոք հաստատեն իրաւագետք , հանդիսի , զի պաշտօնեայք որբազան վեհին թախանձեալ յայլոց կամ յանձնեց . կարեւոր դտահիլ ինչ կոնդակ կժիռ , և ոչ դտեալ դիպող ժամ , կամ վասն այլոյն կտաման ոչ հանեն յատեան ակտունին զայն բան , այլ միայն իմաստ նորին , և զօրութիւն բանին ծանուցանեն վեհին , և արտաքին հաւանութիւն ընկալեալ : Հրատարակեն զայն յանուն քահանայապետին :

Եթւ ստկայն երբ անյաջող դիպին ելք իրացն , և բընաւ իսկ անհիլ գտանին՝ յետս կոչեն փութով , թօղ զայն . զի երբեմն նոքա որք խօրհրդական ժողովս առնեն կոնդակու գըեն , և թախանձանոք ճոխոցուցեալ զվեհին յանձնարութեան , ասեն ՚ի կոնդակին , թէ ոյսպէս հաճոյ թուեցաւ քահանայապետին , կոմ թէ՝ այսպէս վժիռ եղեւ առանձնական հաճութեամբ պապին , Արդ որովհետեւ ՚ի ստիպելոյ սովորական հարկին ստէպ հանդիպին այսպիսի իրողութիւնք , այլք ևս սովորեալ են քննել և զննել , և առանց քննութեան չընդունել :

Եթւ եթէ այլք այսպէս վարին : Տայք զի՞նչ ունիցին առնել , որք ոչ քննելոյ միջոց ունին , և ոչ զհանդամանս իրացն դիտեն :

Ա ամս որոյ եթէ հասցէտ ոռ նոսա կոնդակի ինչ՝ ոչ
զնի ՚ի դորժ՝, մանաւանդ զի տեսանեն, զի յայնմ կոնդակի չկայ
ինչ նոր, որ ինչ յայլ ժամանակս պէսովէս սլահանջմունք
լեալ են յաղդէն ՚ի վերայ ինչ ինչ ծխից և արարողութեանց,
դարձեալ նոյն բանք ՚ի նոսին ըովանդակին : Եթ զի այն իրք
քաղում անդամ քննեալ և փուձեալ են յառաջին կաթուղիկոս
սաց և ՚ի թոգաւորաց հայոց, և չեն յաջողեալ, և առաւել
յայժմուս չյաջողի ասելով, լոււթեամբ միայն յարգեն, և
այսպիսի լուութեամբ՝ ուրակս և երբեմն պատասխանատուու
թեամբ ՚ի ձեռն միջնորդաց (ո՞յ եւանի եւե անխարդախ հասանէք, առ
քեւելի մինչև առաջապահութեան) ծանուցանեն և ծանուցեալ իսկ են բաւ
զում անդամ, թէ չունիմք կարողութիւն յայսպիսի իրա լինել
ձեռնամուխ :

Սորորդ ընդդիմութիւն այսէ, զի տսեն թէ հայք
ոչ թոյլ տան ումնք ըողոքել կամ աղերս ընծայել դրովե
բանիւ առ սրբազն սկան :

Այդ թէսպէտ ըստ ինքեան սուտէ, բայց թէ և ճշ
մարիտ լինելը ըստ իմիք ՚ի ձեռն վերոյ գրելոց բաւական պատ-
ճառ դորին քաջայայտ լինի, **Այնու այնու նմիւ և այլ հարկե-
ցուցից պատճառ կայ**, որ ոչ թողացուցանէ առնել զայդ յայժ-
մու ժամանակի, յորում փոփոխեալ է վիճակ իրաց և կառա-
վարութիւն :

Այս ճշմարիտ է, զի եթէ որակս էր յառաջին դարու,
նաև յայժմուս նոյնպէս ՚ի ձեռն սրբազն վեհելին մնայր ամ
ինչ, և նա ինքն ահձամբ անձին տեսանելը զդատն, և ինքնին
որոշէր, հայք կամակար մտօք համարձակ թողացուցանէ ին բո-
զոքել ինչ, մանաւանդ թէ աղջն ողջոյն դիմեր առ նա՝ գանդատ
ունելով զփաթերայից” եայլի :

Բայց յարդիս որակս և յայտէ, ձեռք և մատունք
այլոց խառնին ՚ի նոյն, և այն երանի թէ ըստ բարեսէր կամն
նորա : Եթը բողոքէ ոք, կամ զիր աղերսանաց մատուցանէ առ
Արբազն պապն, նա ըստ իրաւանց զդուշաւոր քննութիւն առ-

ԱԵԼ կամեցեալ, անս թէ որպիսի՛ խոհական տնտեսութեամբ և ամենիմաստ զգօնութեամբ փոյժ տանի իրացն, մանաւանդ ՚ի ծանր իրողութիւնս, հրաման տայ, զի քանի մի կարտինալք հանդերձ ածարանօք իւրեանց քննութիւն արասցեն 'ի վերայ իրացն, և ապա յատեան իւր հանցեն :

Պայս իրաւի ըարեդէալ իմն է, բայց այն ածարանօք տես զի՞նչ առնեն, հային թէ այնց վերակացու կարտինալց միտք կամ հաճոյք յոր կողմն մրտեն, և ըստ նմին ջանան ուղղել զընթացս քննութեան, և ըստ այնմ պատճառս խուզին, և ըստ այնմ զկարծիս իւրեանց առաջի դնեն կարտինալց, և նք իբրու ըստ վճռոյ ածարանից կարգեն և որոշեն զբանն, և ըստ այսմ որոշման հաւանութիւն թախտնձեն 'ի սրբազն պապէն :

Եթ սովորութիւն ևս չեք, և անմարթ իսկ է լինել, զի բողոքիչն կտմ աղերսարկուն տացէ կարգել զայլ ածարանս ընդգէմ այնոցիկ ածարանից՝ զորոց կասկածի, և յոչ լինել այսը, այլ աղք դիպին ելք իրաց, թէ ոչ միշտ՝ գէթ յոլովակի” :

Օքինակ բերէ աստանօք զտեցս Սեղբռսին, և ցուցանէ թէ զի արդ կարդինալք ըստ հաճոյից իւրեանց ընդ հակառակն շրջեցին զերոն, մանաւանդ ասէ Անդոնիլէն որ հակառակ գոլով գործոյն Մաքելի ըստ գրգռութե փաթերայից, զիրսն այլադք վճարեցին, և կնքէ զբան իւր այսոքիւկ :

“Բայց արդ որովհետեւ այսպիսի վճարին իրք ՚ի հռովմ յայսմ ժամանակի, պակասի յօժարութի բողոքելոյ կամ աղերսանս մատուցանելոյ :

Օ այս քաջ գիտեն հայք, և զիորձն իսկ առեալ են բազմօք ՚ի ժամանակս Առուբենեանց, զորս լաւ է լուելն : Տեսալ ևս են, զի այսպիսի անձինք պաշտօնեայք ճշմարտութե, և թեակից գործունեայք նոցտ առաւել ունկն դնեն չարախօսաց, քան բարեխօսաց, զըստարտչաց քան իրաւախօսաց, սմին ելի և չառնեն իսկ բողոքումն ինչ, և չպարտաւորն առնել, զի ոչ ժամանեն ՚ի նպատակն ” եայլն :

Հասացելոցս աստի դիւրաւ իմանան ընթերցնելք, զի աղք մեր չունի ինչ ընդդիմութիւն առ սր գահն առաքելական,

այլ լընդունին զնախագահութիւնունուն : Բայց արտաքին ոսոխք մեր չտեսեալ զըստ հաճոյս իւրեանց նշանս արտաքինս ՚ի վը նոցա , պէօպէս չարախօսութիւնս յօդեն , թէ նոքա մերժեն զգահն , այսպիսի են և այնպիսի ” եայլն :

Արք զայսպիսիս խօսին , ոչ հայոց ինչ սահանեն , այլ անձանց իւրեանց վնասեն , և անձամբ զանձինս պարտաւոր կացուցանեն յատենին այ և եկեղեցւոյ ” : յերես 818 :

ՅՈՒՅ. Ե .

ՊԼԱՍՏՈՐՈՒՄՆ ՊՈՐՃԱՅ :

” Ի վախճանի ծանիր , զի միաբան և անմիաբան լինել ընդ առաքելական գահին . չէ կախեալ զայդպիսի վերոյ գրեալ արտաքին իրաց , և յընդդիմութեանց չարախօսաց , այլ ՚ի ներքէն ճանաշման և յընդունելութեան գլխաւորութեան աթոռոյն Պետրոսի և յաջորդաց նորա :

Օ ի ճշմարտութիւն ոչ է յեցեալ յայդպիսի դիւրափոխս նշանս . որք կարեն լինել կամ ոչ լինել , այլ անպյլայլելի ճանաչումն , որ և սերտ տպեցեալ է ՚ի միտս հայոց , մինչեւ չէ մարթ իւիք եղծանել :

Ամին իրի երբ ոք ճանաչէ և խոստովան լինի զնախագահութիւն առաքելական աթոռոյն : Թէ և չունիցի զայդոսիկ նախայիշատակեալ արտաքին նշանս : ոչ իւիք պարտաւոր գտանի : Այս թէ և արտաքին թշնամութիւն ունիցի ՚ի պատճառս արտաքին իրաց , որով և մեղանչէ , բայց այսու բանիւ ոչ տսի մերժող իշխանութեան կամ բաժանեալ ՚ի գլխոյ , որպէս լիով ունիս գտանել ՚ի գլուխ : Փակա ” :

Աստանօր ցուցանեւ թէ հայք ՚ի սկզբանէ և այսր կացին մնացին յաւղաղակառութեան , որպէս և այժմ են ուղղափառ , և ապա յարեւ :

” Ոչ հաւատան փաթերայք այսմ , և կարեն իսկ ՚ի դէմս ածել մեղ զռամլական առած , աստէ փորձաքար , և առ աներերայ հաստատելոյ զոչ հաւատալոյն զպատճառս : և ՚ի սուտ հա-

նել զմբ ասոցեալքո , թերեւ զփորձ առնուլ հնարեցին . և հարցանիցեն գրգռութեամբ ումն ՚ի հայոց անտի , թէ դռը ընդունիս զպասին հռովմայ :

Առ ոյդ հարցուած զմի յերկուց անտի ունի ասել հայն , կամ ասելոց է թէ չընդունիմ . և կամ ասելոցէ թէ ընդունիմ : Արդ դիցուք թէ ասիցէ նա զառաջինն , այսինքն թէ ես հայ եմ , ոչ ընդունիմ : Տես դու այսու հետեւ զհրճուանս սրտի փաթերային , ժամի զժամի ունի հարկանել , իմէ ՚ իմէ յաղթութիւն ասելով , և թէ ՚ի հիմանց , որովէս խօսի հեղինակն այդը դոս ” եալն :

Հայց լուր թէ զի՞նչ ասէ հայն այն առ փաթերայն , թէ փաթերայ իմաստուն՝ դու զիմ բանս չիմացար , և յայն սակա խնդաս , զի եթէ իմանայիր՝ կարծեմ թէ փոխանակ խնդալոյ՝ թախժաղին տրտմէիր , դու յի՞նչ միտս հայիցիս , և իմո պատասխանի ըստ մտացէր :

Ա ամս զի յասելո՛քոցիս , թէ դու ընդունի՞ս զպասն հռովմայ , դիտումնոր քո այս էր , զի իմացիս , թէ արդեօք ես ընդ պատրիարքութեամբ պապին իցեմ , կամ ՚ի վիճակէ նորա , եթէ ընդ այլով պատրիարքաւ կամ ընդ վիճակաւ կաթուզիկոսի , նմին իրի և ես զուղիղն ասացի , թէ ես հայ եմ , ոչ ընդունիմ , այսինքն ոչ ճանաչեմ ինձ յառաւկ պատրիարք ըդպատրիարքն Վյուանիաց , ոչ ընդունիմ ինձ կաթուզիկոս զպասն ձեր , ես իմումս ազգի պատրիարք և կաթուզիկոս ունիմ :

Եւ յայս միտ եթէ ասեի թէ ընդունիմ , սխալէի , քան զի պասն ոչ է կաթուզիկոս ազգին մերոյ , այլ Փռանկաց կաթուզիկոս է , իսկ եթէ ոչ այս էր քոյդ դիտաւորութիւն ՚ փաթերայ , այլ յայս միտս խօսեցար , որովէս թէ ընդունիս զպասին ասելով զընդհանուր իշխանութիւն նորա իմանայիր . իբրև գահա գլուխ ամի , յայնժամ անխորհրդաբար և առանց մտածութեն էր քո հարցանելո՛ք , զի ոռօք ՚ի հայոց տարակաւսեալ իցէ երբէք ըստ այդ , կամ յերկրայս անկերալ , մեք թէ յորժամ Պաղոս Պետրոս ասեմք , իմանամք առաջին և ուլսուոր ամուռ .

՚ի մէջ եկեղեցւոյ , որոյ գահանիստն է Հրամանան Հզօրյընդ-Հանուր եկեղեցիս , զլխափոխան Քրիստոսի : Եւ ահա ոչ որպէս կարծէք ՝ այնպէս ետես զհայն :

Քայց և այն իսկ յայտ է , զի թէ Հայն չուներ ինչ կարծիս կասկածանաց ՚ի փաթերայից , վասն ՚ի Փուանկութիւն զինքն ձղելոյ ՝ այլ ազգ ընծայէր զպատասխանին :

Հայն ՚ի միտո եղեալ է թէ , երբ փաթերայք պատ-Հանջին ՚ի Հայոց Հնազանդութիւն առ պասին , նովին կամին ես , զի Հայք ելցեն ՚ի Հնազանդութենէ Ավթուղիկոսին կամ պատրիարքին իւրեանց

Եւ սակայն եթէ փաթերայք փոխէին զընթացո իւ-
րեանց , և յորդորէին զհայս , զի Հնազանդ Լիցին ամիւ պատրի-
արքին կամ Ավթուղիկոսին Հայոց ՚իրը սեպհական Հովուի և
անմիջական առաջնորդի , յայնժամ եթէ յաւելուին հարցա-
նել ցհայ ոք եթէ ընդունի՞ս դու զպասին , զայն այսն համար-
ձակ առնուին պատասխանի ” ևայլն :

Քայց որովհետեւ այժմու փաթերայք յայս միտ չհար-
ցանեն , և ոչ իսկ կամին , այլ ըստ առաջին մտաց , և զնոյն խնդ-
բին , վասն այսորիկ և ըստ առաջնոյն զոչն առնուն պատասխանի :

Ո՞ն արդեօք յառասպելոց սակի համարեսի ոք զա-
սոցեալս , ստուգապէս և իրօք այս այսպէս է , այսպէս է լեալ , և
այսուհու լինի , քանողի փաթերայք պատ ընդունիլ ասելով . . .
կամին զի ամենեքեան իրը անմիջական սկատրիարք ընկալցին
զպասին , և այնու օրինակաւ ստիսլեն զհայս , և ըստ այսմ Հայք
իրաւամբ զոչ ընդունեմն ձայնեն , և պատճառս ՚ի վերայ ածեն
ասելով . թէ վասն զի մեք Հայեմք , և ունիմք մեզ մասնաւոր
Ավթուղիկոս : Խսկ վասն ընդունելոյ զդլիստորութիւն պապին ,
ոչ երկբայութիւն ինչ և ոչ ընդդիմութիւն ունին : Եւ եթէ
դտոյին ոմանք գիմադարձ դտանիլ , միշտ վասն վերոյ գրեալ
պատճառի է ընդդիմութիւն այն , այսինքն ընդդէմ մտաց փա-
թերայից , որ յիրում ոչ է բնաւ ընդդիմութիւն :

Ապացոյց լինի այսմ այն , զի թէ Հայն համանդամայն

ուղղուկի պատասխաներ առ փաթերայն , թէ այս ընդունիմ եւ զպասի , փաթերայն անմիջապէս ուներ զհետ քերել (որու և բառած անդամ աշարեաւ էն և առանեն) ասելով , զի արդ ապա հնագանդիս դու պատրիարքին հայոց և Աթուղիկոսին հայոց , և ոչ մտանես ընդ ձեռամբ պատվին :

Տեսանես , թէ յորում լետ իցէ զօրութիւն հարցման փաթերայից , փաթերայն ընդունիս զպապն ասելով , իբրև յատուկ պատրիարք ընդունել տադ կամեր , արտաքսմամբ պատրիարքին և Աթուղիկոսին հայոց , նմին և հայն ուղիղ պատասխանի կամելով տալ ըստ մտաց Հարցանողին հարկեցաւ ասել , և Հարկի իսկ է ասել չընդունիմ : Եւ 'ի լսել'ի փաթերային զայ ընդունիմն , չպարտի դա թակլիլ , զի յենչ միտսեհարց , և 'ի նոյն միտս զիւր պատասխանի ընկալաւ :

Ո այսոսիկ ըստ խստութեան ոմանց խօսեցաք , բայց կամելով և խստացուցանել առ սյսպիսիս զքան մեր , բայց ճակապէս ասել կարեմք , թէ այդպիսի հարցուածք ոչ են պատճառ շինութեան այլ գայթակղութեան :

Ա ամս զի ոչ է հարկ իւրաքանչիւր հաւատացելոց , մանաւանդ պարզամտաց գիտել որոշուկի , թէ պատի է գլուխելիղեցւոյ , կամ 'ի վեր քան զամ պատրիարքունս եայլն , զի այդ հովուաց կամ առաջնորդաց է անկ , միամիտ ոչխարքն զիւրեանց անմիջական հովիւն տեսանեն : ուր և իցէ , և թէ յարելս և եթէ յարեմուտս յիւրաքանչիւր թադաւորութեան , և ամենեքեան լռելեայն իմն գիտեն , թէ 'ի հարկէ հովուաց կոյ գլխաւոր հովուապիտ , զոր հովիւքն սարտին ձանաչել , և այն ևս , ոչ է առարկայ բացայայտ հաւատոյ , այլ առարկայ պարունակմբ : Աւստի իւրաքանչիւր հաւատացեալք եթէ առաջնորդք և եթէ ժողովուրդք 'երբ հաւատան 'ի մի միայն Աթողիկէ և առաքելական ոչ եկեղեցի : զի գիտէ շինեալ 'ի վր վիմին հաւատոյ եկեղեցին , հանդերձ անդամովք և զլխով . և այս բաւական է առ պահպանութիւնն ուղղափառ հաւատոյ , և ոչ ևս այլ պարագաւորի հարկաւ բացայայտ և բացորշեալ իբր

անձին հաւատով հաւատալ ՚ի բան գլխաւորութեան եկեղեցւոյ, ապա թէ ոչ, նա և յԵւրոպին ըազումք ՚ի պարզամիտ ժողովրդոց չզերծանին անարատ :

Եւ զի այս այսովէս է, յորժամ յառնէ ոք հարցանէ գրգռութեամբ զայլ ոք, և հետադրդռութեամբ խռովելն այսր ըանի, ոչ պարտի ՚ի վտանգ արկանել զնա, զի այսու ճանապարհաւ զնորա լոելեայն հաւատալն ես կարէ վտանգաւորել, վասնորոյ և պարտաւոր գտանի հոգւոյ նորա, և յոյժ գժուարին լինի գտանել զիժողութիւն առանց շնելոյ զմիտս վտանգելոյն, և սակաւ գժուարինէ և միւսանգամ շինել զմիանգամ խանգարեալն :

Օ առ պարտ է խոկալ առաքելական փաթերայից և նմանեաց նոցա, և ըստ այնմ զզուշութեամբ վարիլ, ոչ լոկ ըզմիամտութիւն աղաւնոյ ունել, այլ և զխորագիտութիւն օձի, որպէս և տէրն սլատուլը ”: յԵրես 824 :



**Յաղագս ազատ զոլոյ եկեղեցւոյ հայոց
՚ի հերիտիկոսութենէ և ՚ի հերձուածողութենէ :**

”**Թ**աէ ուղղափառութիւն հայոց ոչ արատաւորի ՚ի բանից վայրախօսաց և չարախօսաց :

Օ որ ինչ միանգամ խօսեցաք ՚ի սկզբանէ մատենիս մինչեցարդ, իբրև զլոյս պայծառացեալ ցուցանեն զողջմտութիւն և զուղափառութիւն և բարեկարդութիւն եկեղեցւոյ հայաստանեայց, ոչ եթէ մերովս ասութեամբ, այլ իրացն իսկութեամբ, քանզի մեք սովին մատենագրութեամբ ոչ իբր նոր ինչ պայծառութիւնաւելաք այդմ լուսոյ, այլ միայն ՚ի հանդէս ատենի իբրև ՚ի վերոյ աշտանակի եղաք ոռ ՚ի փարատել զստուերօ խաւարեցուցիչս զառ ՚ի թշնամեաց չարախօսութենէ նիւթեալն: Եւ յուսամ թէ այսուհետե ոչ մնաց մթագնութե

աեղի , այլ ամ ինչ բացայաց Փայլմամբ 'ի վերերեցաւ , որ սկզբամ ճշադն նշողիւք լուսաւորեցէ ” :

Յետ սակաւ մի բանի ասէ :

“Վեք 'ի մասնաւորի խօսեցաք և ցուցաք անպատրուակ , թէ սուտ է ամ զըպարտութիւն նոցա : Ուստի ոչ կարեն ևս 'ի մասնաւորաց առիթ առնուլ և ձեռնարկել : Այլ ընդ հակառակն մեք ձեռնարկեմք ասելով , որովհետեւ չունին հայք այդպիսի մոլորութիւն , ասլա ոչ են մոլորեալ , այլ ուղղափառ :

Այլ որպէս զի մի կարասցեն և ոչ 'ի միոյ կողմանէ բերան բանալ , տեսցնեք այժմ նաև ընդհանրապէս զան ընդհանրական ասացուածս իւրեանց , զոր 'ի հասարակի 'ի կեր առնուն , թէ հայք հերիտիկոս են կամ հերձուածող :

Ապա եթէ այնու ամիւ չկամիցին 'ի միտ առնուլ , այլ յամառեալ սրտիւ փակեցեն զաքս իւրեանց , և սնդեսցեն 'ի բանս պարապորդս , ինքեանք դիտեն , ոչ նոցին ասացուածովք աղդ մեր խաւարի , և ոչ նոցին թիւր ճանաչմամբ աղդ մեր թիւրի , այլ որ ինչ էր մնայ նոյն , այսինքն լուսաւոր և ուղիղ 'ի հաւատս Քըրիստոսի : Ա ամս զի յայտ է թէ , որ ինչ է յինքեան ուղիղ՝ չկորուսանէ իւիք զիւր ուղղութիւն թիւր ըմբռմանէ և 'ի խոտորնակ բանից չարի ” :

Յետ սակաւոց յարէ :

“Եւ արդարե եթէ բանիւ զըպարտչաց էր կշռելի իսկութիւնք իրաց , վեր 'ի վայր շրջէին տիեզերք ամ , և ամ իւտուունք ածային և մարդկային՝ անհետ լինեին :

Ապաքէն թշնամիք Տն մերոյ յուղեալ ի դիւէն դիւահար ձայնէին զՓրկիչն աշխարհի : մոլեգնեալ կոչէին , հակառակ ասէին , և այլ անհամար լուտանս տային , մինչեւ մահու խոյտառակութեան իսկ դատիցեն զնա , և մի թէ բանիւ կամ գործով դոցա կարէին լսողք ուղիղ դատաստան առնել : Վենչեցադ հրեայք և հեթանոսք հայհոյեն դՔըրիստոս զուղին այ , և մի թէ կարէ ոք ունենուիր լինել բանից նոցա , և ըստ նմին թիւրել զմիտս 'ի վերայ Քըրիստոսի ” :

Զենե այսպիսի այլ ևս բանից ասէ :

“Երկար խօսիլ զայսմանեւ չէ ինչ օդուտ , դործ է թ գործ դնել , ամենեքեան զիտեն ” թէ պարտ է այսպէս զգուշաւթիւն առնել , բայց ու կայցէ արդեամբ զգուշաւոր :

Օ այս զիտելով ոչ զարմանամք , զի թշնամիք մեր պէսպէս չարիս ստայօդեալ վայրախօսին զազդէս մերմէ , և այլք ևս ունին դնեն չարախօսաց :

Եւ սակայն չկարեմք տանել այժմ , զի հերիտիկոս և հերձուածող կոչեն , վասն զի չէ մարթ համբերել ’ի նիւթ այսպիսի , և այն զի բազում անգամ ?ի մեղս համարի համբերելն ՚ի գմին , և ոչ լինի զերծ ?ի գայթակղութենէ :

Եւ ըստ այսմ ընթեռնումք ’ի վար , աշբանց զի երբ առէին ումեմն ’ի սրբոց , թէ դու չարագործես , դող , և մարդասպան եայլն , նա առ խոնարհութեն սկատասխանէր զայն , և առաւել ես . մեղաւոր եմ ես ; Բայց ասացին ցնա թէ , հերիտիկոս ես դու կամ հերձուածող , իսկ և իսկ ընդդէմ դարձաւ ասելով քայլ լիցի , զայդ չառնում յանձն , ըստ այսմ և մեք ահաւադիկ ?ի դիմաց ազգիս խօսելով ասեմք . թէ ոչ իւիք առնու յանձն եկեղեցին հայաստանեայց , զի հերիտիկոս կամ հերձուածող համբաւեսցի :

Եւ իրաւամբ նզովս արձակէ զինի այնոցիկ ’որք միանգամզայդպիսի կեղտ անուն դնեն ’ի վերայնոցա յանիրաւի և յանդնութեամք , ապա թէ ոչ ’և ազգ մեր այլում ընծայել կարէ զնոյն անուն , զի որովհետեւ ինքն ուղղափառ գոլով՝ հերիտիկոս կամ հերձուածող կոչի յայլմէ , ինքն ևս իրաւամբ կարէ նոյնպէս կոչել թշնամանիչն իւր , և ասել թէ ’ դու ես հերիտիկոս . և ոչ դիտես ճանաչել դուղիղն կամ զթիւրն ” : Եւ զի ազգ մեր չառնէ այլոց զայդպիսի թշնամանս այլ ուղղափառ և հաւատակից ճանաչէ զնոսին , նոյնպէս պարտէ և նոցա ճանաչել զհայս ուղղափառ և հաւատակից , մի մարմին և մի հոգի” :

Եերես 827 :

Զենի այսորիկ աստուածաբանեօրէն Ճառէ հերիտիկոսութենէ և զբա-

Ժանմանէ նորա , և ՚ի վախճանի յարե զայս :

“Օ այս ամ փոքր մի ճոխագոյն վասն այն եղաք առաջի , զի ինքնին զհետ բերցեն լնթերցողք զհետեռւթիւն որ է նպատակ մեր , յդ է՝ թէ հայք ոչ կարեն ասիլ հերիտիկաս . . . զի թէ քաջ ՚ի մետ առցեն զբանս վերոյ գրեալ ածաբանից և հարց , թէ զինչ ինչ պահանջի առ հերիտիկոսութիւն , տեսանեն աչօք բացօք զի ոչ իւիք պատշաճի եկեղեցւոյն հայաստանեայց , որպէս և յայտ է յիւրաքանչիւր խնդրոց անտի , զորոց խօսեցաք ’ի մատենի աստ մինչեւ ցայժմ : Ա ամս զի զոր ինչ ամբաստանութիւնն և առնեն չարախօսք ’ի վերայ ազդիս հայոց առ ՚ի ցուցանել հերիտիկոս , կամ ծիսական ինչ է , կամ անդիտացեալ ինչ է , յդ սխալանք դորժոյ , և կամ տարբերութիւն բառի , ծէնն (Տանտառն եթէ ւեօէ ըստ ինչեան շաբ ինչ) ըստ վճռոյ ածաբանից ոչ առնէ զոք հերիտիկոս . . . իսկ բառն մանաւանդ թէ յուղիղ միտո իմասցի ըստ ինքեան չունի ինչ կցորդութիւն ընդ հերիտիկոսութեն , և անիրաւութիւն մեծէ ’ի սակոտարբերութեան ձայնի հերիտիկոս կոչել զազդ մի , զի Աչ եթէ բառն , այլ բառիւ նշանակեալ թիւր իմացուածն (Յանձ ու Եւր Կտայանդէ) վերաբերի առ հերիտիկոսութիւն . . .

՚Ծ սակայն որք սովորեալ են ոչ ուղիղ ակամք հայել ՚ի վերայ ազդին մերոյ , չառնուն ’ի միտ զայսպիսիս , և ոչ հայելով յաջ կամ յահեակ . անուն կեղտ հանեն , և զուղղափառն հերիտիկոս կոչեն ”: յերես 834 :

ՅՕՒ”, Գ.

“Ո՞ւ քանի” ծանր վնասք և վտանգք կարեն յառաջ գալ , երբ անխորհրդաբար հերիտիկոս կոչէ ոք զայլս : ՚Երանի թէ զայս և եթ մտածէին չարախօսք մեր , որով անձնապահ լինէին ’ի վայրախօսութեց և յանիրաւ զրտարտութեց : Քանի քանի վնասք և վտանգք մարթին յառաջադայիլ յանզդոյլ բանից , որով ոք անխորհրդաբար՝ հերիտիկոս կոչէ զայլս : ”

Ցետոյ մի առ մի թուէ զվահան , և ցուցանէ թէ միայն փաթերայքն

Ե՞ս , որք հերիտիկոս կամ հերձուածող կոչեն զհայս , և յաւելու :

“Ուր թողից զայն , զի այսպիսի ինքնագլուխ անձինք , ոչ միայն հերիտիկոս կոչեն զհայս , այլ և ենթադրելով հերիտիկոս լինել՝ զգուշացուցանեն զայլս չհաղորդել ընդ նոսա : Բայց այսու ոչ միայն անիրաւին յոյժ յոյժ , այլ և ընդդեմ բանս զործեն , զի նախ պարտէր նոցա կարողանալ առ ՚ի հաւաստեցուցանել զհերիտիկոսն լինել . և յետ ցուցանելոյն այսպիսի դժուատեհ անկարգութեան զհետ կըթել :

Աւստի “Կաւարոս աֆաբան և օրէնսդէտ ” անգոսնէ զանխոհեմութիւն այդպիսեաց , քանզի տեսեալ սորա , զի ոմանք ’ի լատինացւոց խնդիր են հանեալ յաւուրս իւր (այսինքն ’ի կանաչու շուրջուանեւու տառան) բանիւ փաթերայից , թէ արդեօք արժան իցէ հաղորդակցութիւն առնել յաֆայինս ընդ եկեղեցին հռովմայ և ընդ եկեղեցին հայոց , զարմանալով իմն ՚ի վը իլացդ խօսի , իբր նորալուր իմն համարելով յասելն ’ի գերս խոր ” կամ պատասխանատուութե , Ու . Ը . գերք Ա . յաղագս սահմանադրութե խորհրդոյ , Ա . խնդիր Լ . Ը ըդ խնդիր (ասէ) ենթաւէլէ թէ հայք ՚ի թիւս հերիտիկոսաց իցեն համարելի , և սակայն այդ ոչ երեխ ունել զտեղի , կամ հաւաստի լինել որէ ըստ լատին բառ ին ՓՕՆՍԹԱՐԻ : Կամի տսել , որք զայդ խնդիր յարուցանեն , սկարտին նախ ենթադրել թէ հայք հերիտիկոս իցեն , և տալա ըստ այնմ պահանջել , թէ արդեօք մարթ իցէ հաղորդակից լինել ընդ նոսա : Բայց ուստի յայտ է , թէ հայք հերիտիկոս իցեն , զի այդպիսի խնդիր յարուցանելոյ պէտք լինիցին ” :

Զկնի բազմապատիկ բանից կարգէ և զայսոսիկ :

“Խնդիր դնեն աֆաբանք , թէ նա որ համարի զիմն լինել ’ի հաւատոց , որ իրօք ոչ է ’ի հաւատոց , և որ համարի զիմն հերիտիկոսական , որ իրօք ոչ է հերիտիկոսական , ընդ որովհիս յանցանօք անկանի :

Պատասխանի տան միաբան , թէ մոլորի ընդդէմ հաւատոյ , և եթէ յամառութիւն ևս ունիցի՝ պնդելով զիւր

կարծիս անդրեն անկանի ՚ի վտանգ հերիտիկոսւթեան” :

Յետ բազում բանից եղբակացուցանէ ասելով :

“Արդ եթէ ճշմարիտ իցեն վճիռք ածաբանից, դժուարապէս կարեն զերծանիլ ոմանք ՚ի փաթերայից և ՚ի կաթոլիկ ժողովրդենէ, գո՞նէ ՚ի վտանգոյ և յարատոյ հերիտիկոսութեան : Ա ասն զի զբազում ինչ իրս՝ յորոց վերայ անորոշ և տարբեր կարծիք են, և չեն որոշեալ յեկեղեցւոյ, ինքեանք ամ ողւով պնդեն ընդդիմ հայոց, և ամ յամառութե հաստատեալ են ՚ի կարծիս իւրեանց, թէ այս ինչ ՚ի հաւատոց է, զայս ինչ առնելն կամ չառնելն հերիտիկոսութիւն :

(Օրինակ իմն, ըստ վարդապետութեան կաթողիկէ եկեղեցւոյ, և ըստ մեկնելոյ ածաբանից, եկեղեցին այսչափ ինչ միայն սահմանեալ է, թէ հոգիք ննջեցելոց, որք ճշմարիտ և ուղիղ հաւատով ՚ի ՚ի ննջեցին, եթէ ունիցին ինչ մնացուած արատոյ կրեն նեղութիւն և տանջանս ըստ չափու պարտեացն ՚ի հանդերձելումն : Այս է բան հաւատոյ ՚ի սբ ժողովն :

Արդ քաջայայտ է, զի ոմանք ՚ի կաթոլիկ ժողովրդենէ և ոմանք ՚ի փաթերայից առ ՚ի ընդդիմանալ հայոց և ցուցանել հերիտիկոս ՚ի բրե հաստատուն վարդապետութիւն հաւատոյ մուծեալ են ՚ի միտս բաղմաց, թէ այն տանջանք է հրոյ, և թէ յայս ինչ վայրի է :

Եւ այնչափ յեցեալ են յամառութեամբ ՚ի կարծիս իւրեանց, և այնչափ սնդին զայս, մինչեւ աղատաբերան հերիտիկոս ձայնեն զայնոսիկ, որք միանգամ դոյզն ինչ ընդդիմութիկամ տալսակայս ցուցանեն առ այս կարծիս նոցա :

Եւ թերեւս բազումք այնպէս յամառեալ իցեն, զի թէ և եկեղեցին վճռեալ ունիցի, թէ որ ոք ասեցէ հուր լինել յայնմ նղովեալ լիցի, կարծեմ թէ մերժեսցին զայն ոմանք յայտնի, և ոմանք լոելեայն : (Օ ինչ ապա, զ՞ո այժմ պարտէ հերիտիկոս համարել ըստ ածաբանից, արդեօք զայն որք յերկրայս մնայ ընդ այս, եթէ զայն որ յամառութեամբ հաւատասցէ իրեւ բան հաւատոյ ” :

Պարձետը ըստ վճռյ կաթողիկէ եկեղեցւոյ , և ըստ վարդապետութեան ածարանից յայտ է , զի առ իսկութիւն նիւթոյ պատարագի պահանջի միտյն հաց և զինի , և այս է բան հաւատոյ : Խսկ եթէ հացն բաղարջ իցէ կամ խմարուն , գինի ջրախառն լիցի կամ անջուր , ոչ վերաբերի առ հաւատս , այլ առ Տեղիբլինայս , ոք առ բարեկարգութիւն ժիսից եկեղեցւոյն

Արդ քաջայայտ է այս , զի փաթերայք մուծետալ են ՚ի միտս կաթոլիկ ժողովրդեան , և անսասանելի յամառութիւնատետեալ ընդդէմ հայոց , թէ որ առանց ջրոյ պատարագեացէ : Հերիտիկոս է : Եւ զի՞նչ պարտէ ասել այժմ , ոչ ապաքէն այդպիսի իրաց ուսուցիչն հերիտիկոս դատի , և ոչ որ ոյսպէս կամ այնպէս ունի սովորութիւն ” :

Զկնի համառատիւ կարգելոյ և զոյլ արարողութիւնս , բերէ և զայս ՚ի մէջ :

“Այնչափ զի և վասն ուտելոյ կամ չուտելոյ զձուկն , այս կարծիք է մտետալ յոմանս : Ուստի ՚ի բազմաց կաթոլիկաց բերանոյ լսի ասել , հերիտիկոս լինիմք եթէ հրաժարեսցուք ՚ի ձկանց և ՚ի գինւու , և ՚ի ձեխոյ յաւուրս պահոց , կարծին թէ հերիտիկոսութիւն ուղղափառութիւն յայսպիսի իրս է կայացեալ :

Եւ թէպէտ ինքեանք պարզմառւթեամբ խօսին զայսպիսիս , պատրետալ ոմանց ՚ի փաթերայից , բայց յայտ է թէ , առաջի ոչ ոչ դիւրաւ արդարանան , որովհետեւ անխորհրդաբար յայսպիսի զրոյցս բերելով , թշնամանս դնեն այլոց , և այն ՚ի նիւթ բարեկարգութեան , և զիւրեանց անկարգութիւն ուղղափառութեն նշան կարծելով՝ զայլս հերիտիկոս կոչեն : Եւ եթէ նոքա այսպէս , քանի՛ ևս ուսուցիչք նոցա , որք խորշելն ՚ի բարւոյ՝ բարեգործութիւն դատեն :

Բայց լաւը զի՞նչ ասեն իմաստունքն ՚ի նոսա , զոր ստէպ լուերալէ մեր ականջովք մերովք , եթէ զովելի համարեսցուք զայդպիսի սովորութիւնս հայոց , և ոչ խրշեսցուք ՚ի ծիսից անտի նոցա իբրև ՚ի հերիտիկոսան իրաց , զի՞նչ մնայ

այսուհետև խտիր ընդ հայն և ընդ կաթոլիկն , ապաքէն և ոչ
ինչ , և այսպէս գառնայ կաթոլիկութիւն և հայութիւն :

Այսպէս Հանդիսացեալ առաջն է ապացոյց վերջին ,
թէ Հայք ամենեին ուղղափառ են , և չունին քնաւ արատ հերի-
տիկոսութեան , զի թէ յարտաքին ծէս և 'ի սովորութիւնս
նոցա Հայելով որոշեն զշարափառութիւն , հարկաւ խոստովա-
նին թէ ոչ են տեսեալ 'ի նոսա նիւթ մոլորութեան բաց յայս-
ուիսեաց աստի ” :

ՅՈՒԴ. Դ.

Յետ փոքր ինչ բանեց զնէ զսահման հերձուածողութեան ըստ սր-
բոյն Թուլմայի :

“Ի՞ամ անումն՝ որով ոք կամաւորպէս ոլոշէ զինքն
'ի միութենէ մարմնոյ եկեղեցւոյ :

Հայսմ ամէ ըստ բացատրութեան այլոց աշաբանից
առ Հասարակ՝ կարէ յայտնի լինել , թէ քանի՛ տայմանք պա-
հանջին առ 'ի լինել տեսականապէս և իրապէս հերձուածող :

Հայտնի և հարկաւոր պայմանքն ըովանդակին 'ի հըն-
դեսինդ յայդոսիլ :

“Եաւ զի հերձումն կամ բաժանումն իցէ իրական և
ներգործական , կամ այսպէս ասացից , յիշն և ոչ 'ի համբաւն :

Երկրորդ՝ զի իցէ կամաւորական կամ դիտմամբ ,
այնպէս զի լիցի վճռով ժողովոյ հերձելոցն , կամ յայտնի
դրօշակաւ պառակտմամբ :

Երրորդ՝ զի իցէ ընդհանրական , յո զի իցէ բաժանեալ
'ի լրութենէ ընդհանուր եկեղեցւոյ , և ոչ սոսկ ՚ի մասնաւորէ :

Չորրորդ՝ զի իցէ դրական ապատամբութե 'ի գլխոյն ,
և ոչ սոսկ յանդամոյն :

Հինգերորդ՝ զի իցէ ընդ ներքին միութեան քակ-
տումն , և ոչ ըստ արտաքնոյն : Չորոց մի առ մի խօսեսցուք :

Ուստ Առաջին էական պայմանին , առ 'ի լինիլ տեսա-
կանապէս հերձուածող , պահանջի զի իրապէս և ներգործաբար
բաժանեալ իցէ ոք անձամբ զանձն 'ի միութենէ եկեղեցւոյն

• Բարիստոսի, և եթէ չիցէ արարեալ զայսպիսի քաժանումն , այլ այնպէս թուեցեալ յաջս ոմանց , ոչ և ոչ ասի հերձուածող : Վասն զի յայս նիւթ չկարէ 'ի մէջ մտանել զի՞նչ և իցէ ամբաստանութիւն կամ չարախօսութիւն կամ սուտ համբաւ թշնամնաց , որով մարթ իցէ զոք ըստ իրին հերձուածող կոչել , այլ պարտ է հայիլ յիսկութի իրին , այնպէս զի եթէ • Բարիստոնեայ ոք կամ եկեղեցի մի կամ աղդ մի , իրօք բաժանեալ իցէ զի՞նքն յլնդհանուր եկեղեցւոյ կամ 'ի գլխոյ նորա , եթէ դիտացեն այլք , և եթէ ոչ , իրօք հերձուածող լինի , և ոչ է անդամ եկեղեցւոյ յիւրում , առաջ թէ իրօք չիցէ բաժանեալ զի՞նքն , ոչ լինի հերձուածող , թէ և բովանդակ աշխարհ չալախօսեսցէ զայսպիսոյն , կամ համարեսցի զայնպիսին իբր հերձեալ :

• Եվ վկայութիւն բերէ աստանօր զբանս Պուսիդայի , որ ասէ թէ , Եկեղեցին Գաղղիացւոց ոչ է հերձուածող յաղազս բաժանելոյն ու զի՞նքն յայլել , և ոչ զայլն յի՞նքենէ , և ապա մակարերէ :

“Այս իմաստալից ձեռնարկութիւն Պուսիդայ , նովին եղերօք գեղեցիկ յարմարի և մերումս նպատակի : Վասն զի լրկեղեցին հայոց ոչ ելլեքք բաժանեալէ զի՞նքն յումիքէ , այսինքն 'ի գլխոյն եկեղեցւոյ կամ 'ի հարազատ անդամոց նորա , և ոչ զոք այսինքն զգլուխն կամ եկեղեցին բաժանեալէ յիւրմէ : Ուրեմն ինքնին ստի անուն հերձուածոյ , զոր գնեն թշնամիք 'ի վերայ աղդիս հայոց :

Բատ երկրորդ պայմանի առ 'ի լինիլ հերձուածող պահանջի , զի այսպիսի բաժանումն լինիցի կամաւորապէս , և մասնաւոր դիտմամբ , որով ոք կամի ասլստամբութեամբ իւիք ինքնադլուխ երեխիլ , այնպէս մինչ դնել 'ի մտի չանսալ բնաւիրաւանց եկեղեցւոյ , այլ լինիլ անձամբ անձին օրինադիր և կառավար , մնալով իբրև անդամ զատուցեալ :

Եւ ապա բազում բանիւք ցուցեալ թէ հայք միշտ ընդունին զիաթողիկէ եկեղեցին , բերէ 'ի վկայութիւն զբանս խոսրավու , որ 'ի մեկն ” , ժամագրոց :

“ Օ լինչ է կաթողիկէն տիեղերական , զի ամ եկեղիցիք ուղղափառաց որ ընդ տիեղելու են ' մի են , մի • Բարիստոս

յամ եկեղեցիս է, որ լու տռաքելոյն հաւատոյ լինի, զոր և առաքելական կոչեմք, որ զի թէ և բաժանի ըստ տեղեցաց, այլ ոչ եթէ ժողովրդոց, զի 'ի ծագաց մինչեւ'ի ծագս երկրի ուր և հասանիցէ ճշմարիտ հաւատացեալն յեկեղեցիս ուղղափառոց՝ իւր եկեղեցի է, և ոչ որոշէ զնա, ոչ աշխարհն, և ոչ տեղւոյն օտարութի, այլ ընդունի որպէս մայր ՚ի գերկո իւր սաստիկ սիրով:

Արդ յայտ է թէ եկեղեցին հայաստանեայց միշտ Հաստատուն ունելով զայտ ողջամիտ հաւատո, ՚ի սոյն կայ մնայ մինչեւ ցայսօր :

Եւ յայտ է ևս, թէ եկեղեցին հայոց ոչ երբեմն բաժանեալէ զինքն ազգային ժողովով՝ դիտմամբ և կամօք ՚ի զըլլոյ եկեղեցւոյն, կամ յընդհանուր եկեղեցւոյ ուղղափառոց, այլ միշտ ունի և ճանաչէ զինքն համահաղորդ մասն և անդամ նոյն ընդհանուր եկեղեցւոյ, ուրեմն և ըստ այսմ ոչ մարթի իւրք հերձուածող ասել :

Ուստ երրորդ պայմանին՝ առ ՚ի լինիլ հերձուածող պահանջի, զի բաժանումն լցէ ընդհանրական, ֆառ առ ՚ի կոչել ումնք հերձուածող, պարտի բաժանեալ լինել, ոչ լոկ յում քէ ուղղափառ անձնէ կամ ՚ի բազմաց, այլ և ՚ի միութէ բովանդակ եկեղեցւոյն Այնպէս, և առ ՚ի ասել ազգի միում հերձուածող, պարտէ բաժանեալ լինել, ոչ լոկ ՚ի մասնաւոր եկեղեցւոյ այլոյ իւրիք ազգի, այլ յընդհանուր եկեղեցւոյ, կամ ՚ի գլխոյ ընդհանուր եկեղեցւոյ, ըստ որում է հանրական գլուխ” :

Եւ ապա բերէ վկայութիւն ՚ի Վիոնասպիսէ, որ ասէ թէ առ ՚ի բաց կուլոյ ՚ի հաղորդութենէ ընդհանուր եկեղեցւոյ, մարթ իցէ ՚ի բաց կալ յամնայն մասնաւոր եկեղեցեաց, որ կացուցանեն զընդհանուր եկեղեցին, զկեր հետեւցուցանէ:

“**Արդ** որպէս վերագոյնդ ասացաք, հայք երբեմն բաժանեցան ՚ի հռովմոց և եթ, որպէս և երբեմն պատճառս նոցա ՚ի Վարաց, վտարանդելոց ՚ի հայոց և անցելոց ՚ի յոյնո, (Յան զի ընտ երկուսին և անդույ մատան, և անտեսնու ինը անէ անխորիք կառէ ին շաբ ուրած, աչք է ՚ի պարհութեանց,) բայց յայլոց եկեղեցեաց՝ զոր օրինակ ՚ի Սոլանիացոց ՚ի Գաղղիացոց ՚ի Գաերմանացոց և այլն,

յորոց բազումք լնակեցան 'ի մէջ հայոց 'ի Ժամանակս առման
Երուսաղէմի , և մանաւանդ յեկեղեցւոյն հռովմայ , և յառա-
քելական գահէն ոչ երբէք բաժանեցան , ըստ որում և ցու-
ցաք , և ըստ որում և վկայէ նտ և առաքելական աթոռն հը-
ռառվմայ 'ի կոնդակին «Արիգորի պատին երեքտասաներուդին ոչ
զտի ' և ոչ ընտւ կոչին և ոչ իւիք ասին հերձուածող :

Ոստ չորրորդ սկայմանի առ 'ի լինել հերձուածող
կամ բաժանեալ 'ի գլխոյն եկեղեցւոյ , ոչ է բաւական սոսկ
չառնուլն յանձն զհրաման առաքելական գահին վասն փոխելոյ
զայս ինչ գործ , այլ պարտի լինել տարածայնութիւն հեղի-
նակութեան հրամանագրին , կամ ժխտումն , ոչ ըստ բանի իշ-
խանութեան տեսականապէս , այլ ըստ որումէ 'ի նմանէ նիւ-
թապէս կամ ըստ ներգործութեան :

Վասն այսորիկ եթէ ոք յոնչ առնուլ յանձն զհրաման
առաքելական գահին , տակաւին չմերժիցէ զղլխուորութիւն
նորա , այլ վասն իրիք դժուարութեան չկամելով կամ չկարե-
լով , ոչ կատարիցէ զհրաման նորա , այսու ոչ լինի և ոչ ասի
երբէք հերձուածող :

Եւ զայս հրաման ենթագրեմք , թէ իցէ վասն իրաց
ինչ սովորութեան կամ ծխոի ' և որ 'ի սոցին սակի , զոր օրինակ
այսպէս տօնել ' այսպէս պահս սկահել , 'ի պաշտամունս նոր ինչ
ինչ մաւծանել , կամ 'ի կիր տանուլ անսովոր ինչ եայլն » :

Յետ այսորիկ 'ի մէջ բերէ զվկայութիւնս աստաւ ածաբանից , որք
ասեն թէ աշխարհականք ոչ լինին հերձուածող վասն չընդունելոյ զհրաման
գահին , որ ստիպէ զնոսու կամ հաշտիլ , կամ յետս կալ 'ի պատերազմէ , եթէ ոչ
մերժեցն զգահագլխութիւն նորա , և ապա յարէ :

«Տեսանես թէ յորմանէ բան հերձուածողութեան ,
զոր ոչ կամին բացատրել փաթերայք , և զանաղանել առ հայս ,
այլ ընդհանուր եղերօք շրջին , և վրդովեն զպարզամիտս : Ոչ
եթէ չկատարելով զհրամանն , կամ չկամելով յանձն առնուլ
զայն հրաման հերձուածող լինի ոք , այլ չկամելով հնապանդ և
հպատակ երեւլ նոյն , և կամելով տպատամբիլ և բաժանիլ

՚ զ դ լիոյն և յանդամոց : Ասմ այսպէս ասացից , ոչ եթէ չհնա-
զանդելն է , հերձուածողութիւն , այլ մերժելն զիւաւունս Հը-
նազանդութեան ևայլն ” :

Էրդ յայտ է ամենեցուն , և նմին իսկ հռովմէական
եկեղեցւոյ , զի հայք ընդդէմ եկեղեցւոյ տյսպիսի մերժողական
և ապստամբ ճանաչումն ոչ ունին , որպէս ասացաք ’ի գլ” . Ժ .

Եւ այսպիսի անկարգութիւնչ չէ երբէք գործեալ
նոցա , զի մինչև ցայսօր ոչ քնաւ վտարանդութիւնը ընդդէմ զի-
նեալ են պաշտօնի քահանայապետին հռովմայ կամ եկեղեցւոյ :

’Ի գնիլ առթին դժուարալուր հրամանաց կամ յոր-
դորանաց՝ աղերս մատուցեալ են խոնարհութիւն , թէ մի ստի-
պէք զմեզ առ այդպիսի երողութիւնս , զի ոչ կարեմք փոխել
զծէսս և զհին աւանդութիւն եկեղեցւոյ մերոյ , որ և ոչ զարե-
ելեայ և եթ ասեմ , այլ և զարեմտեայ , որպէս գիտակ են ընդ
որս խօսիմք :

Ոստ հինգ երորդ պայմանին (ո՞ւ է իբր բականական իւն
առաջին չափի պահանաց) առ ՚ի լինիլ հերձուածող պահանջին զի
բաժանումն ուղղակի իցէ ընդդէմ ներքին միութեան եկեղե-
ցւոյ , այնպէս զի այնու բաժանմամբ ոչ ևս մարթառցի պահել
մի մարմին ընդ միով գլխով , որով և նոյն բաժանեալն ոչ ևս
իցէ ասելի , ոչ անդամ գլխոյ , և ոչ անդամ անդամոց մարմնոյ
եկեղեցւոյ :

Էրդ յայտ է թէ հայք ոչ միայն չեն արարեալ այս-
պիսի բաժանումն երբէք , այլ և ընաւին չառնուն յանձն և
չընդունին , թէ լեալ իցէ յինքեան այսպիսի ինչ , որ է բաւա-
կան նշան միութեան նոցա և այլն ” :

” Յերբէ միութիւն ասացի , զի թէ լոկ ընդդէմ ար-
տաքին միութեան տարածայնութիւնչ ինչ լինիցի , այդու ոչ լինի
հերձուածողութիւն , որովհետեւ իւրաքանչիւր եկեղեցիք ու-
նին ՚ի մէջ իւրեանց ինչ ինչ արտաքին տարերութիւնս , եթէ
փոքր , և եթէ մեծ , և հարկ է թէ ունիցին ըստ պաշտօնի , ըստ
դորժոյ , ըստ ծիսի , և ըստ սովորութեան ևայլն ” :

**Որով ըստ առաքելոյն տարրերեալ առին , բոյց մի-
անգամայն ըստ բանի նորին առաքելոյ , պարտին խառնեալ շի-
նել , յայտ է թէ ըստ բանի վարդապետութեան հաւատոյ և
բարի վարուց , և ըստ խորհրդոց եկեղեցւոյ , որով բերեն ի մի
յոյս կոչման իւրեանց . կամ 'ի մի վախճան " .**

Յետ սակաւ ինչ այսպիսի բանից աւարտէ այսպէս :

**Քասացելոցս մինչեւ ցայս վայր յայտնի տեսանեն ըն-
թերցողք , զի եկեղեցին հայաստանեայց ոչ է . և ոչ ասի հեր-
ձուածող , և յիրաւի առանց անիրաւելոյ յեկեղեցին «Քրիս-
տոսի » չէ մարթ հերձուածող կոչել զհայս , և զանդամս սկյ
եկեղեցւոյ : Ապա թէ ոչ՝ չէ եթէ հայոց զրպարտէ վեասողն
հայոց , այլ անձամբ զանձն 'ի բաց կորդէ 'ի համամասնէ իւր-
մէ և զինքն օտարացուցանէ յանդամոցն «Քրիստոսի» : Թա՞ղ զի
ըստ կանխագրեալ մարդարէութե զաֆադիր վայն ժառանդէ »
զոյն , թէ վայ որ ասիցէ զքաղցըն դառն ևայլն » , 880 :**

Զինի այսր խնդրոյ զինի ընդդէմ փաթերայից մանաւանդ Կլէմէս Գր-
շանոսի , սրք ստգտանեն ղաղզս մեր սուտ զրպարտութեամբ :

Յովհան օձնեցի իմաստասէր , Պարսամ , Որոտնեցի , և Տաթևացի լար-
զապետոն մեր ցուցանէ ուղղափառ լինել :

Ի չափ Արքայի Վարդապետէ Չամչեան :
1776



“Այս գործ լնդարձակ անուանեալ” Առ ահան չաւա-
տոյ ուղղափառութե հայաստանեաց եկեղեցւոյ՝ յօրինեալ է
’ի Հայր Արքայէլ Վարդապետէ Չամչեան :

Եւ յամս բազումս առ իւր պահէլ , առանց ցուցա-
նելոյ ուժեք , բայ ՚ի կրօնակից վարդապետաց իւրոց և այլոց
ոմանց սակաւուց :

Կասկած առեալ Պողէջեան կարգաւորաց · հետա-
մաւալինին , և ՚ի չլինել նորա ՚ի տան ուր արկշն իւր եղեալ
էր , և ՚ի գնալ ամենեցուն որք ՚ի տանն են ՚ի բաղանիս , Փասփա-
սեան Արանանցի կրօնաւոր մի Պողոս անուն՝ կուսակից իւր
ունելով զմանկալարժ տանն , բանայ զարկզն՝ և զայս գիրք դո-
ղացեալ · գաղափարեն յիւրեանս ՚ի սակաւ աւուրս : Եւ մի ոմն
՚ի նոյանէ ՚ի հաւաքեալ զորս սաստիկ դիմադրութի են առ եկե-
ղեցին հռովմայեցւոց , և ջառագով եկեղեցւոյն հայաստանեաւց ,
և համառօտութեամբ ՚ի մի ժողովէ , յաւելեալ յիւրմէ և կցկ-
տուր սակաւ ինչ ընդդիմարանութիւնս առ այն :

Օ բուն ձեռագիր հեղանակին նոյն գոլ Պողոս
Վարդապետն առեալ աճապարեաց ՚ի հռովմ , բողոք բար-
ձեալ զյօրինովէ դրոյս իր զհերիտիկոսէ : Որ և բաղմապա-
տիկ քննութեանց վճիռ ետ այս օրինակ ”:

Ծարդմանութիւն պատճենի վճռոյ (Տէակէթին) ատենի սրբաքննութե
՚ի վերայ օրինակի ձեռագիր Վահանին Վ . Հ . Արքայէլի Վարդապետի Չամչեան ,
յընդհանուր գումարման հռովմական և ընդհանրական սրբաքննութեանն եղելո
՚ի մենաստանի Սրբոյ Մարեմայ ՚ի վերայ Միներվայի ՚ի չորեքշաբաթի աւուր ՚ի 5.
մայիսի 1819 , առաջի վսեմախոռ և Գերապատիւ Տեարց Սրբոյ Հռովմական Եկե-
ղեցւոյ կարտինալաց ընդհանուր սրբաքննչաց ՚ի Սրբոյ Առաքելական Պահէն մաս-
նաւորապէս առ այս կարգելս :

Յառաջարկել անոն ձեռագրին զորմէ են զբոյցք (Ձահոնին հուսափու)
վերոյ դրեալ վսեմամիառքն յայտ արարին (ըստ) ձեռագիր (ու ոմինիւտեան Հ . Չամ-
չեանին իր շինուեան դպիուն ուղղէս հեղինակին , և չէ Ձահութան) լինել որպիսի այժմէ
է , վտանգաւոր , և անմասն գոլ ՚ի կասկածանց մոլորութեանց նպաստաւորաց
հերիտիկոսութեան և հերձուածոյ , և պարունակել յինքեան , նախագատութիւնս
սուսս յանդղեականս դայթակղականս և թշնամողիրս լատին եկեղեցւոյ և ծայ-

բազոյն քահանայապետաց, վասնարայ վճռեցին թագուցանել զայն, ոյլ և ղղայթակ-
ղութիւն՝ որ ասի ծագեալի հքատարակմանէ նորա դարմանել լուազոյն օրինակաւ,
որպէս զի արդ հնարէ ։ Բայց որովհետեւ հարազատութիւն և նոյնութիւն ձեւ
ուագրին ընդ անուամբ չ։ Չամշին չէ յայտ, նոյն վօնմաղատիւ չարքն ոչ ինչ անոն
մակարերել արժան համարեցան ընդդեմ ուղղափառութեան չ։ Չամշին, որ բայց
յայսմանէ նա և վաւերական թղթովք իւրովք զօրս կանխեաց գրեաց առ ուրբ ժու-
ղովն տարածման հաւատոյ զանձին իւրով զօրդղափառ միտս արդէն լիուլի յայտ-
նեաց և հառոտատեաց ։

Եւ ըստ մատաց ՚ի չորեքշարաթի աւուր յերեսունն յունիսի 1819։
Սրբաղան տէր մեր Պիսս Երորդ աստուածային տեսչութեամբ քահանայապետ,
որում գերապարտիւ տէր դատողակից Արքաքննութեան ն սովորական ունկնդրութե-
եղելոյ առ ինքն ետ ծանօթն վերոյգրեալ վճռոյն (Տէտուէլին) սրբութիւն իւր հա-
չեալ հաւանեցաւ ընդ նոյն ։

(Տէռի Կնոքու)

“Պատմիւնս Անարշեանի սրբութեամբ առաջական և ընդհանուն
Արքաքննութեան ն հոգաց ”։

Առդ սովին վճռովքան ընդարձակ ձեռադիրն արկաւ
՚ի հոռովմ յարդելան, և պատուիրեալ մի բնաւ հրատավակել ։
Խոկ զայս համառօտութիւն Անեծանուն Պեղիան Քարութի-
ւոցին հնարիւք իւիք զնեաց մեծադնոյ, զի 1817, յամսեանն
